Բսելի է երկրորդ։ Ոչ թէ զղջման ոչ կայանայ կերպապես յերիս յայտոսիկ, այլ կերպակէս միայն ի ցաւն, նախընթացապար յատելութենէ, և ըստ հետևորդի յառաջդրութեան։

Այս. առաջին մասն։ Կրկնաւոր ներգործութենի մասնաւոր առաքինութենե պարտի լինել մի, և ոչ հաւաքեալ ի բազում ներգործութեանց տեսակաւ զանազանելոց. իսկարդ՝ զղջումն է գլխաւոր ներգործութենի մասնաւոր առաքինութեան ապաշխարութենէ, և երեքին ներգործութիւնքս՝ ատելութենի, ցաւ, և առաջադրութի, տեսակաւ զանազանին. ապա։ Այս. մեծ։ Կրկնաւոր ներգործութենին մասնաւոր առաքինութեան է նման նմա, քանզի ի նմանէ անբնդմիջապես եղուզանի, և այն նոյնիմն տեսակացուցանի. իսկարդ՝ բազում ներգործութիք տեսակաւ զանազանելք, ոչ են կարող լինել նման միում մասնաւոր առաքինութեան, որովհետև է պարզ որպարզի միոյ տեսակի. ապա։

Այս. երկրորդ մասն։ Քանզի գոյզ զղջմանն գլխաւոր ներգործութենի ապաշխարութենե, զորօրինակ արդէն ասացաք, յայնմ ներգործութենէ կայանայ կերպապես, որ Հայի ի մեղս ըստ որում յարհամարհութենի Այ վճարմամբ իւիք քաւելի, որպես յայտ է յասացելոցս ի վերս առաքինութենե ապաշխարութենե, իսկ արդ՝ այսպիսի ներգործուի է ցաւն, և ոչ ատելութիւն. ապա։ Այս. փորձ։ Ներգործութիւնն, որ Հայի ի մեղս ըստ որում յարհամարհութիւնն Այ վճարմամբ իւիք քաւելի, պարտի յապաղել ինչ ի մեղաւորէն, զոր ըստ իրաց ինչ մնասուցանէ Այ. իսկարդ՝ ատելութիւն մեղաց ոչինչ յապաւէ ի մեղաւորէն. ցաւն յապաւէ ինչ, վասնզի նոքաւ կրէ զնար ինչ պատժոյ, այս է՝ զորմտութենի. ապա։

Հաստատի։ Եթէ զղջումն կերպապէս կայանայր յատելութենէ մեղաց, գտանէր յերանեալս, որք ծայրագոյն ատելութի ատեն զմեղս. Հետևե է սուտ. ապա։

Երրորդ և չորրորդ մասն յայտնի են. քանզի ատելութիւն իրաց ինչ պատճառէ զցաւ յինեմակայ ընդունակ ցաւոց. և ցաւոցն զՀետ գայ իրրև զյատկութի առաջադրութենէն ընդյնս միւսանգամ ոչ ևս առնելոյ։

Բսելի է երրորդ։ Օգնումն պարտի լինել գերբնական։

Այս է նախ՝ ի Ցրիտ. ժողովոյն՝ գում. 6. կան. 3։ Երկրորդ՝ Հռնոկենտիոսէ մեսսաներորդէ, որ դատապարտեաց զայս նախադասութենի. Հաճախումն է, ըէ բաւական է բնական զգջումն, բայց դիոյն ինչ հոգեբոյ։ Երրորդ՝ պատճառաւ. վասնզի չէք ինչ յարաբերութենի, և չէք ինչ կապակցութենի բնական կարգի ընդ գերբնականին, յոր վերաբերի արդարութենի մարդկան։

Բստի ունիմ մակաբերել, թէ որ ցաւի ի վերս մեղաց վասն լինելոյն հակառակ բանի, կի մարդկային կենակցութենե, կամ վասնզի զՀետ գայ նմա վնաս Համբաւոյն, կի ժամանակաւոր բարեաց, և վերայլ այսպիսի բնական պատճառաց, անբաւականանայ և անպատուղ զղջայ. բայց ոչ՝ եթէ ցաւեսցի ի վերս մեղաց՝ ըստ որում է հակառակ ածային օրինաց, (քանզի ըս այսմ խնդրելոյ լինի գարշութենէ նէր, զորմէ ժողովն Ցրիտ. գում. 14. գլ. 4.) և կամ ըս որում է պատճառ պատժոց քաւարանին, դժոխոց, կորստեան Հոգւոյ, փառաց, և որ ի կարգին. քանզի սոքա վերաբերին առ կարգն գերբնական, և միայն գերբնական Հաւատով կալեն ճանաչիլ։ Առ այն սակս թէպէտ այսպիսի զղջումն ոչ է բաւական առ արդարացուցանել և ևս ընդ խորհրդով՝ բայց եթէ ընդ մէջ մտցէ բարեկամական ինչ սէր Այ որպէս ասացաք ստորև, սակայն տրամադրէ առ այն։

Բսելի է չորրորդ։ Օգնմանն պարտ է լինել ճշմարիտ, և անկեղծ. միևնոյն եթէ ոք զղջացի կեղծեօք, և կի Հաւատացէ զանձն ճշմարտիւ զղջացեալ՝ և ոչ էցէ, և ըստ այնմ մատիցէ առ խորհուրդն, ոչ զգործ խորհրդոյն, և ոչ զնոյն իսկ խորհուրդն ընդունի. վասնզի ճշմարիտ զղջումն է էական մասն խորհրդոյն. և զանկեղծութենի զղջման՝ ոչ ի բանից սաստ խոստովին միայն Համարել պարտ է, այլ առաւել ի գործոցն, ի փոխոխութենէ վարուցն, ի փախստենէ յատելիցն, ի գործատուէ առաքինութենց, ըս այնմ՝ Մատթ. է. 16. * ի

պարզ

պրպտ Նոցա ծանիցէ՛ պնոտ ‖։ Ըմեմ մնաւորը լիցին խոտանեանց տարք, և առաւել Ի վերոյ Հնացեալ և սովորական մեղաւորաց, և Ի վե Նոցա՝ որք վարին Ի մերձաւոր առիթս։

ԳԼԲԿ. Ր։

Ի չերոյ Հանախումբ ՂԶՄան։

Ո՞քանակի՞ զղջման մարթ է զանազանել երբակի. վարկողական, սաստկական, և տարաձական։ Ապրկողականն Հոյի յառարկայն, զոր առաւել Համարի քան զայլ զինչ և իցէ, թէպէտ և ոչ լիցի այն Ի բռնանգակ ճգանց Հոգւոյ։ Սաստկականն Հոյի Ի յինեմակայն, յոբում առաւել արմատանայ, և զնդ սատիճանս յաւելու։ Տարաձականն Հոյի Ի բաղմութիւն մեղաց։

Ասելի է նախ։ (1) Ցաուն մեղաց, որ է Հանան զղջման, պարտի լինել քան զնմ ցաւս մեծագոյն վարկողապէս. այս է՝ մեղաւորն պարտի այնպէս առել զինքզ, մինչև վն ոչինչ իրաց աշխարհի կամել գործել զոյն։

Ցաւց. Նախ՝ Ի բանից անտի Յովէլ. ք. 12. * Դարձարուք առ ես յամ սրտե ձեր ‖։ զոր պարտ է իմանալ Ի վերոյ դարձման՝ և զղջման, վարկողապէս Ի վեր քան զնմ։

Երկրդ՝ (2) այնչափ առաւել անՀաճոյ լինի ինչ, որչափ առաւել Հաճոյ է ներՀականն. իսկարդ՝ ներՀականն մեղաց Հաճոյ է Ի վեր քան զնմ. ապա։ Ցաւց. փոքր։ ՆերՀականն մեղաց է վերջին վախճանն. քանզի յետագաձուցանէ մեզն Ի վերջին վախճանէ, և վասն այն ներՀակի նմա. իսկարդ՝ վերջին վախճանն Հաճոյ է Ի վեր քան զնմ, քանզի վն նորա լինին ամ. ապա։

Երրորդ՝ ցաւն է Ի վերոյ չարի. ապա ըստ ուղիղ բանի Ի վե մեծագոյն չարի պարտի լինել մեծագոյն ցաւ, զեթ վարկողապէս. իսկարդ՝ մեղքն է քան զնմ չարիս ամենամեծ չար. ապա Ի վերոյ մեղաց պարտ է լինել ամենամեծ ցաւ վարկողապէս։

Ասելի է երկրորդ։ Ցաւոց և առելութեանց կամաց Ի վերոյ մեղաց՝ չէ պարտ Հարիաւ լինել մեծագոյն քան զնմ ցաւս սատկանի։

Ցաւց։ (3) Սատկութեանն ներգործութեան կամաց յատաղ գոյ յուժգնութեանն առարկային՝ որ չարժէ զնա. քանզի անտի լինի՝ մեծագոյն ճգամբ և եռանդնամբ բերելն առ այն. իսկարդ՝ մեղքն ոչ է առարկայ, որ ուժգնագոյնս չարժէ զկամս առ ցաւս՝ քան զի և իցէ այլ չարիս. ապա։ Ցաւց. փոքր։ Առարկայն զգալի ուժգնագոյնս չարժէ զկամս քան զՀոգևորն՝ զորօրինակ է մեղքն՝ ըստ որում է արՀամարՀութեանն Ի. ապա։ Ցաւց. առաջարկ։ Ըրչափ առարկայն է մերձաւոր կամաց, այնչափ ուժգնագոյնս չարժէ զնա. իսկարդ՝ առարկայն զգալի յայտ վիճակի է մերձաւորագոյն նմա քան զՀոգևորն. ապա։ Ցաւց. փոքր։ Օգալ ինքն են անբնդմիջական և մերձաւոր՝ զգայութեանց. իսկարդ՝ կամքն յայտ վիճակի գործ Համաձայն նմ, և կախի զնոցանէ, ըստ որում զՀնտ երթայ ճանաչման մտաց, որ յայտ վիճակի առնու զճանաչումն Ի զգայուն. ապա։

Աստուտի նախ՝ յանպատաշամութիւ։ Երէ քան զնմ ցաւս պահանջէր սատկապէս մեծագոյն, զՀնտ գայր, թէ յերկուց, որք Հաստատապէս սատկաբար ցաւէին Ի վերոյ մեղաց, մինն արդարանայր, և միւսն ոչ. քանզի զկցուք զդիպաճառ, եթէ միւն սատկապէս ցաւեսցէ Ի վերոյ մեղաց, այլ սատկագոյն ևս Ի վե մահու Հօրն. իսկ միւսն Հաստատապէս սատկաբար ցաւեսցի Ի վե մեղաց, այլ նուազ սատկաբար Ի վե մահու Հօրն. սա արդարանայ, և նա ոչ. իսկարդ՝ անտեսի է Հետև. ապա և առաջարկ։ Աստուտի ևկրդ։ Ընդոյն սկրզ չէ պարտ լինել մեծագոյն քան զնմ սատկապէս, որպէս ուսուցաք Ի ճառն որ Ի վե ուծային սկրզ. ապա և ոչ ցուցոյն Ի վե արՀամարՀութեանն Ի.։

Ա՛ն այսրիկ չէ պարտ նդինետացն մեղադիր լինել՝ որոց Ի վե կորստեան ծնողաց, բարեկամաց, ընչից, ևն. սատկագոյնս ցաւին, և և ցաւոյք կամաց, քան Ի վերոյ մեղաց. քանզի այս աշխատ գայ բնութեան իրաց։ Սակայն պատշաճ է, զի զեթ ընտանեացն սատկագոյնս ցաւել Ի վե մեղաց, քան Ի վե այլոց իրաց աշխարհի. նաղն՝ անկարդ լինէր, և ապօրինաւոր, եթէ ընտրէին սատկագոյնս ցաւել Ի վե այլոց չարաց՝ քան Ի վե մեղաց. վասնզի այն լինէր գտանել՝ եթէ է մեծագոյն ինչ չար քան զմեղս, և յայն սակս Ի վե նոր առաւել ցաւել վարկողապէս։ Այլ ոչ՝ յորժամ մեծագոյն սատկութեանն ցաւոցն զՀնտ գայ պատ-

(1) Յմ. Ն. 3. պ. 1. Բոլ։ (2) Անդ։ (3) Անդ։

մանի բնութեան, որպէս ասացաք ՚ի ցուցման եղբարացութեան։

Ասելոց է ՚ի բազում վկայութեանց որ գրոց, ՚ի Օրէն. ՚ի Յոսկ. ՚ի Աիքեայ ՚ի Լսայ. ՚ի Յատե. ժա. եւն. դնել, թէ զարձմանն պարտ է լինել յամ արտ, պահովք, և լալով և կածով, և ամ նեղութիւք անձին. ապա ծայրագոյն և ամենամեծ սաստկութիւն ցաւոց։

Պէսեմ ուր, զհետև։ Օ՛ն զորօրինակ պատուիրանն սիրելոյ յամ կամ ՚ի բուանդակ արտ՝ ոչ խնացեալ լինի ՚ի մի բուանդակութեն սաստկութեն, այլ ՚ի մի բուանդակութեն վարկողութեն. գինեւ պէրոչին ընդունել ընչ, չմոռել ընչ, որ էջե հակառակ ՅՅոյին պէրոյ, որպես ասէ նրն Յովմնա՝ ՚ի. ՚ի. խ. 24. պ. 8. սակս և պատուիրանն զղջման. մինչև ապաշխարողին այնպես ատել զմեղս, զի մի ոչինչ իրաց աշխարհի կամեսցի գործել զայն։

Ասիպ։ Ո՛չ է ծայրագոյն բարի, և մեղքն է ծայրագոյն չար. ապա Ո՛չ է ծայրագոյնս ևս և սաստկապես սիրելի, և մեղքն ծայրագոյնս սաստկապես ատելի։

Պէսեմ, թէ բոլորն է ըստ ինքեան ճշմարիտ, այլ ոչ ՚ի հարկաւորութեէ պատուիրանի զմոռաս ածեալ զայսման բնութեն մարդկան, զորօրինակ ուսուցանեն նրն Յովմնա ՚ի նախայիշատակեալ տեղոջ։ ՚Ի մի այլ եղբակացութեն տես վիճ. 4. ՚ի մի ածային սիրոյ. պ. 1։

Այլ եդեալ, թէ յիրաւի ոչ պահանջի, թէ ցան ՚ի վերայ մեղաց, որ ՚ի կամս, իցէ մեծագոյն քան զնմ սաստկապես. տակաւին Պետ դժուարութի, թէ արդեօք ոչ իցէ պարտ դէմ լինել սաստիկ ըստ մանուսոր ինչ աստիճանի, առ ՚ի լինել բաւական տրամադրութի առ արդարացուցումն, կամ առ զհետ գալոյ նմա անընդմիջապես արդարացման։ Ոչ է խնդիրն ՚ի մի արդարացուցման՝ եթէ ընդ խորհրդոյ, և եթէ արտաքոյ խորհրդոյն։ Յուծանի խնդրոյս կախեալ կայ զորոց ունիք ասել ստորև ՚ի վերայ զղջման բնկման։ Ու այժմ հասատուք։

Ասելի է երրորդ։ Ու արդարացուցումն ըստ խորհրդոյ ոչինչ աստիճան սաստկութեն պահանջի յանկատար զղջման, բայց միայն ունիցի այլեւս զայահանչելի պայմանս։ Նախ՝ զի այլազգ՝ անկանէր խճճմտութի ՚ի խիղճս մտաց ապաշխարողաց, որք ոչ զսաստկութինն, և ոչ զաստիճանս սաստկութեան կարող են որոշել։ Երկրորդ՝ ՚ի սովորութէ և ՚ի գործածութէ նկնղեցւոց. քանզի ոչ են սովոր խոստովանահարք պահանջել յապաշխարողաց զսաստկութի ինչ ցաւոց, այլ միայն՝ զի ՚ի սրտէ ատեցցեն զարհամարհութիւնն Ա՛ստ ՚ի վեր քան զնմ։ Ու երրորդ՝ զի ոչ լինէր այնուհետև դիւրագոյն արդարացուցումն ընդ խորհրդոյ, քան առանց խորհրդոյ. իրրզի սաստկացեալ անկատար զղջումն բաւական է առ արդարացուցումն առանց խորհրդոյ, որպէս արդ ասացաք։

Ասելի է չորրորդ։ Ու արդարացուցումն արտաքոյ խորհրդոյ՝ ցան յատաղ նկեալ յածային սիրոյ, եթէ յոռնականէ, և եթէ ՚ի ներգործականէ, ոչ պահանջէ զաստիճան ինչ սաստկութեէ. մեղն իւրաքանչիւր ներգործական ածային սիրոյ, թէպետ և տկար՝ և թոյլ, ենթադրէ զմեղաւորն լինել բարեկամ Ա՛ստ, և հաշտ ընդ նմա, զորօրինակ կրեսցուք ստորև։

Ասելի է հինգերորդ։ Օ՛ղջումն անկատար, կամ ցան ՚ի մի մեղաց՝ եւ զնեալ՝ կամ ՚ի բարի կամեցողութեն և կի՛ բարի կամեցողութեն սիրոյն Ա՛ստ ոչ է բաւական առ արդարացուցումն առանց խորհրդոյ, գէթ արտաքոյ դիպուածոյ հարկաւորութեն, բայց եթէ իցէ սաստկացեալ ըստ մանուսոր ինչ աստիճանի. մեղն հնար է լինել բարի կամեցողութեն սիրոյն Ա՛ստ տկար և թոյլ, որ չիցէ ածային սէր, և ոչ իցէ բաւական առ արդարացուցումն արտաքոյ խորհրդոյն, ոչ ցուցցուք ստորև, ապա և ցան յայսմ սիրոյ եզրափակել։ Ոչ արդարև ոմ ոք ասէ, կամ հաստատ, թէ մեղաւորն նովին իսկ՝ որով բարեզգած լինի առ Ա՛ստ, կամ կամ նմա զարի, նոյնհետայն արդարանայ, եթէ այս այսպես իցէ, հազիւ հազ մնացեր ոք ՚ի խորհուրդն ոչ արդարացեալ. որովհետև չիք ոք, և կամ հազիւ հազ գտանի ոք, յորմէ եթէ խնդրեսցի, թէ արդեօք սիրէ՞ զՎ՛ծ, ոչ ատացէ պէսի, և անդիմադրելի իսկ, թէ չէ՛։

Նմէ խնդրիցես։ Ասատ ճանապէ ըստ բաւականին սաստկանալն անկատար զղջման, մինչև նոյնհետայն զհետ գալ նմա արդարացուցման։

Պէսեմ։ Երեի ըստ բաւականին սաստկացել, եթէ յատաղ գայցէ ՚ի սոկ բարի կամեցողութեն

զլեզն սիրոյն Այ՝ որ կանխաւ սիրէ՝ առանց նպատակ առելեաց երկիւղի, գէթ ի հասարակաց և ի յաճախ պատահել զիպուածոց. կի՛ որպէս պիտ ասեն, եթէ յառաջ գայցէ ի գործնական և ի գործունեայ սիրոյ, և ոչ յաստիճան միայն և յանգործունեայ սիրոյ. վասն որոյ և պատշաճիլ ասացին բարուեաց, զի զսպաչխարհս, որք ըստ այսմ մաքրութեամբ և սաստկութեամբ սիրեն զնա, փոխադարձ սիրեսցէ, որովհետև զոչինչ կամ հաւիւ հաղ առաւել ևս ինչ կարող են մտաւուցանել նմա. Նաև զայսմ սիրոյ մարթի է խմանալ զայն բան Ա՛Ա. Հ՚ՅՈՀ. ԺԴ. 23. * Ա՛ՆԵ ՈՐ ՍԷԸ ՎԱ. ... Ե Հայր Ի՛ Սիրեսցէ Զնա. Ե Ա՚Ա Նա Եկեսցուք՝ Ե Օթևանս Առ Նմա Արասցուք ։

Ի այլ ևեթ պէտ և ապաշխարոյն հաւանական Նաթար կարօղ է գուշակել, թէ շարժի ընդդէմ մեղաց ի սոսկ կանխաւ սիրելոյ սիրոյն Այ, կամ յարաբերական և ի գործունեայ սիրոյ նորա. այլ սակայն չէ հնար ստուգիւ յայտնի լինել նմա այս. քանզի անբնութիւն է սիրտ մարդոյ նմին իսկ մարդոյ. բազում անգամ համոզէ զանձն, և չէ կարօղ ստուգիւ գիտել, եթէ սիրոյ իցէ արժանի՝ թէ ա տելութեան։ (1) Ա՚Ոյ Նոյն Յովսէս Ասէ. Ի՚ Ա՚ Չարչարանս Կոխոց Ե Բառնան պարբերապուրէն ա՚ Շնորհս, որպէս Ե ՚Ա՚ Ցա՚ Բառնան Ե ա՚ Լեզուէն Ձեզ. այլ զարդ Ե լինել ըստ եղանակի ինչ, որում չէ հնար արդեօք լինել ծանօթ մարդոյն։

Ասացաք յեզրակացութեան, Գնէն պարտ էր գնդուածոյ հարկաւորութեան. վասն ոմանք անտարակոյս Հաստատեն, թէ՛ ի գիպուածի հարկաւորութեան, յորժամ ընդհարձական ընդունելութի խորհրդոյ ի բաց տանի անկարելութին՝ և ոչ կամքն, բաւական է անկատար զղջումն յինչ և իցէ սիրոյն Այ ելուզեալ ։ Հաստատին ևս մեծապես յայնմ՝ զի Ա՚ՆՈՒԿՆԹԻՈՍ երբորդ՝ ի սմին Ո՚գոստինոսէ և ի սմին Ա՚մբրոսիոսէ ասէ այսպես. գլ. Ա՚ՈՒԹԵԼԻՈՒՆ. ի մի քահան. ոչ միայն. Ա՚ահանայն, զոր ասացոյց գերեալն օրհնաւս Հանան գերաբեալ նշանակելոյ, վասնզի հաւատով ոչ յօրն ելիեզեցոյ Ե խոստանալոյն անուանն Ա՚Ա՚Ն ելոյ ձայ, ի վիշնական ձեռայն ըմբռնել, Ե ընդուզել ըզ ինքնութի երկնային հայրենեաց, անդրելոյ հաւատոք։ Ա՚ՆԵԵՑՒՐ ՉՐ-ՆԵԵՐԵՐԻ ԳԵՐ Ո՚ՓՈՒ

Ի՚ Ա՚Ն

հանգերձեալս՝ ի մարտիրոսութիւնի, միւն՝ սրով, և երկրորդն՝ հրով. առաջինն՝ ի սուկ սիրոյն Ա՚Ի, ոչինչ խորհելեալ զպատժոց դժոխոց, ճառանի. և այս կանխաւ տիրեալ և գործուածեալ սէր՝ է բուսական տարանդրութիւն առ արգասաւորացուցանել. և երկրորդին՝ թէպէտ և սաստկացիլ սիրով վառեալ, այլ առ պատասպարելոյ զանձն ընդդէմ ահաւոր հրայրացուածն՝ կոչէ՝ ի նպաստ զմտածուն պատժոցն դժոխոց. և այս ևս է բուսական առ ստանալոյ զարդարացուցումն գործով կատարելագործն և սաստկացեալ քան զսէր առաջինն, թէպէտ և կայս ղիպուածք սաթպղտական և արատաբոյ կարգի՝ նպաստաւորի յերկիւղէ։

Ասելի է վերկրորդ։ Պարտ է լինել զղջմանն ի վերս ամենայն մեղաց. վասն պարտ է լինել զղջմանն ի վերս մեղաց՝ զոյս որում են արհամարհուն Ա՚Ի. արդ՝ ամ մեղք միաբանին յայսմ պատճառի, նմին իրի չէ հնար լինել՝ ի վերոյ միոյ, առանց լինելոյ ի վերս ամենեցուն։

Պ Ի Ա Կ. Գ.

Ի վերոյ հարկաւորութեանն զղջման։

Զղջումն է հարկաւոր՝ հարկաւորութեամբ միջնորդի և պատճիրանի, եթէ բնական, և եթէ ձեռնային գրական, և եկեղեցական պատուիրանի։

Առաջին մասն յայտ է յասացելոցս ի վերս հարկաւորութեանն ապաշխարութեանն վերջ. նախընթեր. պր. 1։

Պատճառ (1) երկրորդ մասին է. զի մարդն բնական իրաւամբք պարտաւորի մարդն փոխատրելոյ զանիրաւութիւնն այլոյմ արարեալ, խակ արդ՝ զանիրաւութիւնն արարեալ Ա՚Ի մեղք չէ հնար փոխադրելոյ, բայց եթէ զղջմամբ. ապա է վերս նր բնական պատուիրան։

Պատճառ երրորդ մասին է. զի սովին խակ, որով զղջումն է հարկաւոր հարկաւորութեանն միջնորդի, զնի զպահանջն ձեռնային գրականն պատուիրանն. քանզի վերարերի առ օրինագիրն պատուիրել զայնոսիկ որք են հարկաւոր փրկութեանն քաղաքացեացս։ Այս չէ ինչ ընդդէմ, եթէ շնորհքն է հարկաւոր առ փրկութիւնի, և սակայն չէք ինչ մնաւատ պատուիրան զայնմանէ։ Ինհանգիստութիւնն է, զի շնորհքն ոչ է դործ մեր, այլ Ա՚Ի. խակ զղջումն է դործ մեր։

Ամորդի մասն յայտ է յեկեղեցական պատուիրանէ տարեկան խոստովանութենէ, որում չէ հնար լինել առանց զղջման։

Ի մեծադոյն դժուարութենի ի վերս ժամանակին, յորում պատուիրանն զղջման պարտաւորէ։ Այ

Ասելի է երկրորդ։ Թէպէտ ամենեցուն հաւանեցուցանել պարտ է իրր զիրկաւոր խորհուրդ նոյնհետայն զկնի մեղացն զղջալ. սակայն պատուիրանն զղջման ոչ պարտաւորէ թէ ինքեան՝ նոյնհետայն ընդ գործելն զմեղս, և ոչ նոյնհետայն է յիշատակելն զայն, և ոչ յամ աւուրս կիւրակէից և հրամայեալ տօնից։

Ի հասարակաց կարծիք ընդդէմ սակաւոց՝ եթէ նախնեաց, և եթէ արդեաց. և յայտնապես այնոյ Թոմայեան՝ աստ խ. 6. պ. 5. ուր թէպէտ և խօսի զպատուիրանէ խոստովանութենէ, այլ զոր ինչ միանդամ յառաջ բերէ միօրինակ զկնին ի վերոյ պատուիրանի զղջման։ Նախ առաջին ասէ՝ առ 2. Այ է ի հարկաւորութենէ հարեանոյ զբնութեանն նախնեաց նշանակել զբնչէ. քանզի ի վերոյ հաւանեաց. Ա ցաւ նմին օրինաւոր է ի վերոյ հաւանեալ հնազանդութենեան։ Որ որպէս և յայտ է՝ պատշաճի նոյնօրինակ և զղջման։ Ապա ասէ՝ և պատճառ նր, որովք

Հետ. (2) առաջին, և երկրորդ մասն։ Պատուիրանն զղջման է ստորասական, այս է *Գործոցբեկ։ իսկայդ թ միաւոր կարճեաց ամենեցուն՝ այս է բնութենի ստորասական պատուիրանի, որ թէպէտ պարտաւորէ միշտ, սակայն ոչ նոյնհետայն և ընդ միշտ, այլ ի բացորոշեալ ժամանակի և ի դնիլ մնութեանց ինչ պարագայից, և չէ հնար նշանակել զպարագայս, վ որոց պարտաւորեսցէ նոյնհետայն ընդ գործելն զմեղս, կամ նոյնհետայն ընդ յիշատակելն զայն, որպէս յայտ լինի ի լուծմանէ առարկութեանց. ապա։

Հաստատ։ (3) Յամմնանէն, յորում պարտաւորէ ստորասական պատուիրանն, ոչ ի յորժամ դիւրաւ մարթի կատարել. ապա թէ ոչ՝ մեծաւորն ոչ տայով զոյգրմութենի յաւելորդաց՝ ուստ և իցէ աղբատի՝ որ ընդ առաջ ելանէ, մեղանչէր մնհուշտ մեղաց, այլ յորժամ

(1) Ֆ. 1. խ. 84. պ. 7. առ 1։ (2) Մտթ՝ խ. 6. պ. 5. Բուլ. Խ առ 3։
(3) Ինդ՝ Բուլ։

ժամ ժամանակին զսահմանական հարկ՝ Ի մէջ բերէր. խնարդ՝ Հիւպէտ նոյնհետայն գիտի մեղայն գործելոց, կամ նոյնհետայն ընդ միշտ տակին զայն, և զնուրայարնարտեմի պղծանալոյ. տակայն անտի ոչ Ի մէջ բերի տախտզանական հարկաւորութեմի. ապա։

Հայց. Երբորդ մնան։ Ես ուրեք ընեմնոտանք, և ոչ պատճառ ինչ ցուցանեմ, թէ պատուհրանն զպղծման պատասուրէ յամ առուրս կիւրակէից և տրամայնալ տօնից. ապա անհիմն գիտ։ Հայց. առաջարկ։ Ահեմ գտանեմ ուրեք այնպիսի պատուհրան, լիներ, ոյ գիտն պաշտպանք այնր կարծեայ, Վկա. Ժե. 31. ուր ասի. * Հաբեալ շաբաթոց է, եղեալ յեղ ցան Ի հանգիստ. և ըլէնօքն զանգնեա յեր ։ Ոչ եմեմ պատճառ ինչ նպատակ, լիներ այն, զի մեմնան պատուհրանի պահելոյ զաւուրս տօնից՝ և սրբել զանձն Ի՝, որում չեմ հնար լինել, բայց եթե զպղծանմ։ Իսկապէ ոչ Ի միայնամեմնեն Վկատագոց. քանզի անդեն և պատուհրանն Ի մի մնանաս տօնի քաւութեմն, որ հանդիպեր միանգամ միայն Ի տարւոջն Ի տասներորդ ասուր անձոյն եօթեներորդի. ուստի ոչինչ վերարերի առ առաջադրեալն մեր ։ Ոչ այնպէ էր այն օրինական միայն, որ վաղուց ես խոսանեցաք ։ Ոչ ոչ Ի պատճառէն. զանդի մեմնան պատուհրանին ոչ անկամի ընդ պատուհրանաս ։ Այս ։

Ասելի է երրորդ ։ Պատուհրանն զպղծանոյ ըստ ինքեան պատասուրէ Ի բարոյական վճռոյ մնդհանուր, կամ հնանդիսեալ ընդ միշտ, եթէ արտաքոյ նորա այնպէս պատասուրէ, միշտ չէ լինել կարող մեղաւորին առանց նորոգ մեղաց յատպել ընդ երկոյ կիւսաւորութեն նր ։

Ասելին մնան յայտ է. զդի յայնժամ մեծագոյն ստիպ հարկաւորութեմն վճռանելոյ Ի՝, և ինդրելոյ զնշանաւ ինի նր. և եթէ յայնժամ զանց արասցե զայնոսիկ մեղաւորն, Ի մեմնան է, զուցէ զան ոչ երբէք կատարեսցէ, և Ի մեղս իւրամ մեռցի։ Ահ ըստ ինքեան պատասուրէ այս պատուհրան յ՝Ի մի գալ պատրաստին, Ի ժամանակս ժամանակաց, Ի ժամանգաւոր նաւարկուն, Ի մանկարս հիմանդաս, և որոց Ի կարգին ։

Չերկրորդ մնան ազատականն որ գիրք. Ի՛կդես. և. 8. * Ահ յաղագ ընտանեաց ասա Տ՞, և Ի՝ ՅԵՒ յօրէ յօր ։ Հաստատեան որ Հարք, Ի կշռանելն զնոսա որք յատպեան զդան իւրեանց. ապա անմիանգ հաստատէ այս հաստատեմն սկիզբն սյդն ինանգեալ, յասել անդ իւրամ. Չէ օրհնեմնս տարան ոչ ասեն զնէրք նոր հաստատեալ յ՝Ի, զի զնան և ոչ զի ինչ բանի ապառնալոց, կամ նոյնհետայն Ի հարկէ ինչ՝ կոխեցի բանանել Ի նմանէ, ընդ ասացոյ նոյնն նեմն բազում ինչ, զորս մի ապառնալոց, կամ նոյնհետայն յայնմանի՝ նորան հնանդաց յ՝Ի ասելոմարնելով պատգամիրեան նր. և յայն առնս հրամանն Տեառն Հրեաց, հանառանս զի Ի տանիցեան կոխ փոքեն նորան զան զնանգման յատասացան ընծանելոյ, և զան նախնեացն ասնուելեն, որ ասէ Փիլիպոյն. Ընչոնս Ի նահատանելն բանին նորոց և նորան ասնել ինչ՝ ասանց զի բանելոյ յատասլցեցն գնոյ զանգանին, և ասանց հանելոյ ոնանուելեն։ Այլ ասանգ չէ հնար նորոց լինել հիցս յայնոսիկ նոնանատացուելեան, չէ հնար հանդիպել՝ ասալ նմա ընդ երկար յատասլել զզգուսն ։

Այլ թէ ցիրեան պատճ է յատպել, միեչև հանարիլ մեղատրեն զանց առնել զայսոսիկ պատուհրանս, և մեղատչել մահու չար մեղ, ոչ բացատրեմ այն ինդրնա, և ոչ իսկ ես համարձակիմ բացատրել ։ Ասպաքեն ունիք ասեն, թէ կարող է առանց նորոգ մեղաց յատպել զամ մի, զոր ոչ Տատատանի. և ասանք՝ զնորս կամ զՀինգ ամիս, զոր ոչ ուրանամ, և ոչ Տատատանի ։ Այս մի ինչ երեսի ինձ ատյդ, թէ ատցերնատ է առանել և յատպել. զդի յատպատանն առանել քան զնորս կամ զՀինգ ամիս՝ երեի ընդ երկար, և առանել՝ եթէ մնատիր լիցի սկզբանց սյդն նմանմի։ Այս զգորհնակ որ առանել քան զնորս կամ զՀինգ ամիս յատպեր եղանգնել զնորգործութեմն Տատատոյ և զսիրել, զեմ ըստ խնամն կարծեայ՝ ոչ զերծաներ Ի մեղայ, նոյնպէս և որ զանց առներ և զնորգործութեմն պղծման. զի Հեպտ և են զանազան պատուհրանք, այլ զեմ միօրինակ ատիպ պատուհրանն զպղծման, որպէս և պատուհրանն Տատատոյ և սիրոյ ։

Ասելի է չորրորդ ։ Պատուհրանն զպղծման պատասուրէ ըստ պատասխանի այնչափ, ցորչափ պահանջի վիճակ ընդհանոյ Ի կատարման

այլոց

այլոց պատուիրանաց, կամ ի յաղթել մեծամեծ փորձութեան։

Սկիզբն Նախ՝ ընդդէմ երկրորդ եղբայրութեանն։ Պատուիրանն զղջման փակէ զբացասականն, այս է՝ ոչ մեղայ ի մեղս և ի հեշտութեանն Աւգ. ապա։ Յաւգ. առաջարկ։ Եթէ չիք պատուիրան ոչ մեղայ յիմիք ժամանակի ի մեղս և յատելութեան Աւգ. ապա արժան է մեղայ ի նմա. ապա արժան է դարձեալ կամել մեղայ ի նմա. իսկարդ՝ առատ է երկրորդ հետևութիւնս, որովհետև կամին մեղայ ի մեղս և յատելութեան Աւգ, է զառարկայն՝ որ ի ներքուստ չար. ապա։ Յաւգ. հետևողութեանս։ Արժան է կամել՝ զոր արժան է առնել. իսկարդ՝ արժան է մեղայ, են. ապա արժան է կամելն մեղայ։

Պետեմ ուր. զառաջարկ. և զցուցմանդ ուր. գերկրորդ հետև. և զցուցման նորա զան. զմեծ։ Արժան է կամել՝ զոր արժան է առնել զրականապէս, ընդհան. զոր արժան է առնել բացասաբար, կամ թողլտութեան միայն, ուր։ Յոր միտ զան. զփորր։ Արժան է մեղայ ի մեղս և յատելութեան Աւգ, զրական ներգործութեան՝ ընտրելոյ զայն մեացողութեան, ուր. բացասական ներգործութեան՝ ոչ մերժելով զայն, կամ սոսկապէս թողլ տալով այնմ, ընդհան։ Նո ուր. զհետև։ Ոչ անզի կամելն ի մէջ բեբ զդրական ներգործուն տնօրինութեան յաւարկայէ իւրմէ, նմին իրի և չար, եթէ առարկայն իցէ չար. այլ ոչ՝ մեղայ բացասաբար, կամ թողլտութեան։ Նո ըս այսմ արժան է մեզ բաղում ինչ իրաց թողլ տալ, կամ առնել բացասաբար, զորս չէ արժան կամել. ուր արժան է ինձ թողլ տալ մեղայն Պետրոսի, և սակայն չէ արժան ինձ կամել զայն. արժան է ինձ թողլ տալ աւազակին սպանանել զիս, և սակայն ոչ է արժան ինձ կամել զայն։

Հակառ։ Իսկարդ՝ որ ոչ մերժէ յանձնէ զԱծնամուխն Աւգ, յորժամ կարող է, համարի կամել զայն դրականապէս, գէթ մեկնողապէս. ապա։

Պետեմ զան. զառաջին։ Յորժամ կարող է, և պարտաւորէ, ըստ. եթէ ոչ պարտաւորի, ուր։

Կրկնիցեմ։ Որ զանց առնէր խափանել զմեղս Պետրոսի՝ յորժամ կարող էր, թէպետև ոչ պարտաւորէր, այն զանցառութիւն լինէր նմա կամաւոր. ապա որ զանց առնէ մերժել զԱծնամուխն Աւգ՝ յորժամ կարող է, թէպետև ոչ պարտաւորեսցի, Ածնամուխն Աւգ է նմա կամաւոր։ Յայտ է առաջարկ. ի ձառէն՝ որ ի վերմարդկային ներգործուածոց, ուր ուսուցանի, թէ՝ առ ի լինել զանցառուն կամաւոր՝ ոչ պահանջի պարտաւորութի դնելոյ զներգործութին՝ որ զանց առնի։ Հետև. յայտ է ի հանգիստէ պատճառին։

Պետեմ։ Ընկալեալ զառաջարկ. ուր զհետև։ Ազգի փոխարերի՝ ի զանցառութէ առ ներգործութէն նորա. Նմին իրի առ ի ուղիղ մակարերել՝ պարտ է դնել. ապա որ զանց առնէ մերժել զԱծնամուխն, են. այն զանցառութի է նմա կամաւոր. և ոչ եթէ՝ նոյն Ածնամուխն, որ է գործք հետևակ այնմ զանցառութէ. քանզի զորօրինակ ուսուցանի անդէն՝ ի վերմարդկային ներգործութէն՝ առ լինելոյ հետևորդ գործոցութէն զանցառութէ կամաւոր, պահանջի պատուիրան դնելոյ կամ խափանելոյ զայն. ոչ ի յառաջ բերելոյ օրինակին՝ Թէպետ զանցառութին խափանելոյ զմեղս Պետրոսի՝ է ինձ կամաւոր, սակայն մեղքն Պետրոսի՝ որ զհետ գայ այնմ, ոչ է ինձ կամաւոր, բայց եթէ կարող իցեմ, և պարտ իցեմ խափանել։

Սկիզբն երկրորդ։ Հինէ և իցէ ժամանակի պարտաւորի մեղաւորն մերժել զիւճակ մեղայ, և զառնելոյն Աւգ. ապա։ Յաւգ. առաջարկ։ Նախ՝ հինէ և իցէ ժամանակի պարտաւորի մեղաւորն մերժել յանձնէ զևս մեծագոյնն քան զնմ չարիս. իսկարդ՝ վիճակն մեղայ, և առնելոյնն Աւգ է ևս մեծագոյն քան զնմ չարիս. ապա։ Երկրորդ՝ նոյնհետայն և հինէ և իցէ ժամանակի պարտաւորի ի բայ ընկալեալ զօձն ի ծոցդ. իսկարդ՝ պարտաւորիսք փախչել ի մեղաց իրրև կերևսաց օձի. Ագղես. իս. 2. ապա։

Պետեմ ուր. զառաջին ցուցմանդ զան. զմեծ։ Հինէ և իցէ ժամանակի պարտաւորի մեղաւորն մերժել յանձնէ զևս մեծագոյնն քան զնմ չարիս, եթէ անտի վերսաս իցէ մեծագոյն վնաս, ընդհան. այլազգ, ուր։ Նոյնպէս զան. զփորր։ Ի իճակն, են. է մեծագոյն քան զնմ չարիս, և անտի հինէ և իցէ ժամանակի վերսաս է մեծագոյն վնաս, ուր. ոչ է միշտ վերսաս մեծագոյն վնաս, այլ թեթև միայն, ընդհան։ Նայն սակս, և պատճառաւ այսր թեթև վնասու, զորօրինակ զրկելոյ յառաւելագոյն շնորհաց, հետևաւոր

վերանդի

փառնդի մեռանելոյ Ի մեղս, ևն, ոչ զանազանք լինել զանցառութեան ինչ փրկութեանէ ոչ նոյն-հետայն զղջանացն, եթէ չգոյէ պատճառ ինչ յատկաղելոյն։

Ջնկրկրդդ յուսյման ուր. զհետև։ Ընհան-գիտութիւն է, զի օձն Ի ծոցի միշտ մնասէ, և խածանէ. այլ ոչ նոյնպէս մեղքն ունակական, որոյ կամքն՝ որպէս ենթադրեմք՝ է միջահա-տեալ։ Իսկ զվկայութիւնն Լիզևսիատիկեայ իմանալ պարտ է Ի մէն ներգործական մեղաց, և ոչ Ի վերայ ունակականին։

ՊՐԱԿ. Գ։

Ի վերայ ընծանման զղջման։

Զղջումն ընդհանրապէս, որպէս վերագոյնդ ասացաք Ի Տրիտ. ժողովոյն, է ցաւ և տան-ջանք Հոգւոյ Ի մէն մեղացն գործելոց։

Ել կրկին. կատարեալ, և անկատար։ Կա-տարեալն, որ ըստ Աստուածաւանդ առաքելական անուանմանէ կոչի Լաւանիկոյս, և ըստ մեզ ընդ-հանրապէս զղջումն, է՝ որ ածային սիրովն յայտոյն կամ լինի, և արդարացուցանէ յա-ռաջ քան զընդունելութեի խորհրդոյն, զորօրի-նակ սահմանէ ժողովն Տրիտ. գլուխ. 14. գլ. 4։ Իսկ անկատարն, որ ասի ըստ նոցա Լե-ռնկոյս, որ Ի մեզ երբեմն ասի զղջումն բնա-կման, է բազմապատիկ. վնգի պատահիլն Ի կատարելութեէ բազմօրինակ հանդիպի։

Ընդ՝ ցաւիլն Ի մէն մեղաց, Ի բաց առեալ գծածային սէրն, կամ՝ զի է զազրի ինչ հակա-ռակ բանին՝ եթէ բնականին, և եթէ գեր-բնականին, կամ՝ զի ածէ Ի մէն ժամանակա-ւոր չարիս, կամ՝ զի տանի Ի դժոխս, կամ՝ զի արտաքսէ Ի փառաց, և կամ՝ զի է չար և արհամարհութեի Աստ. այսչափ են նզանակք անկատար զղջման. այլ միայն վերջինն է ներգործութեի ապաշխարութեէն, և տեսակ՝ որ բաժանէ զզղջումն ըստ որում այնպիսի. վնգի ապաշխարութիւնն, և զղջումն՝ որ է գլխա-ւոր ներգործութիւն նորա, է Ի վերայ մե-ղաց՝ ըստ որում են չար և արհամարհութիւն Աստ, ոյն առաքեալ վիճ. 2. պ. 1։ Իսկ այլ անկատար զղջմունք են ներգործութիւնք՝ կամ անձնասիրութէն, կամ յուսոյ և սիրոյ ցան-կութէն, կամ մասնաւոր առաքինութէն՝ որում հակադրի մեղքն։ Տես Ի նախայիշատակեալ տեղւոջ։

Իսկ այսմ վերջին անկատար զղջման, քան-զի է Ի մէն մեղաց՝ ըստ որում են չար Աստ, չէ հնար լինել առանց ինչ սիրոյ նր. վնգի ա-տելութիւն չարեաց անձին ուրուք պատճառի Ի սիրոյ նր, և Ի բարի կամեցողութէ՝ որ առնու, զոր-օրինակ ուսուցանեն ածաբանք առ հատարակ զնդի սէրն (Թովմայի՝ ա. բ. խ. 29. պ. 2։ Ըստ այսմ ցաւիմ Ի մէն չարեացն Պետրոսի, վնգի սիրեմ զնա. և եթէ ոչ սիրէի՝ ոչ ցա-ւէի Ի մէն չարեաց նր. տակաւ առեամ զնահ, վնգի սիրեմ զնհանս. Ուստի նոյն պատ-ճառի է, ասէ նրան (Թովմաս՝ բ. բ. խ. 25. պ. 6. առ 2. ապիբէն պէրնս ուրուս և պիբէն պէարնս նէ։ Լե զնոյն կրկնէ՝ խ. 34. պ. 4։

(Հաւելուած Խոբգիանցն։ Այլ առ բա-ցայայտ ծանօթութիւն խնդրոյս և զանազա-նութէն կատարեալ և անկատար զղջման, և որ Ի կարգին Ի մեր բարբառ, գիտել պարտ է, զի կրկին է սէրն։ Մի՝ որ կոչի ըստ Աս-տուածաբանացն Ուռնկոս. և է այն՝ որ յառաջ գայ կամ յայտնի յածային գերբնական հնա-զանդ շնորհաց, որով սիրեմք զԱծ իբրև զգեր-բնական վերջին վախճան մեր. և այս կոչի ած-սպանական կամ ածային սէր. որոյ միանգամայն և ստուգութ զնշմարիտ և զտիրապետ ատացեալ բարեկամութէն ընդ Աստ։ Օղջումն յայտ սիրոյ յառաջ եկեալ, կոչի Լաբերնել զղջումն, և ըստ նոցա Ուռնկոյս։ Իսկ սէրն, որով սի-րեմք զԱծ, և բարի կամիմք նմա, որ յառաջ գայ Ի մասնաւոր ինչ բնական առաքինութէ, որպէս և այլ ներգործութիք բնական առաքի-նութէնց, որ և կոչի սէր բարի կամեցողութէն ումէք, և ըստ Աստինացւոց ասի Ամոռ, կամ Տիլեկցիս, է տեսակաւ տարբեր յածային սի-րոյ. և զղջումն յառաջ եկեալ յայսպիսի սի-րոյ՝ է անկատար, և կոչի ըստ նոյ Աստ։ Լե քանզի Ի մեր բարբառ չունիմք զանազան եղերս նշանակիչս այսր զանազան սիրոյ, և ոչ զզանազան եղերս նշանակիչս սիրական առնէ բարեկամութէն՝ որ ըստ նոցա կոչի Ամիցիա, և բարի կամեցողութէն՝ որ ասի ըստ նոյ Պենեվո-լենցիա. միանգամայն և ոչ զանազան եղերս նշանակիչս կատարեալ զղջման, և անկատա-րին. Նմին Իրի՝ Ի բացատրութէ սահմանաց, և Ի գործոց նոյ իմանալ պարտ է ըստ մեզ զազ-նազանութէի նոյ չընթացս գործոցս։)

Սակայն և այս անկատար զղջումն ոչ նոյ-նանայ ընդ կատարեալ զղջման՝ որ ածային սի-

ըումն յաջողակ. քանզի այլ է ՝ի ձեռն սեռին՝ որով կատարի զոք ումն, և այլ՝ բարի կամեցո-ղութիւնն որով շարժի ասացեալ անկատար զոք-ումն. և զայս քանզի բազում ոչ ըստ բա-նականին զանազանեն՝ չհոգևելով զնշանակին սեռին ընդ սիրոյ բարի կամեցողութեան, անկանին ՝ի մեծամեծ սխալանս։

Այլ՝ սեռն կատարչ ևկեալ յձեռին սիրոյ՝ է սեր սիրատես ասացեալ բարեկամութեան ընդ Աշ, զորօրինակ յատկապէս ցուցանէ պեն Սիմաճ՝ թ. թ. ես. 23. պ. 1. և ընդ նմա առ հատարակ ՝ի ձեռն զորդի ՝ի մէջ բերէ զպայմանս բարեկամութեան, մանա-ւանդ զիմաստութեան ախորժակաց, և զիոխա-գործ սեր. քանզի բարեկամն է բարեկամին բարեկամ՝ ըստ հասարակաց առածին ։ Իսկ սեռն պարզ բարի կամեցողութեան՝ է կա-մել ումեք զբարի առանց փոխադարձ սիրոյ. զորօրինակ ՝ի տեսանելն զերկուս մարտա-կիւ, յորոց կամիս միումն զի յաղթեսցէ։ Ընդ-ձին իրի կերպական առարկայ ՝ի ձեռն սիրոյ՝ է Աշ ըստ ինքեան բարի իրրև զբա-րեկամ, ոչ զի բառդ ՝ի ՝ի բերելոյ, է կեր-պական պատճառ սիրելոյ զԱշ, կամ առար-կայի ձեռին սիրոյ, այլ եղանակաւորումն կամ պայման նր, առանց որոյ սեռն Աշ ոչ լինէր ձեռին սեր. զորօրինակ Աշ ոչ տեսանայ՝ է առարկայ հաւատոց մերոց, ոչ զի բառդ ոչ պիտանի՝ է պատճառ հաստատուն հաւանելոյ մերոյ Աշ հաւատովք, այլ պայման առանց որոյ հաստատուն հաւանութիւն մեր ոչ լինէր հաւատոյ, և ոչ Աշ ըստ որում յայտնօրէ՝ առարկայ հաւատոյ. իսկ կերպական առարկայ սիրոյ բարի կամեցողութեան՝ է Աշ ըստ ինքեան բարի ոսոկապես ։ Եւ ըստ հետևորդի՝ առարկայ կատարման զղջման՝ որ սիրով յաջողեալ, է մեղքն ըստ որում չար Աշ իրրև ընթեկամի, իմացեալ զնոսն իբրեւ իրարս որպես յատար-կայի սիրոյ. իսկ առարկայ անկատար զղջման է մեղքն իրրև զչար Աշ սոսկապես։

Յորմէ ունիմ մակաբերել, թէ այս զղջո-մունք տեսակաւ տարբերին. և յայն սակս ան-կատար զղջումն, որ ՝ի սիրոյ բարի կամեցողու-թեան, ոչ կարէ լինել առաջնակարգ անուամբ առաջեալ զղջումն, այն է՝ կատարեալն. մնայն որք տեսակաւ տարբերին, մին ոչ կարէ լինել միւսոյն, քանզի միւս ասի լինել միւսոյ, յորժամ ՝ի գալ միւսոյն ՝ի վն՝ կապէս ոչ փոխոխի. զոր-օրինակ մանուկն ասի լինել այր, այլ ոչ ասելի ասի լինել մարդ, այլ ՝ի սակս՝ մարդ։

Այլ և ասի ունիմ խնամով զմիտս այր հա-սարակաց առածի, Ապաշխարօղն ՝ի խորհրդեան՝ յանկատար զղջացելոյ ընդ խորհրդել զղջալ, թէ չէ կերպական, օրպէս եթէ անկատար զղջումն լինէր կատարեալ զղջումն. այլ նո-ցիական՝ և ՝ի կողմանէ ևնեմականին, ըստ ո-րում ապաշխարօղն անցանէ յանկատար զղջ-մանէ առ կատարեալ զղջումն. զորօրինակ ոյն ՝ի սպիտակէ լինի սեաւ, և ոչ սպիտակութիւնն լինի սեաւքի։ Այդ՝ ասի լինել կատարելոյ զղջացեալ, մի՝ պատճառաւ ունակութեան ած-այնի սիրոյ՝ որ հեղու ՝ի նա. և երկրորդ՝ պատ-ճառաւ գերբնական ներգործուն, որով կա-մաւորապէս զնեռչհս և զնձայնին սէրն ընդունի, ոյ ասացեալ ստորև։

Ի վերայ անկատար զղջման են բազում ե-րևելի հակառակութիւնք։ Ոմանք առաջին՝ թէ արդեօք այն զղջումն, որ ծնանի ՝ի սոսկ նր-կիւղ գեհենոյն, իցէ՞ բարի և օգտակար։ Երկրորդ՝ թէ արդեօք ինքնին միայն կարող է արտաքսել զնոսն մեղանչելոյ։ Երրորդ՝ ար-դեօք բաւական է ընդ խորհրդոյ առ ար-դարացուցումն, թէ ընդ հակառակն պահան-ջի՞ արդեօք սէր ինչ Աշ, և օրպիսի սէր։ Ո-ր ըստ կարգի վճռաբանելոյ զոյացանէ՝ դնեմք զյաջորդող։

ՊԻՐԱԿ Ա։

Երբեմն անկատար զղջումն, որ ծնանի ՝ի ՀՈՅ երկիւղէ գեհենոյն, իցէ՞ բարի և օգտակար։

Յառաջ քան (1) զուծանել խնդրոյս գիտել պարտ է նախ, զի ըստ սրբոյն Սիմաճայի՝ երկիւղն է քառատեսակ, աշխարհային, ծառայական, սկզբնական, և մանճանական։ Օ՛ր որովհե-տև առարկայ երկիւղին է չարն, երբեմն մարդն վն չարեաց՝ յորոց երկնչի հետանալ Աշ. և այս ասի երկիւղ աշխարհային։ Եւ երբեմն մարդն վն չարեաց՝ յորմէ երկնչի զառնալ առ Աշ, և չարի ՝ի նա. և այս չար է կրկին, ՝ի՝ է՝ չար յանցանաց, և չար պատժոց։ Այդ՝ եթէ զբ զառնալ առ Աշ և չարի ՝ի նա վասն ցաւոյ պատժոց՝ լինի երկիւղ ծառայական. իսկ

(1) Ե. Ե. Խ. 19. պ. 2. Բուլ։

խակ եթէ վն երկիւղի յանցանաց՝ լինի երկիւղ որդիական, փղձն դարձոյ է երկնչել յարհամարհուիլ Հօր. և եթէ վն երկոցուն ևս՝ է երկիւղ սկզբնական, որ է միջին ընդ ՄՋ երկուց երկիւղից ևս։ Այսպէս դնէ բառ առ բառ Աստղապատն։ Ասէ որպ երկիւղն ծառայական, բան որում խօսիմք աստ զայնմանէ, է երկիւղ պատժոց՝ զոր Ի՛ ի վերայ ածէ. և առ խորհելոյ անտի՝ մարդն դառնայ առ Ի՛։

Վ՛հտիլ պարտ է երկրորդ՝ (1) բան նմին սէնի Աւոմմայի, թէ զերկիւղն ծառայական մարթի է գնտառ ածել կրկնակի. այս է՝ ըստ գոյացութեան, և ըստ ծառայականութեան. կամ որպէս այլք ասեն, կրկին է ծառայական երկիւղն. մի պարզապէս ծառայական, և ևերկրդ՝ ծառայապէս ծառայական։ Երկիւղն ծառայական ըստ գոյացութեան, կամ պարզապէս ծառայական՝ է, յորժամ բարին, որում Հակադրի պատիժն, ոչ լինի սիրելացեալ իրրև զվերջին վախճան, և ըստ հետևորդի՝ և ոչ ի պատժոյն երկնչի իրրև ի գլխաւոր չարէ. զորօրինակ յառաջիկայ նիւթ՝ եթէ ոք փախչի ի մեղաց յերկիւղէ պատժոց, ոչ ունելով զսփական բարին՝ որում Հակադրի պատիժն՝ փոխանակ վերջին վախճանի, այլ փոխանակ միաձաւոր վախճանի միայն. և ըստ հետևորդի ոչ երկնչի ի պատժոց իրրև ի գլխաւոր չարէ, այլ վերայուցանէ յայսմանէ՝ զոր առնէր՝ եթէ չէր եգեալ ի վն պատիժ։ Երկիւղն ծառայապէս ծառայական է, յորժամ բարին, որում Հակադրի պատիժն, սիրելացեալ լինի իրրև զվերջին վախճան. և ըստ հետևորդի երկնչի ի պատժոյ իրրև ի գլխաւոր չարէ. որպէս յառաջիկայ նիւթ՝ եթէ ոք փախչէր ի գործելոյ զմեղս յերկիւղէ պատժոց, ունելով փոխանակ վերջին վախճանի զսփական բարին, և ըստ հետևորդի երկուցեալ ի պատժոց իրրև ի գլխաւոր չարէ, մինչև զօրութիւն սորին ներգործութեան կամէր մեղանչել, եթէ կարող էր անպատիժ. և այս երկիւղ ծառայական ըստ որում այսպիսի կամ ըստ ծառայականութեան՝ Հակադրի ածային սիրոյ, և է չար։ Այլ տակայն յաւելու ի վն նոն Աստուածս, թէ վերջիւսեալ ծառայականութիւնն ոչ վերաբերի առ տնօրէն երկիւղն, որպէս և ոչ անկերպութիւնն առ տնօրէն Հաւատոյ. քանզի տնօրէն բարոյա-

(1) Ինչ՝ պ. 4. Բոլ։

կան ունակութեանց կամ ներգործութեանց յատարկայն առնել լինի. իսկ առարկայ ծառայական երկիւղի է պատիժն, որում ի վն գայ, եթէ բարին՝ որում Հակադրի պատիժն, կամ լինի սիրելացեալ իրրև զվերջին վախճան, և ըստ հետևորդի երկիւղ ի պատժոց իրրև ի գլխաւոր չարէ. և կամ կարելացի առ Ի՛ իրրև ի վերջին վախճան, և ըստ հետևորդի ոչ երկիւղ ի պատժոց իրրև ի գլխաւոր չարէ։ Վ՛այն իրի ծառայականութեան ոչ է պակասութեի երկիւղն, այլ երկնչողին. և յայն սակս երկիւղն ծառայական ըստ գոյացութեան է բարի, իսկ ծառայականութեին՝ չար։ Օայսոսիկ զգուշութիւ պարտ է առնուլ ի միտ, զորս քանզի ոչ զանազանեն նոր աղանդաւորք, ի սկսեալս մոլորութեիս խորհրդոյն։ Լ՛ոյ՝

Ասելի է։ Ինկատաւ զդ՛ուն, կամ ցան ի վերայ մեզոց ի սոսկ երկիւղ գևՀնոյն, առանց ինչ սիրոյ բարի կամեցողութեան Ի՛, թէպէտ և չև ևս իցէ տակաւին ըստ բաւականին գործունեայ, մինչև բացարձակապէս արտաքսել զնա կամն մեղանչելոյ, սակայն եթէ առ այն նկրտացի, և առաչնորդեսցէ, և չեցէ ծառայապէս ծառայական, է բարի, Հաճոյ, և օգտակար։ Ի՛ ընդդէմ Լուտերականաց, որոց մերձաւոր են յայսմ Նայոս, Հանեհրոս, Կոճենտրոս, և նոցուն աղանդակիցք։

Հմուտ. Նախ՝ ի Տ՛իթ. Ժողովոյն գում. 6, կան. 8։ Նե ևս յայսմ գատապարտեալ Նախադասութիւն Ա՛ղեքսանդրէ ուԹևորդէ՝ յամին 1690. Ընկատաւ զդ՛ուն՝ որ յերկիւղէ գեհհնոյն ի պատժոց ձնանի՝ առանց սիրոյ բարւոյ ընդդատողութեան Ի՛ վը էութ, ոչ է բարի ընդ ձռնաւ, և գեղբնաւան. է 15։ Վարձանալ՝ ի սէնի Օգոստինոսէ ի վը Ամաղ. ճիւ. Ոչ երևինչ, զի ի երեսոցն ջնջնախառնուրդն ահեռագնեցիկ գեռոյն. այլ երևինչ, զի ոչ առաչեսցի ի գեհհնան. բաւ է և այս երևիլ։ Նե այլուր։

Հմուտ. երկրորդ՝ ձեռնարկեալ պատճառաւ։ Հանկատաւ զդ՛ուն, զորօրինակ մեղնեցաք յերջանկացութեն, երիք ինչ գտանին։ Առաչինն է դիտաւոն վախճանի, այս է՝ փախչել կամ խորհել ի դնհնոյն. և այս է նեգործութիւն ելուզական յերկիւղէ։ Երկրորդն միջնորդ՝ թէպէտ չև ևս գործունեայ՝ առ այս վախճան ընկալեալ, այս է՝ ցանձ ի վը մեղաց.

և սա է ներգործութիւն հրամայելոյ յերկիւղէ: Այլ երրորդն կարգումն այսր միջնորդի առ այս ձախճան: Խարդ իւրաքանչիւր ՝ի սոցանէ է հաւատ, բարի, և օգտակար. ապա: Նուագ. փոքր. նաև: Փախչիլ ՝ի գեհենէն է բարի, որովհետև է ընտանեաց մարդկան, և քան զնաւ զգալի չարս չարագոյն: Երկրորդ՝ ոչ օք երկեալի, թէ ցաւիլն ՝ի վի մեղաց՝ է բարի: Այլ երրորդ՝ թէ է բարի կարգելն զայս ցաւ առ ՝ի խորշել ՝ի գեհենէն՝ յայտ է. վասն ցաւիլն ՝ի վի մեղայ, որ է պատճառ պատժոց, է յարմար միւնոյն խորշելոյ ՝ի պատժոց: Այլ չէ ինչ ընդդէմ, թէ յանդգնեալն է չար վերադոյն կարգի քան զպատիժս, և յայն սակս երևի անյարգ կարգել զցաւն մեծագոյն չարի առ ՝ի խորշել ՝ի փոքրագոյն չարէ. բայց միայն ցաւն ՝ի վի մեղայ ոչ կարդեսցի առ ՝ի փախուստ պատժոց իրրև առ զլխաւոր չար՝ և առ վերջին վախճան, այլ միայն իրրև առ մեծագոյն չար՝ և առ միրճաւոր վախճան, մինչև ոչ արտաքսել զև ևս վերադարձումն ՝ի Աստ, ոչ է չար կարդաւորումն, այլ բարի, որպէս ասացաք ըստ սկզբան ևնովմնոյն. և քանզի է բարի, նմին իրի ըստ ինքեան դիմ առ Աստ: Օգտա- օրինակ զըՀանապազ ապօթելով վա ժամանակաւոր բարեաց, կարգեմք զպարին վիճակոյն կարգի, այս է՝ զներգործութիւն կրօնի՝ առ բարին ստորին կարգի, և բարւոք առնեմք:

Ասացաք նախ՝ յերկրակացութեան. ապա՝ ի- ինչ երկիւղն առ այն ներգործէ, և առաջնորդէ, առ ՝ի պարտաւոր վճռել զիմաստս. զգալ եթէ առաջնորդեր յաւելութիւնն Աստ, կամ ՝ի յուսահատութիւն, լինէր չար. և թէ միշտ այսպէս լինի՝ մոլորութեամբ Հանարեցաւ Յուտերոս, քանզի բարեաւ անդամ անտի մեղաւորք դառնան առ Աստ:

Ասացաք երկրորդ, և չինչ ծառայական ծառայական, այս է՝ որ լինի ՝ի վի պատժոց իրրև ՝ի վի գլխաւոր չարի. զգալ ցաւն յայտնիսի երկիւղէ, որ Հայեր ՝ի պատիժ իրրև ՝ի գլխաւոր չար, և ՝ի փախուստ նր իրրև ՝ի վերջին վախճան, լինէր անկարգ, որպէս և ասացաք:

Երրորդ: Ոչ ևս երկիւղէ՝ որ ոչ արտաքսէ զկամն մեղանչելոյ, է ակամայ ըստ իմիք, զորօրինակ այլոք ամենեքին՝ որք լինին յերկիւղէ. ապա ոչ է բարի:

Պիտի ցան. զառաջարկ: Ոչ ևս յերկիւղէ՝ որ ոչ արտաքսէ զկամն մեղանչելոյ, է ակամայ ըստ իմիք, այնպէս՝ մինչև այսր ակամայութեան, որպէս բանիս կարգէ է ասել, յառաջագոյ յերկիւղէ կամ ՝ի ցաւոց ՝ի վի մեղայ, ուր, այնպէս՝ մինչև այսր ակամայութեան յառաջագոյ յախորժակէ մեղաւորին առ մեղս իւր, ընդ: Երդ՝ այս ախորժակ ՝ի կողմանէ ենթակային ոչ ապականէ զնոյն երկիւղն, և ոչ զցաւն ծագեալ անտի, գոլով նոցա արտաքին: Երդ՝ յորժամ ասի, թէ նաբին որք լինին յերկիւղէ, են ակամայ ըստ իմիք, ոչ են միտք բանիցն, թէ երկիւղն պատճառէ զայս ակամայութեի. զորօրինակ որ ընկենու զվաճառս ՝ի ծով առ երկիւղն նաւաբեկութեան է այն ակամայ նկատմամբ արկանելոյն զվաճառսն ՝ի ծով, սակայն ոչ երկիւղն նաւաբեկութեան, և ոչ արկանելն զվաճառս ՝ի ծով՝ պատճառեն զայն ակամայութիւն, այլ ախորժակն կամ բաղձանքն, զոր ունի այլուստ ՝ի վերայ վաճառացն: Սա նմին օրինակի որ երկնչի ՝ի գեհենայն, և յերկիւղէ անտի ցաւի ՝ի վերայ մեղաց, ակամայութիւն զոր ունի շուրջ զիմաստանմէ մեղաց, ոչ պատճառի՝ ոչ յերկիւղէ ասի, և ոչ ՝ի ցաւոյ ասի, այլ յախորժակէն զոր ունի տակաւին առ մեղս. և զայս առ խորժակ եթէ չև ևս արտաքսէ երկիւղն, սակայն առ այն նկրտի և տրամադրէ. նմին իրի է ապականութիւնն նր՝ որ երկնչի և ցաւի, և ոչ երկիւղէն կամ ցաւոյն, որպէս կանխաւ ասացաք: Տես ՝ի նախագիտելեան՝ որ առ ՝ի սկզբն ևնովմնոյ:

Ասիկ. Նախ: Ցաւն յերկիւղէ՝ որ չև ևս արտաքսէ զկամն մեղանչելոյ, փակէ զայս ներգործութիւն. մեղանչէի եթէ ոչ էին զժոխք: Ապա է չար:

Պիտի ոչ. զառաջարկ: Թէ ակա ենթադրէ զայս ներգործութիւն ՝ի մեղաւորն, այլ յայնմանէ ըստ ինքեան վերացուցանէ, և ոչ փակէ. Նա զի տրամադրէ յաւելութիւն զայն. վասն գոյութիւն անդ ծառայականութիւն՝ որ է ՝ի կողմանէ ենթակային, և ոչ ՝ի կողմանէ ներգործութեն, և ըստ այսմ ոչ վերասէ բարեաւթիւն ներգործութեն. զորօրինակ անկեղծութիւնն Հաւատոյ է ՝ի կողմանէ Հաւատացողին, և ոչ ՝ի կողմանէ ներգործութիւնն Հաւատոյ, և ոչ խափանէ լինել ներգործութիւնն Հաւատոյ ըստ ինքեան բարի:

Ասիպ. Երկրորդ: Որ առնոյ զմեղս գործ զժոխոց, առաւել առնոյ զոչ ժոխս՝ քան զմեղս, քանզի որպէս ասի առ Հաւատ ակ, ևնոյնիս

այսպիսի, և այն առաւել. խնդրե՝ այս է անկարգ, քանզի է անկարգութիւն առաւել առնել զիրար չարն քան զիմագոյնն, և մեզ է մեծագոյն չար քան զդժոխս:

Պիտեմ ուր. զինծ: Այլոյ յատկութիւն մեզաց մի դժոխոց՝ զօրութիւն այսր ներգործուածոց ոչ լինի բազմապատկի ի մէջ մեզաց և դժոխոց, այլ միոյն ասի մեղքն մի դժոխոց՝ իրրև վ. մերձաւոր վախճանի, ոչ արտաքսելով զայլ պատճառ առաւել առնոյց զմեզս քան զդժոխս, այլ վերացուցանելով յայնմանէ: Այս ցաւ ցաւումդ՝ որ ի հասարակաց առածէն՝ ասելք, թէ այն ճշմարիտ է, յորժամ արտաքս զայլ ամ պատճառ առնոյց զայն, որ ասի մի այլոյ. այլ ոչ՝ եթէ ոչ արտաքսեսցէ. զերօրինակ արդարն, որ տեսեալ զգողն կախիլ գիպակ, առնոյ զգողութիւնն վասն կախաղանին, կամ առ խորշելոյ ի կախաղանէ. սակայն ոչ գիտէ գայ՝ թէ առնոյ առաւել գկախաղանն՝ քան զգողութիւնն. իրրև որոշեսցէ ենթադրելի արդար, եթէ ընդ մէջ երկուց անոյ կամ գգողուն և զմի յերկուց անոյ՝ կամ գգողուն և կամ գկախաղանն առաջադրեր նմա ընտրել, առաւել ընտրեր գկախիլն՝ քան զգողանալն: Այս ևս՝ արդարն սիրէ գՅ՚Ծ մի Հատուցմանն, սակայն ոչ գայ գիտէ, թէ սիրէ գՀատուցումն առաւել քան գՅ՚Ծ: Այսպ ըստ սմին օրինակի որ առնոյ զմեզս մի դժոխոց՝ ոչ գայ գիտէ՝ թէ առաւել առնոյ զդժոխս. զի թէպէտ Ներգործուածքն ոչ առնոյ զմեզս մի այլ ինչ պատճառի, զի զերօրինակ ենթադրելիք՝ մեզաւորն է տակաւին առանց սիրոյ բարի կամեցողութեան Ա՚Ն. այլ սակայն այս պատճառ կամ երկիւղ դժոխոց ոչ գոլով վերջին վախճան, ըստ ինքեան ոչ արտաքսէ զայլ պատճառ, զերօրինակ զսէրն, թէպէտ և ոչ փակէ զայն, այլ վերացուցանէ յայնմանէ, նա թէ՝ առ այն առաջարգէ, և տրամադրէ:

Եթէ երբեմն որ Հաւք, մանաւանդ որն Օգոստինոս, երևին անարգել զերկիւղն, խօսին՝ կամ զերկիւղ որ ծառայական ծառայական, կամ զերկիւղ ժամանակաւոր բարեաց, կամ անարգեն զայն՝ և զգան որ անտի պատճառանալ՝ իրր անբաւականս առ արդարացումն:

Խնդրիցես: Երկուօք երկիւղն զիՀինգն, զորմէ խօսեցաք յեղակացումին, որ առաջնորդէ մեզաւորին՝ գառնալ առ Ա՚Ծ, եթէ՞ ոչ միայն բարի, այլև գերբնական:

Պիտեմ այո, ընդդէմ Լուտերոսի, և Կանսենեանց: Այսր է նախ՝ ի նախադասութենէն որ գատապարտեալ Ա՚ղիւսանդրէ ուխերտքն, զորմէ գրեցաք ի յոյժ եղբայրացուն, Նկրտ՝ ի Տրիտ. ժողովոյն գատ. 6. գլ. 6. ուր ընդ մէջ տրամադրութեանցն առ արդարար շնորհս Թուէ գԵրկնէն ամենայն ապաշխարելիան, որոյ ակզբնապատճառ առանձին մեզաւորք, արդ՝ ոչ ինչ բնական ներգործութեան հնար է լինել տրամադրութիւն առ արդարար շնորհս: Այլ այն զի՝ երկիւղն գհնինոյն ոչ լինի ի մեզ, բայց եթէ հաւատով:

ԳԼՈՒԽ. Ջ:

Ընթերց. եղիցի գլխեանդն կոչի և ինանին ձայն ապաշխարել վասն ձեռնադրելոյ:

Յառաջ քան զամ՝ լուռ առնել պարտ է զհոմ անուանութիւն եղերաց, յորոյ ի բառնիլն ոչ այնպէս տարաճայնին, կամ գուցե ևս միաբանին ներհակակ կարծիքն: Ա՚յ՝ կամ կամ ձեզն մեզանչելոյ խնացեալ լինի միայն կամքն ունականան յանցնալ ներգործութիւն, այս է վճռական մեզաց. քանզի չէ հնար զայլ ինչ իմանալ ունականան կամքն մեզանչելոյ, և կամ եթէ զայլ ինչ իմանան՝ որք այլազգ կարծեն, մեկնեսցեն, թէ զի՞նչ իցէ այն այլ, քանզի առ Հատարակ կոչին ամենեքին ունականան կամն, ախորժակս, յօժարութիւս, և ոչ այլ ինչ. և յայս միտ ասդէ է՝ թէ միայն երկեալ ոչ արտաքսի կամքն մեզաց, այլ միայն սրբարար շնորհաք: Այս կամ կամքն մեզանչելոյ խնացեալ լինի կամքն ներգործական, և արտաքսմամբ նի խնացեալ լինի արտաքսումն ոչ պակասական միայն, այլև ներհական, որ գայօրինակ մեկնի. ոչ միայն ոչ կամիմ ևս մեզանչել, այլև ցաւիմ զի մեզայ, և առնամ զմեզս: Այսև յայս միտ ևս ընդունիմք, թէ ոչ արտաքսի կամքն մեզանչելոյ միայն երկիւղէ. զորմէ զմեզս ըստ օրում է մեզք և արհամարհանք Ա՚Ծ, չէ հնար առանց առ երկիւղի միայն՝ առանց սիրոյ ինչ Ա՚Ծ, որպէս յուցցուք ստորև: Այսպ պարտ է կամքն մեզանչելոյ խնացեալ ընդ ներգործական կամս, և արտաքսմամբ նորա խնացեալ պարտ է, թէպէտ զորական, այլ զպակասականն միայն, և ոչ զներհականն. և այս պակասական բացատրի այսպէս. կամիմ ոչ ևս մեզանչել. կամ՝ ի

քաց թողում զմեզ ներգործական ախորժակս և զկամս միւսանգամ մեղանչելոյ։

Խնդիր է։ Ընդ ինչ ընդդէմ երկիւղին գժոխոց, եթէ իցէ գործունեայ, արտաքսել պահաւարար ինքնին միայն ներգործական կամն մեղանչելոյ։

Հայց. նախ՝ յայսմ դատապարտեալ նախադասութիւն Լաւենտեանց. Երկիւղն վճռաց ինչ արգելու, այլ զհոգին. և չէ իսկ ճշմարիտ, թէ սիրան ցայնչափ ի մեղս գրաւի, կամ յաբակցի, ցորչափ ի սիրոյ արգարութեան ոչ առաջնորդի։

Լուծ՝ պատճառաւ։ Գործունեայ երկիւղն ՃԽԱՄՃԽ ժամանակաւոր պատժոց արտաքսէ զրգանապէս զայն՝ որ առաջնորդէ առ պատիժս. ապա ըստ Նմին օրինակի և գործունեայ երկիւղն յաւիտենական պատժոց։ Որ Նուազ. իսկարդ՝ ոչ միայն մեղքն արտաքուստ, այլ և ամ ներգործական ախորժակ կամ կամք մեղանչելոյ՝ առաջնորդէ առ յաւիտենական պատիժս. ապա գործունեայ երկիւղն գեհենոյն արտաքսէ զրգանապէս զամ ներգործական ախորժակ կամ զկամն մեղանչելոյ. որպէս գործունեայ երկիւղն ժամանակաւոր պատժոց արտաքսէր զկամն գողանալոյ, եթէ կամքն կրէր զպատիժս զրօրինակ արտաքինն գողութիւնն։

Առիցես։ Այսմ ձեռնարկութիւն զհետ գայ, թէ գործունեայ երկիւղ գեհենոյն արտաքսէ ևս և զունակական մեղս, և զնորա պարտաւորութիւն. զի սոքա ևս առաջնորդին առ գեհեանն. և ըստ այսմ առ արդարացուցումն անօգուտ են չնորհքն, և անօգուտ՝ խորհուրդն, որ է անուանդի. ապա։

Պիտեմ զսն. զհետև։ Ոչհետ գայ, թէ գործունեայ երկիւղն արտաքսէ զունակական մեղս՝ անընդմիջապէս, և ինքնին միայն, ուրմիջնորդութ ածային սիրոյ, կամ բարի կամք թողութեան ընդ խորհրդոյ, ընդս։ Երդ՝ գործունեայ երկիւղ գեհենոյն անընդմիջապէս և ինքնին միայն արտաքսէ զայս առաջնորդիչս ի գեհեանն, որք փակին ի մէջ անընդմիջական ներգործականութեանն կամ գործունէութեանն իւրոյ. այլ առ արտաքսելոյ զորս գերազանցին քան զանընդմիջական գործունէութեի իւր, ինդրէ զհարկաւոր նպաստս, և առ այնս չարժէ գործունէութեամբ։ Որ արդ՝ առ արտաքսելոյ զունակական մեղս, և առ ստանալոյ զարդարացուցումն, ոչ է բաւական արտաքսել զկամն մեղանչելոյ, այլ պահանջի և ևս առնել զիեղ՝ ըստ որում է չար, և արհամարհութիւն Աստ, որպէս ասացուք ստորև, որում չէ հնարաւոր առանց սիրոյ՝ դէթ բարի կամեցողութեան, և յայն սակս գործունեայ երկիւղն գեհենոյն չարժէ զմեղաւորն առ այս սէր, և առ խորհուրդն։ Հայց արտաքսել զներգործական կամս, կամ զախորժակ մեղաց, ևս և ըստ որում է արհամարհութիւն Աստ, անընդմիջապէս և ինքնին միայն կարող է երկիւղն՝ առանց ինչ նպաստից սիրոյն Աստ. վասն զի ի սոսկ անտարբերութիւն առ որ առանց ինչ սիրոյ նոր կարող եմ ի բաց թողուլ զկամս միւսանգամ զնա արհամարհելոյ, ևս առաւել՝ եթէ գիտիցեմ այսր կամաց լինել ինձ վնասակար։ Այս զոր օրինակ գործունեայ երկիւղն կախարանին ինքնին միայն՝ առանց ինչ նպաստից այլոյ՝ արտաքսէր զկամն մեղանչելոյ, եթէ կամքն պատուհասէր կախարանաւն. նոյնպէս երկիւղն գժոխոց ինքնին միայն արտաքսէ զկամս գողանալոյ, մինչ այս կամք պատուհասի գժոխային պատժոյ։ Որ արդարև զարմանք էր, թէ միայն մտածութիւն զարշութեան մեղաց հնար է ի բաց թողուլ զկամս միւսանգամ գործելոյ զայն, որ ստոյգն երևի մեզ, և չիցէ հնար՝ ի մտածութիւն յաւիտենական պատժոց։

Առիցես նախ։ Որն Գրոտիոս՝ ի բաղում տեղիս ուսուցանէ, թէ երկիւղն ոչ երբէք տրտաքսէ զկամն մեղանչելոյ. նոյնպէս և այլ որ Հաքք։ Որ ևս ուսուցանէ որն Գրոտիոս, թէ ցանկութիւն մեղանչելոյ ոչ արտաքսի, բայց եթէ սիրով արդարութեան, և ածային սիրով։ Այսպէս գրէ գիրք 2. գլխ. դ. հատառակորդին օրինակ. գլ. 7։ Այս։

Պիտեմ առաջնումն, թէ որն Գրոտիոս և այլ որ Հաքք խօսին զերկիւղէ, կամ որ անգործունեայ, կամ ծառայապէս ծառայական, կամ զերկիւղ ժամանակաւոր պատժոց, և կամ իմանան դհամբոյրս մեղաց ի կողմանէ զգայական բաղձանաց, և ոչ կամաց։

Պիտեմ երկրորդումն, թէ որն Գրոտիոս խօսի կամ ի մի արտաքսման՝ որ է ներհակ ցանկութեի մեղանչելոյ, և ոչ միայն պակասական, զրօրինակ մեկնեցաք ի նախագիտելս։

լնս. և կամ ասձայնն սերունդն և սերնդութեանն իմանայ զբարի կամս, կամ զի և իցէ բարեպաշտիլ ախորժակս կամից առ բարին, զորօրինակ բազում անգամ ի գործ ածէ. իսկ որ փախչէ ի մեղաց յերկիւղէ պատժոց, ունի զբարի կամս:

Ա՛ցիցես երկրորդ: Որք լինին յերկիւղէ, են ակամայ ըստ իմիք. ապա որ ցաւի ի վերայ մեղաց յերկիւղէ, պահէ զախորժակ առ մեղս:

Պէտեմ. զան. զառաջարկ: Որք լինին յերկիւղէ, են ակամայ ըստ իմիք, եթէ այս ակամայութիւն չիցէ առաչնորդ չարեացն՝ յորմէ երկնչի, ըռս. եթէ իցէ առաչնորդ չարեացն՝ յորմէ երկնչի, ուր: Ա՛նաղղ Նովին իսկ, որով ենթադրի լինել երկիւղին գործունեայ, պարտի բառնալ զնա առաչնորդս չարեացն՝ յորմէ երկնչի. և զի ակամայութիւն ի փախատական մեղաց, կամ ախորժակն առ այն, է առաչնորդ գնհննոյն, գործունեայ երկիւղ գնհննոյն պարտի արտաքսել զայն. զորօրինակ եթէ ախորժակն՝ զոր ունի վաճառականն առ վաճառս, կամ ակամայութիւնն՝ զոր ունի յընկենցիկ առնել զայնսոսիկ, լիներ պատճառ նուազութեանէ, երկիւղ նաւաբեկութենէն՝ եթէ էր գործունեայ՝ առաչնորդէր նմա ոչ՝ միայն յընկենցիկ առնել զվաճառս, այլև ի բաց տանել զախորժակն առ այնս, և ըստ հետևորդի՝ առ ի բաց բառնալ զակամայութիւն յընկենուլ զայնոսիկ:

Ասիպ. Նախ: Այն ախոմնա՝ ա՛. բ՛. և ը՛ Նմա համօրէն ածարանք ուսուցանեն ընդհանրապէս, և առանց ինչ բացառուած, թէ այնորիկ՝ որք լինին յերկիւղէ՝ են խառնեալ ի կամուտրէ, և յակամայէ. ապա մեք ոչ բարւոք ի բաց առնումք յայսմ ընդհանուր կանոնէ:

Պէտեմ զան. զառաջարկ: Այն ախոմնա ուսուցանէ ընդհանրապէս՝ և առանց ինչ բացառուելոյ, թէ այնորիկ՝ որք լինին յերկիւղէ՝ են խառնեալ ի կամուտրէ, և յակամայէ, խօսելով կերպարար զերկիւղէ՝ ըստ որում զօրութեանէ իւրով, և ըստ որում ի վերայ ածի յարտաքին պատճառէ, ընդու. խօսելով զերկիւղէ ըստ պատասխանի, և պատճառաւ նիւթոյն, այս է՝ յորժամ հանդիպի, զի կամք իմ, կամ ակամայութիւն է պատճառ պատժոյ՝ յորմէ երկնչիմ՝, ուր: Ա՛նաղղ յայնժամ թէպէտ և զնուռ ածնալ սոսկապէս զպատճառ երկիւղէ՝ պահէ զախորժակն առ մեղս, և զնոտի ծագեալ ակամայութիւն ի թողուլ զայն. սակայն քանզի այն ախորժակ առ մեղս, կամ ակամայութիւն ի թողուլ զայն, է հիմն և պատճառ արդար պատժոյ՝ յորմէ երկնչիմ, յայն սակս լը պատասխանի և պատճառաւ նիւթոյն՝ երկիւղն փոխէ զայն ախորժակ, և բառնայ զայս ակամայութիւն:

Ասիպ. երկրորդ: Որ ցաւի ի վերայ մեղաց յերկիւղէ գնհննոյն, ունի զայս թէական կամս, ոչ ցաւէի, կամ մեղանչէի, եթէ չէր գնհանեն. զորօրինակ վաճառականն յընկենցիկ առնելն զվաճառս ի ծով յերկիւղէ նաւաբեկութեանէ՝ ունի զայս թէական կամս. ոչ ընկենցիկ առնէի, եթէ չէր վերահաս նաւաբեկութիւն. ապա:

Պէտեմ ուր. զառաջարկ: Ա՛նաղղ գիտէ լոյ, թէ այն կամք է մեղք՝ և առաչնորդ գնհննոյն, Նովին իսկ՝ որով երկնչի գործունէաբար ի գնհննոյն՝ ի բաց դնէ զայն կամս, զորօրինակ եթէ թէական կամքն ոչ ընկենցիկ առնելոյ զվաճառս՝ եթէ չէր վերահաս նաւաբեկութիւն, լինէր առաչնորդ նաւաբեկութեանէ, զայն ի բաց դնէր վաճառականն, իսկ ոչ ի բաց դնէ, վասնզի գիտէ, թէ ոչ պատճառի անտի նաւաբեկութիւնն:

Ասիպ. երրորդ: Եթէ չէին գժոխք, ոչ ցաւէր. ապա ունի զկամս ոչ ցաւելոյ, եթէ ոչ էին գժոխք:

Պէտեմ զան. զառաջարկ: Եթէ չէին գժոխք, ոչ ցաւէր՝ յերկիւղէ գժոխոց, ընդու. յայլ ինչ պատճառէ, ուր: Կ՛ելի կարօղ էր ցաւիլ յայլ ինչ պատճառէ. քանզի որ ցաւի ի վերայ մեղաց յերկիւղէ գժոխոց, ոչ արտաքսէ զայլ պատճառս. նաև ոչ առնէ, և ոչ իսկ կարօղ է առնել զայս բաղդատութեամբ. ոչ կամիմ ցաւիլ ի վերայ մեղաց վասն սիրոյն Ա՛ստուծոյ, այլ միայն վասն երկիւղի գժոխոց, քանզի այն լինէր անկարգ, և մեղանչական. այլ ցաւի վասն գժոխոց, վերացուցեալ յայլմէ պատճառէ ցաւելոյ, որով գուցէ արդեօք շարժէր, և գուցէ ոչ: Ա՛յլ զորօրինակ ոչ է արժանի գովութեանն վասն բարի ներգործութեանէ, զոր գուցէ ելուզանէր, նոյնպէս և ոչ արժանի կշտամբութեանն վասն չար ներգործութեանէն, զոր գուցէ ելուզանէր:

Այս խնդիր ոչ ընդ երկար պատուղիմք. վասն ոչինչ նպաստէ գլխաւոր խնդրոյն ի վերայ բարեականութեանէ անկատար զրոյնն ըստ կարծեաց մերոց, զոր ունիմք արդ հաստատել. Ա՛նան-

պ՚անդի եդեալ, թէ ներգործական կամքն մեքանչելոյ արուեստի պակասաբար երիւղիւ, այն չէ բաւական առ այդպարագայումն ևս և ընդ խորհրդոյ· այլ պահանջի ներհակական արուեստումն, կամ առելութեի մեղայ՝ ըստ օրում է չար Աւգ, որում չէ հնար լինել առանց սիրոյ ինչ Աւգ, որպես և ցուցցուք։ Ի վերոյ այսր ասեմ եմ ես յայս կարծիս, թէ որք ուրանան զգործունէութիւն երիւղին յարուեստել զկամն մեղանչելոյ, խնդրան ի վն ներհակական արուեստման, և ոչ ի վերոյ պակասականին միայն, ըստ մտացն՝ զոր վերագոյնդ մեկնեցաք։

Պ Ր Ո Կ· Ի։

Ընդեռ առ արդարացուսոն ընդ խորհրդոյ՝ բառնան ե անհաւատ պնդեսն առն Էրիւղեղէն, ընդ որս հակառակ պահանջի սէր ինչ Աւգ, և ոչ պակասի։

Ց Օ Դ Ո Ի Ա Ծ· Ա։

Նախապէտքն։

Օ՚երկրին սէր Աւգ հնար է մտածել ի մէջ. այս է՝ զսէր ցանկութեի, որով կամիմք զԱ՚ծ իրրև բարի մեզ, և զերանութեի նմն խնդրելոք մեզ. և զսէր բարի կամեցողութե, որով կամիմք Աւգ զբարի, և զնմ երանութեի, և զկատարելութեի։ Ել այս ե կրկին. մի՚ բան իմիք, և ակդնաւորեալ, որ ասի պարզ բարի կամեցողութեան, և երկրորդ՝ պարզ և բացարձակ, որ ասի բարեկամական բարի կամեցողութեան, կամ բարեկամութեի. քանզի չին նոյն, ոյք կանխաւս քննեցաք ի պր. 4. բարի կամեցողութեին, և բարեկամութեին։ Բարի կամեցողութեին է սկիզբն նորա, կամ դործ. քանզի յայնմանէ զի կամիմք ուժք զբարի, տրամադրիմք սիրել զնա, և առ նա ունել զբարեկամութեի. այլև անտի՝ զի սիրելմ զոք, և ուզնիմք առ նա զբարեկամութեի, ծագի ի մեզ կամեցն նմա զբարի։ Ուստի ասէ Գիւոմնաս՝ բ. բ. ի. 27 պ. 2. առ 1. ասէ, թէ յորժամ առհմանէ փիլիսոփայն զսիրելն, թէ է կամել ուժք զբարի, առհմանէ զէրն, ոչ էպէտ զընդհանրական պատճառ նորա, այլ զնմ էրոս էիրէնտ առ բան նորա, յորում գեղապէս յայտնի սիրոյ։

Այդ՝ այս խոիր է ըստ սնոյն Գիւոմնայի ընդ մէջ բարի կամեցողութեի, և բարեկամական սիրոյ, զի բարի կամեցողութեին է պարզ ներգործուի կամոյ, որով կամիմք ուժք զբարի, առանց վերադարձ սիրոյ ի կողմանէ նի. այլ յորժամ սեռասնեմք զերկուս ըմբռնամարիս ի պայքարման՝ որք այլևայլ անձանօթ են մեզ, յորոց միասն կամիմք յաղթանակել. և օրինաւն պրն Գիւոմնայի ի նախապէտաւորեալ տեղոջ։ Իսկ սէրն բարեկամական, կամ բարեկամութեին՝ յաւելու ի վն բարի կամեցողութեանն զվերադարձ սէրն, կամ զփաւորութեի ամօժակաց առ միմեանս. ռանդէ բաբելոնն ե բաբելոնին բաբելոնի, այլ ասի ի հաստատակաց առածի։

Այլ առ հաստատակ յանձարանից նշանակին երեք պայմանք պահանջնալք առ բարեկամութեին։ Ցայն՝ զի իցէ սէր բարի կամեցողութեան, և ոչ ցանկութեի։ Երկրորդ՝ զի իցէ փոխադարձ։ Իւ երրորդ՝ զի հիմնեցի յիմիք հաղորդականութեի, եթէ ընչից, եթէ գաղտնեաց, եւն. ընդ մէջ բարեկամաց։ Իւ ըստ այսմ բարի կամեցողութեին և բարեկամութեին միաբանին յատաչնում պայմանի, և տաբերին յերկրորդին, և յերրորդին։

Վիտել պարտ է և ևս ըստ նմին սնոյն Գիւոմայի՝ ք. բ. ղ. 23. պ. 1. թէ ածային սէրն է հապես բարեկամութեի մարդոյ առ Աւգ, և այս կարծիք է հաստատակաց, և ցուցաք վերջ. 1. ի վն ածային սիրոյ. պ. 11։

Այ այսորիկ առ ի լինել սիրոյ ինչ՝ ածային սէր, ըստ նմի նոյն պայմանք պահանջին, որք պահանջին առ բարեկամութեին։ Ցայն՝ զի իցէ սէր բարի կամեցողութեի։ Երկրորդ՝ զի իցէ փոխադարձ, այս է՝ զի ի կողմանէ Աւգ իցէ և սէր ինչ բարի կամեցողութեի առ մարդ։ Իւ երրորդ՝ զի փոխադարձ սէրն այն հիմնեցի ի հաղորդականութեի երանութեի, ըստորում սէրն ածային Աւգ գոլով գերբնական և արգասաւոր, յատաչ ածէ ի մեզ զընդհարս, որ է հաղորդութի ածնէրէն բնութեի, և որով լինիմք որդիք Աւգ, և ժառանգք երանութեան նորա։

Իսկ եթէ հարցցի ՚ի վե՛ր լսելոցն կերպարար ՚ի խոստովանութեանն, այս է՝ արդեօք զայս ինչ կամ զայն ինչ լռենալ իցէ ՚ի խոստովանութեան, բաշումբ դնեն, թէ ոչ է կարօղ պնդել, և առաւել ևս՝ և ոչ երդնուլ, թէ ոչ գիտեմ. վեզի կիսէ նովին եղանակաւ՝ որով հարցանի, այլ թէ պարտի պնդի տալ, թէ այն հարցումն է ամբարիշտ, որում ոչ ստորասարար և ոչ բացատարար արժան է պնդի տալ։

Ասեմ մակաբերել երրորդ, եթէ երկու ամանք, որք զխոստովանութեանի ապաշխարողին լռեան, ոչ են կարօղ զլռենալ մեղայն խօսիլ ընդ միմեանս, ևս և յօգուտ ապաշխարողին. վեզի թէպէտ երկոցունն ևս են ծանուցեալ մեղքն, սակայն ոչ են ծանուցեալ արտաքոյ խորհրդական ծանօթութեանէ, և ոչ իսկ կարօղ են ՚ի բաւանել՝ զի լինիցի արտաքոյ խորհրդական ծանօթութեան. և ըստ այսմ վակեալ ասեան ընդ կնքով խոստովանութեանէ։ Ա՛յ սոյն պատճառի նա՝ որ զհրապարակական մեղս լռեալ՝ ոչ է կարօղ խօսիլ զայնմանէ իբրև զլռեալ ՚ի խոստովանութենէ։

Ասեմ մակաբերել չորրորդ, թէ խոստովանահայրն, որ ոչ է կարօղ խոստովանիլ զմեղս իւր՝ առանց յայտնելոյ զխոստովանութենէն եղեալ նմա, պարտաւորի լռել զայնմանէ։ Վարձեալ՝ ժողովրդապետն, որ միայն ՚ի խոստովանութենէ ծանեալ զարդելս ընդ մէջ փիսայիին և հարսին, պարտաւորի զնա պահել, եթէ ինդրեսցեն արտաքոյ խոստովանութենէ. և զայլ բազումս, որք ՚ի սոցին սակի։

Ասեմ մակաբերել հինգերորդ, թէ յայտնութենին ներելի մեղաց է մեղք մահուանի. քանզի թէպէտ և անտի ոչ լինի ծանր անիրաւութեի ապաշխարողին, սակայն լինի խորհրդոյն, իբրև է հակառակ նշանակութե և սրբութեն նմի, և լինի առելի զեթ ըստ ներելի մեղաց, վակ չիք աստ թևևութիւն նիւթոյ. և միայն մեղանչէ ներելի մեղօք յանխորհրդածութենէ, զորօրինակ եթէ քահանայն խօսեսցի զայնցանէ՝ զորս լռեալ ՚ի խոստովանութենէ, ոչ միտ եդեալ՝ եթէ գիտէ զայնս ՚ի խոստովանուէ, այլ համարի խօսիլ զայնս իբրև այլուստ գիտացեալ։

Խնդրիցես։ Զի՞նչ խոստովանութե ծագի պարտաւորութեի կնքոյ։

Պնեմ։ Ծագի յայտ և միայն ՚ի խորհրդական խոստովանութենէ. վեզի է յատկութի խորհրդական խոստովանութե, և յայն սակս ամի և միայն խորհրդական խոստովանութեն պատշաճի։

Ընդ՝ համարի խորհրդական խոստովանութիւն, որ լինի նմա՝ որ ունի, կամ համարի ունել զնշխանութեի արձակելոյ, դիտաւորութի ամբաստանելոյ զանձն լինել մեղաւոր, և զմեղս իւրներոյ արկանել փականաց ևկեղեցւոյ, թէպէտ և ոչ եղեցի արձակութի։

ՊԻՒԿ Ր։

Զի՞նչ պարտիւն ինչ խոստովանութե։

Ասելի է (1)։ Ինչիւն խոստովանութե տարածի ուղղակի առ այն ամ միայն, զորոց է խորհրդական խոստովանութենէն. այս է՝ առ ամ մեղս՝ եթէ ՚ի մահու չափս, և եթէ ՚ի նվաստս լիս, յառարկայս նոյ, ՚ի մեղսակիցս, և յայլ ի՛ նշ և իցէ պարագայս. վեզի կինքն է յառակցեալ իմն խորհրդական խոստովանութե, և որ յատակցի ընդ իմիք խորհրդոյ, ոչ ձգի ուղղակի արտաքոյ նոյ։

Իսկ անուղղակի (2) տարածի առ այնոսիկ, որք թէպէտ և ոչ անկանին ընդ խորհրդական խոստովանութենէ, սակայն նոքաք հնար է գալ ՚ի ծանօթութենէ մեղաց կամ մեղանչողին, և առ այնոսիկ, որք ըստ ինքեան կի՛ ըստ պատճառն կարօղ են զչիրութե, զամենի, զշար կատածանս, կի՛ զվնասինչ ծնունիլ ապաշխարողին կամ այլոց. այս է՝ ըստ այսր ընդհանուր պատճառի, զի եթէ ոչ այսպէս՝ խորհուրդն լինէր ատելի և լքեալ։

Ա՛յ այսորիկ անկանին ընդ կնքով, ոչ միայն ամ մահուչափ և ներելի մեղք, առարկայք նոյ, մեղսակիցք, և այլ պարագայք, ոմ և ասացաք, այլև ապաշխարանքն եղեալ ՚ի վերայ անտրամադրութեի ապաշխարողին, բացատրի արձակմանն կամ թղթոյ խոստովանութենէ, և որք սոցին նմանք, որք անուղղակի յայտնեն զմեղս։ Իսկ ևս պակասութիքն եթէ բնականք, և եթէ բաբշյականք, և ինձնութիք, միայն ՚ի խոստովանութենէ ծանուցեալք, յորոց յայտնութենէն գժդմի ապաշխարողն։

(1) Ինդ՝ պ. 2. բաղ. (2) Ինդ՝

Խոցոտելին համառօտիւ ի սուտ ի:

Այլ համառօտի ձեզ՝ եթէ ի սէր, և եթէ ի տնաւակի. վայ բռնաւարէ զինքն՝ ոչ միայն որ յայտնէ զայս կամ զայն մեղս Տիտոսի, այլ և որ ասէ, թէ նա խոստովանեցաւ զմի կամ զբազում մահուղտի մեղս, զվերապահելոյ դիպուածոց, կամ զբանագրանս: Կարձեալ՝ եթէ լուծեալ յատնէի զմեծ ինչ մեղս՝ ապաշաւիկեսցէ, կամ մեծամասն յոգւոց հանցէ ի լուր այլոց: Այս ևս՝ եթէ ասացէ, թէ յիմիք աւգուտ, կամ ի հասարակութիւն որ ոչ ընդարձակ, ի գաղթոյն, ի մենաստանի, կամ ի բոլոր ևս միաբանութիւն՝ գործին մեծամեծ յանշանձանք. զեղի անտի վատահամբաւ լինի հասարակութիւն, և այն վատահամբաւութիւնդ յանդամս նր, և առնէ զխոստովանութիւն ատելի. այլ ոչ՝ եթէ զբազմամբոխս քաղաքէ, գաւառէ, զթաղաւորութիւնէ՝ ասացէ, թէ գործին ի նմ մահուղտի մեղք:

Իսկ պատմելն զուռնալ մեղս ի խոստովանութիւն, ոչ նշանակելով ոչ ուղղակի և ոչ անուղղակի զգործօղս, միայն բարոյապէս խօսելով՝ չիցէ հնար գալ ի ծանօթութիւն, ոչ է բռնաւարել զինքն: Այլ սակայն ի բաց առնալ զօգուտ խնդրելոյ զչրահանգութիւնս և զխորհուրդս, հրաժարել պարտ է յայսպիսի պատմութենց և ի խօսակցութենց. մի զի պարզամիտք գայթագղին, համարիալ՝ եթէ անտի բնկանի կինքն խոստովանութիւն. և երկրորդ՝ զի վատնգի յայտնութիւն, որում հնար է հանդիպել, և երբեմն ևս հանդիպի ի պատմութենց խոստովանահօրն ասացելոյ ի զանազան տեղիս, և ի զանազան ժամանակի:

Այ նեբէլ ձեզ՝ ի տնաւակի, և ոչ ի սէր. Նմին իրի բնկաներ զինքն, որ ասէր, այս ոք խոստովանեցաւ ինձ զայս կամ զայն ներելի մեղս. զեղի ոմն վերագոյն ասացաք՝ չիք ինչ ատ թեթևութի նմանոյ: Այլ ոչ՝ եթէ ասէր. խոստովանեցաւ ինձ զներելի մեղս. զեղի անտի ոչ գժկամանի ապաշխարօղն, որում հնար յայտնի է, թէ խոստովանութիւնն ոչ լինի առանց գէթ ներելի մեղաց. Նմին իրի նոյն է՝ թէ ասէր, եթէ նա խոստովանեցաւ ինձ: Այսպէս ոչ է կարօղ ասել զնոյնսդամ և զնոյնժամայ ներել ձեզ. Այլ զեղի այն ոչ զհնար գայ խոստովանութենէ:

Առաքելոյ մեղաց. զորօրինակ եթէ ապաշխարօղն խոստովանեսցի, թէ վատաբանեցաց Քէ զայն ոք օրհորդ յղացեալ, կամ զդաղութի կամ զմարգասպանութի Տիտոսի. մեղք օրհորդին, և գողութի Տիտոսի անկանին ընդ կինքով, իբրև զպարագայս խոստովանելոյ մեղացն: Այս թէպէտ ասեն ոմանք, թէ՝ եթէ այն մեղք խոստովանողին իցեն հրապարակական, ոչ անկանին ընդ կինքով, մեզի ապաշխարօղն ևնթադրէ ծանուցեալ զայն ամենացուն, նմին իրի և ոչ կամի զայն փակել ընդ կինքով. սակայն ոչ համարիմք, թէ խոստովանաւորն կարէ խօսել զայնցանէ իբրև զծանուցեալոց ի խոստովանութենէ: Այլ համարիմք կշռամբելի զնա, որք ի ծագել գայթագղուն ի տեղւոջ ուրեմն, ասեն՝ (ոչ յաճախ հանդիպի) լսելիք խոստովանաւորաց հանապազ տանջին ի վատաբանութենց ընդդէմ այսր գայթագղութենէ: Այեղուկն, եթէ յիւրաքանչիւրի ի խոստովանութենէ յայտնեալ. և այլ պատճառք, թէպէտ և չիցեն հարկաւ ամրաստանելի, այլ ապաշխարօղն մոլորութենէ համարիցի, թէ պարտ է ամրաստանել զայնոսիկ, եթէ նմին կամ այլում պէտք իցեն ծածկել զայն: Իսկ այլքն ի խոստովանութենէ պատմելոք, այլ անպատճառք խոստովանութենէ՝ ոչ անկանին ընդ կինքով:

Ապաշխարանք ի վերնբերեալ. այս է՝ եթէ իցէ ծանր, և զոր սովորութի է դնել ի վերայ մահուղտի մեղաց. զեղի ի յայտնութենէ նր ճանապհի ապաշխարօղն մեղսցեալ մահուղտի մեղաց: Այս ևս՝ անարամարբութենէ ապաշխարողին, և բացառութենէ ապաշխարողին ի նորին պատճառս: Իսկ ուր սովորութի է տալ զերազգի խոստովանութենէ, խոստովանահայրն ոչ է կարօղ առանց բռնաւարութենէ կինքոյ ժխտել զայն ապաշխարողին, զոր ոչ արձակեաց, ոչ պարտ արդեօք գրել, թէ արձակեցի, այլ պարզապէս՝ թէ լուայ զխոստովանութենէ այս ինչ անձին:

Պարտաւորէ՝ ընդ քահանայ, և ընդ բարեպաշտօնայ՝ միայն ի խոստովանութենէ ծանուցեալք, զորօրինակ լինել պատնէորդի, ներքինի, կեղծեալ ազնուական, յազգէ հրէից, կամ ի մոգուց, անգէտ խորհրդոց կրօնին, անկանոնական առանց յանցանացդ, աղքատ, պարտապան, անհմուտ իւրում արհեստի, խճճմուտ, և որ ի կարգին. միշտ ի նոյն սկզբնէ, թէ այլազգ՝ խոստովանութենէն լինէր ատելի: Ասացաք, դարձ ի խոստովանութենէ ծանուցեալք

վիճակ եթէ այլուստ ծանիցէ խոստովանահայրն զայսոսիկ պակասութիւնս, կարող է խօսիլ զայնցանէ ըստ ծանօթութեանն՝ զոր ունի արտաքոյ խորհրդական ծանօթութենէ։ Օգտ ասել պարտ է և զմեզս։

Խնդրիցես նախ։ Արդեօք խոստովանահայրն կարօղ է դնել գՀրապարակական ապաշխարութիւնս, որում գՀետ գայ անուղղակի յայտնութիւն խոստովանութենէ։

Պէտք, թէ ոչ, բայց եթէ ի յօժարակամ ընդունելութենէ ապաշխարողին։ Յայտ է յաւացկլոցս։

Խնդրիցես երկրորդ։ Արդեօք խոստովանահայրն կարօղ է դնել ապաշխարանս՝ սպառնալով չտալ զարձակումն, զոր դատի հարկաւոր՝ եթէ առ զգաստութիւն անցկոյին, և եթէ առ զգուշութիւն ապագային, զորօրինակ գՀատուցումն, գՀրաժարումն ի պաշտօնէ, զարձակելն զհզիեն, կամ զայլ մերձաւոր առիթս, և զորս ի կարգին, որում գՀետ գայ անուղղակի յայտնութիւն խոստովանութենէ։

Պէտք, թէ այո. վիճակ յայնժամ ոչ այնչափ խոստովանահայրն դնէ զպատուէր ի վերայ ապաշխարողին, որչափ յայտ առնէ զպարտաւորութիւնն, որ է ի նմա, առ որոյ կատարումն ունի իրաւունս ստիպելոյ զապաշխարօղն, և և բացայայտութիւն արձակման, ոչզի նա ըստ իւրում պաշտօնի ըստ պարտուց վարիցի։

Խնդրիցես երրորդ։ Արդեօք գաղտնիքն հաւատացեալ և ընկալեալ արտաքոյ խոստովանութենէ ընդ կնքով խոստովանութենէ, իրաւ՞ պէս անկանին ընդ կնքով խոստովանութենէ։

Պէտք, (1) թէ ոչ. վիճակ կնիք խոստովանութենէ միայն խորհրդական խոստովանութենէ գՀետ գայ։ Եւ ոչ ոք կարէ դիւրաւ ըստ այսմ հաւատալ ինչ ումեք, կամ ընդունիլ. զի որովհետև ելինչ գաղտնիք կարօղ են հաւաճարաչափ գտանիլ գաղտնեաց խոստովանութենէ, այն լինի դժուարաւ առանց անյարգութենէ ինչ խորհրդոյն։

Գ Ր Ա Կ Ա Ն։

Որ պատասխանին ինոյ խոստովանութենէ. և ըստ արքեպս հրամանաւ խոստովանողին կարօղ է յահեռանալ զինքն ի ծանուցանելէ այլոցմ։

Պանելի է նաև։ (2) Տիրապէս խօսելով, կամ սկզբնապար և գլխաւորապար պարտաւորի միայն քահանայն, վիճակ նա միայն է պաշտօնեայ այսր խորհրդոյ, ընդ որում յարակցեալ է կնիք։ Իսկ երկրորդապար և հաղորդակցութենէ պարտաւորին ամենեքեան, առ որս ծանօթութենէ խոստովանութենէ զնարդ և իսկ ժամանէ. վիճակ զորօրինակ նիք, առ որս ծանօթութենէ խոստովանութենէն ժամանէ, հաղորդակցին իմիք ներգործութենէ խոստովանութենէ, նոյնպէս և հաղորդակցին իմիք կնքոյ յարակցելոյ ընդ խոստովանութենէ։

Ըստ ունիս մնակարելի նախ, թէ պարտաւորի կնքոյ՝ ոչ միայն ճշմարիտ խոստովանահայրն, այլ և կեղծաւոր. զորօրինակ եթէ աշխարհական ոք, կամ քահանայ՝ որ չունիցի զնրաւարութենէ, կեղծաւորեալ զանձն իրրև զխոստովանահայր՝ լուիցէ զխոստովանութենէ. վիճակ այնպիսի խոստովանութենէն ի դիտաւորեալ ապաշխարողէն է խորհրդական, և կարգեալ առ խորհրդական արձակումն, թէպէտ և մոլորութիւն գործոյ չիցէ իսկական։

Երրորդ՝ պարտաւորի թարգմանն հաղորդակցեալ ընդ խոստովանահօրն ի նմին ներգործութենէ խոստովանութենէ։ Այսպէս նա՝ որ գրէ զխոստովանութենէ համբաւի ուրուք կամ զբարկամի։

Չորրորդ՝ պարտաւորին նիք, որք լսենն՝ եթէ դիպուածով, և եթէ կամովին և հնարիւք՝ ոչ առանց ծանր անհրաւութեան խորհրդոյն, զխոստովանութենէ այլոյ. և նիք՝ առ որս զայնոսիկ սեղանակապութենէ յայտնեն, թէպէտ և յայտնութենէն առ անհամարս անցցէ, վիճակ իրն անցանել ընդ պարտաւորութենէ իւրոյ։ (3) Օգտ ասել պարտ է և գնոցանէ, որոց խոստովանահայրն ևս և հրամանաւ ապաշխարողին յայտնէ, բայց եթէ այլազգ բացատրեսցէ զմիտս իւր ապաշխարողն։

Հինգերորդ՝ պարտաւորին վերնագրեալն, յորմէ ապաշխարօղն ինքնին կամ միջնորդութենէ խոստովանահօրն խնդրէ արտաքոյ խոստովանութենէ գՀրաման արձակելոյ ի վերապահելոյ. վիճակ այն խնդիր հրամանի է սկզբնաւորեալ խոստովանութենէ, և զայն ծանօթութենէ, զոր վերնագրեցաք էառ ի խոստովանահօրէ, նա ինքն խոստովանահայրն էառ ի սկզբնաւորեալ խոստովանութենէ։

Հինգերորդ՝ պարտաւորին՝ ըստ բաղմաց, որք ըստ

(1) Ինդ՝ տա 2։ (2) Ինդ՝ պ. 3. Բոլ։ (3) Ինդ՝ պ. 4. տա 4։

ը դիպուածոյ կամ դիտմամբ ընթերնուն զգրեալ խոստո[վա]նութեանն ուրուք՝ եթէ զարա-
րեալն և եթէ զառնելին. վասն այն գրութեի է
իրրև պատգամաւոր մեծաց. և է կի սկըզ-
բնաւորեալ խոստովանութե, կամ փոխանակ
եղեալ խոստովանութե։ Այլց այլք ևս հաւա-
նականաբար ուրանան զայս. վասն այս գրութե
ոչ է տիրապէս խորհրդական խոստովանութե,
այլ գոծիք կամ պատրաստութե առ այն՝ և-
թէ առ ի նպաստ յիշողութե. զորօրինակ
եթէ ոք ի պատրաստել զանձն առ խոստով-
նութե՝ ձայնիւ ասէր զվնաս իւր, կամ խորհ-
դակիցէր վ առնելոյ զխոստովանութե, ունկն-
դիրն՝ կամ խորհրդակիցն ոչ պարտաւորէր
կնքոյ խոստովանութե։ Արդ՝ թէպէտ այսպէս
երևի զմտաւ ածեալ զերն փիղիգապէս. բայց
գուցէ այլազգ երևեսցի, եթէ զմտաւ ածցի
իրն բարբոյապէս, և հայեսցի ի հաստակաց
միտս։ Վասն սցի խոհեմ ընթերցօղն։

Ասեմք, թէ արդեօք նա ինքն ապաշ-
խարօղն պարտաւորի կնքոյ։ Պիտեմ, թէ ոչ։
Ասելի է երկրորդ։ (1) Կարօղ է քահա-
նայն՝ բացայայտ և յաժարակամ հրամանաւ
խոստովանողին՝ զվնաս նորա ծանուցանել այ-
լոցն։ Զոյց։ (2) Զայն սակս քահանայի պար-
տաւորի թագուցանել զխոստովանեալ մեղս,
վասն գաղտնեացն է ի հարկաւորաւէ խորհր-
դոյն, ըստ որում գիտէ զայն իրրև Աստ, կամ
ըստ որում փոխանորդ Այ։ Ակարդ՝ խոստով-
նօղն հրամանաւն զոր տայ ի ծանուցանել զայն,
եթէ տացէ զայն ի խոստովանութե, և եթէ
արտաքոյ խոստովանութե, առնէ, զի զայն՝
զոր քահանային գիտէր իրրև Աստ կամ իրրև
փոխանորդ Այ, այնուհետև գիտացէ
իրրև մարդ. ոչ եթէ առնու զնոր ծանօթուի,
ոչ ուղիղ նշանակէ Աղբիոս, այլ վնաս է նորոգ
եղանակ ծանօթութե, որով զայն զոր գիտէր
խորհրդաբար և ըստ որում փոխանորդ Այ, այ-
նուհետև գիտէ մարդկային ծանօթութե. զոր-
օրինակ որ լսէ ինչ ընդ բնական գաղտնեաց,
եթէ նա որ ասաց զայն՝ արձակեսցէ ի կա-
պանաց գաղտնութե՝ առանց միւսանգամ
պատմելոյ նմա զայն, կարօղ է նա առանց մե-
ղաց յայտնել։

Հաստատի։ (3) Որ կարօղն է ինքնին առ-
նել ինչ, կարօղ է ևս առնել միջնորդութե
այլոյ. իսկարդ՝ խոստովանօղն կարօղ է զմեղս
իւր ինքնին յայտնել այլոմ. ապա կարօղ է
և միջնորդութե քահանային։

Ասացաք, Թէպետ և յօժարակամ հրամա-
նաւ. վասն ոչ է բաւական լուծեայն, երկ-
բայականն, մեկնողականն, կամ ընթադա-
տականն. և ոչ բնի, նենգութե, անգէպ
թախանձանաւք, կամ առ երկիւղ չարգութե
կորզեալ։

Ասի ունիս խմաստասիրել, թէ խոստովա-
նահայրն բացայայտ հրամանաւ ապաշխարողին
կարօղ է յայտնել ոչ միայն զմեղս նր, այլ
և զմեղս մեղսակցին՝ առ բարի ինչ վախճան,
զորօրինակ առ ուղղութի նր։ Զայս՝ վասն
կնքոյն է գլխաւորաբար և սկզբնաւորաբար յօ-
գուտ խոստովանողին. արդ՝ եթէ առ հրաժա-
րի յիրաւանց իւրոց, չէք պատճառ, թէ առ
ինչ մեղք մեղսակցին պահեսցէ զերաւունս կըն-
քոյն։ Երկրորդ զի ապաշխարօղն տալովն
զհրամանն, առնէ զմեղս իւր լինել արտաքոյ
խորհրդոյ, և յայն սակս ոչ ևս ընդունակ կըն-
քոյ. նմին իրի և ոչ մեղք մեղսակցին։

Այլ սակայն՝ (4) քզի, ոմ ասէ Աբն Յով-
սես, սաստիկ պատուէր է ի վր քահանայից
ցուցանել զհրամանն տուելի, եթէ լծցի ամրաս-
տանութե ի վր բնկման կնքոյն, և քանզի մե-
ծամեծ գժուարութե մարթին զհետ գալ
յայտնութե մեղաց եթէ ապաշխարողին, և եթէ
մեղսակցին՝ ի ձեռն խոստովանահօր, չէ պարտ
նմա դիւրաւ ընդունել զայս պարտաւորութե,
այլ միայն եթէ ստիպեսցէ հարկաւորութե
կամ մեծագոյն օգուտն, և նա ինքն ապաշ-
խարօղն՝ կամ այլ ոք զայն ոչ իցէ կարօղ կա-
տարել։ Եւ յայս դիպուած զայն հրամայեն,
որչափ ինչ հնար է, ոչ ընկալցէ՝ ի խոստովա-
նութե, այլ արտաքոյ և գրով։

Ասդրիցես։ Արդեօք խոստովանահայրն կա-
րօղ է խօսիլ ընդ նմին ապաշխարողի զյուշել մե-
ղացն ի խոստովանութե առանց հրամանի նո-
ցա։

Պատասխանեմ նախ։ Կարօղ է ի նմին
առնել, այս է՝ ի յաջորդ խոստովանութե,
եթէ այն վերաբերի յուղղութի առաջիկայ
խոստովանութե և դատաստանի. զի
պէտ միայն առաջիկայ մեղքն են ուղղակի նիւթ
առաջիկայ խոստովանութե, սակայն անցեալքն
ըստ որում վերաբերին յուղղութի առաջիկայ

(1) Աստ՝ գ. 4. բաղ։ (2) Աստ։ (3) Աստ՝ ի յիւրաքանչ. այլ ընդդ։ (4) Աստ՝ առ 3։

խոստովանութեան, և զատաստանի, առ այն անուղղակի պատկանին. և այս է սովորութիւն երկիւղած խոստովանահայրց, որք զապաշխարօղս կշտամբեն վասն վերստին յանցանելոյն, նաև վայրապար յորդորեաք զապաշխարօղս՝ միշտ զնոյն խոստովանահայր ունիլ, եթէ սա պարտ էր վարիլ՝ ոչ եթէ ոչ գիտեր զանցնել խոստովանութիւնն։

Այլ ասացաք, երկն այն վերաբերի յատկութեանն ապաշխարողին և զապաստանի. վասն այնորիկ՝ քան նախընթացքն զատաստանն է արձակել, և ոչ անցնել մեղքն վերաբերին՝ ոչ ննջեցեալքն առ աւաջիկայ խոստովանութիւն, ոչ տեսանելիք, թէ որով իրաւամբ խոստովանահայրն կարող իցէ զգեղել զնիշղուի նշ. և առաւել՝ զի բնածին է այնմ պատճառել վասն եթէ ապաշխարողին, նմին իրի՛ և զարհուրանս խորհրդոյն։

Պատասխանեմ երկրորդ։ Խոստովանահայրն ոչ է կարող արտաքոյ խոստովանութեան խօսիլ ընդ ապաշխարողին զյանցն ի մեղացն ի խոստովանութեն՝ առանց հրամանի նր. վասն եթէպէտ այն ոչ է իրաւն բնականել զինքն. քանզի բնական կնքոյ է բռնաբարութի գաղտնեաց, արդ ոչ բռնաբարէ զգաղտնիս՝ որ խօսի ընդ նմա՝ որ ծանոյց զգաղտնիս, այլ որ խօսի ընդ այլոց. սակայն բնածին է նմա պատճառել պատկառանս ապաշխարողին, և առնել առնել զխորհուրդն։ Եւ յայն սակս համարիմք ընդեմ ասելոց, եթէ և այս ոչ է օրինաւոր, եթէպէտ և լիցի ի դարմանել զգինսուի նախընթացս խոստովանութեն։ Այլ յայս դիպուածս պարտ է խոստովանահօրն վերստին կոչել զապաշխարողն յատեան խոստովանութեան, կամ հնգրել զհրաման խօսելոյ զնաստովանութէ։

Ասացք գիտել արժան է նախ, զի եթէ նա ինքն ապաշխարողն արտաքոյ խոստովանութեն նախ առաջին խօսեցեալ խոստովանահօրն ի վերստին խոստովանել մեղացն, կարող է ևս խոստովանահայրն խօսիլ զայնցանէ ընդ նմ. վասն յայնժամ տայ զհրաման ի գործածել ներգործութեն։

Գիտել արժան է երկրորդ, զի անընդմիջապէս զինչ արձակմանն խոստովանահայրն կարող է առանց և ևս հրամանի խօսիլ ընդ ապաշխարողն զնոյն ի մեղացն ի խոստովանութեն. վասն բարոյապէս տեսանելոյն տեւէ նոյն գատաստան։ Այլ ոչ, եթէ ապաշխարողն մնինալ իցէ, և կի՛ այլ զոյգք ընդ մէջ անկնալ իցեն։

Գ Լ Ո Ւ Խ Ը Գ.

Երբեմն արգելու է վարել ծանօթութիւն, որ ի սուկ խորհրդական խոստովանութէ ընկալեալ։

Սացաք. Որ ի սուկ խորհրդական խոստովանութէ ընկալեալ. վասն եթէ խոստովանահայրն զծանօթութի խոստովանել մեղացն այլուստ ունիցի, կարող է վարիլ նովաւ. որովհետև ոչ պարտաւորի թագուցանել զնոսա, բայց եթէ ընդ որում լուեալ ի խոստովանութեն. սակայն պարտի այնպէս վարիլ՝ ոչ եթէ չէր լուեալ զնոստովանութի, ոչինչ յաւելեալ ի վն նորին՝ զորս այլուստ ծանեաւ, և ոչ պնդագոյնս հաստատել՝ ք զորս ծանեաւ արտաքոյ խոստովանութեն. ապա թէ ոչ՝ բռնաբարէր զինքն։ Օրինս կանխաւ ծանուցեալ՝

Ասելի է նախ։ Ոչ երբէք է արժան վարիլ ծանօթութէ խոստովանութեն, եթէ իցէ վտանգ յայտնութեն ուղղակի կամ անուղղակի, և կամ եթէ զկնտ գայցէ գժգոհութի ապաշխարողին կամ այլոց. վասն անտի խոստովանութէն լինի առնել և զարհուրելի։

Ընդ զայսօրինակ լուծանել երբ Ժողովն Ըհնաւ քննաւ ի 18 Նոյեմբերի յամին 1682. սահմանեաւ՝ թէ զգործածութի գիտաւ խոստովանութէ ք գժգոհութէն ապաշխարողին, թէպէտ և չիներ վտանգ յայտնութի, ամենևին արգելոյ պարտ է, թէպէտ և յոչ գործածուէ այնպիսի գիտաւն մեծագոյն ևս գժգոհութի պատահեցի այլոց, կամ ևս և ապաշխարողին։ Ընդ որ այսր պատճառի Կղիմէս ութերորդ ի վճիռն տուեալ ի 26 Այպրիլի յամին 1594. պատուիրեաց, զի՝ ինչ ընդունայնեալքն որ էին ի ժամանակին, և նիւթ խոստովանութեան՝ որ յինչ այնոցիկ ծանանելոյ էին յատնիցն ինծաւորութէ, առ գնուով ընդեր, զի ոչ նուիրն ծանօթութէ ընդ ընդունեալ ի խոստովանութէ պատան, առ արտաքին խոստովանութէն ընդունեալ։ . . . նաև պարտ ոմն էին ինծաւորաց ի՝ նաւորաց՝ ով որ էին նմ, պատուիրելոյ պահել։ Իսօսի ի վճռի անդ՝ ոչ յայտէ ի վն սուկ մեծաւորաց կրօնաւորաց, գեթ բացայայտ։

Ասելի է երկրորդ։ Եթէ չգոյցէ վտանգ յայտնաւ, և չիցէ հնար գնետ գալ գժգոհութէ ինչ ապաշխարողին կի՛ այլոմ, արժան է վարել գիտաւն, որ ի սուկ խորհրդական խոստովանութէ ընկալալ, վասն այսպիսի գործածութի ոչ հա-

հակառակի կնքոյն, և խորհրդոյն՝ զայլ ապաշխարողին ոչ է կարօղ վնասել, այլ օգնել կարօղ է։ Այնմին իրի՝ խոստովանահարք զօրհնաւապաղ վարին նոցին ծանօթութիւն, զորօրինակ յաղօթել վճռ ապաշխարողաց, ի քննել զնզկայական և զինձառել դիպուածս՝ զորս լսեան, և ի մարզել զանձինս, և ի զգուշացուցանել զանձինս յեղեմ նոյնօրինակ յանցանաց, և յորս ի կարգին։

Հաւաստին եզբակացութենէ անտի ունիս մակաբերել, թէ մեծաւորն կամ խոստովանահայրն ի սոկ ծանօթութենէ խոստովանելեան ոչ է կարօղ ի գործ ածել զանհաճոյ ներգործութիւս ապաշխարողին, կամ այլոյմ, եթէ հայհոյեցին յարդարութիւն, եթէ յանդգնին սէր, եթէ յաղագնածութիւն, և եթէ ի քաղաքականութիւն, զորօրինակ է ցուցանել զնաժոռանդիմութիւն, խստագոյնս խօսիլ, խոյս տալ ի խօսակցութենէն, առաքել յայլ տեղի, ժխտել զհրաման երանելոյ պատարաց, զպարտութիւն, զկարգս, պատասխանել ի տանէ, զորօրինակ զընտանի գործն, բառնալ ի պաշտօնէ, զանալ զբաժէն յընտրութենէ ինչ, և որք ի կարգին։

Այլ չէ ինչ այն, թէ գուցէ ապաշխարօղն ոչ իմասցի լինել պիտի ի ծանօթութենէ խոստովանութենէ, և ոչ բնկճի կնքէն. շատ է այն՝ զի կրէ զդժգոհութիւն. քանզի եթէ գիտէին հաւատացեալք, եթէ հնար է լինել այնոյիկ օրինաւորապէս ի խոստովանութենէ իւրեանց, յայնմանէ ամենեին աշխարհ լինէին։

Այլ մեծագոյն գժոխարութիւն է ի վր ներգործութենց, որք ոչ ի գործ ածին ուղղակի շուրջ զապաշխարողսն, այլ շուրջ զարտաքին խափանօք մեղաց նր։ զորօրինակ գուշացոյնս պահել զինչս իւր, փոխել զիմականս, պահել զբանսիս առ իւր, փակել զդրունս կամ զպատուհանն, և զրոս ի կարգին։ Խաղալք ասեն, թէ օրինաւոր են այսոքիկ. վասն այսպիսի ներգործուիք ոչ պարտին հաւատարիլ անհաճոյ ապաշխարողին, առ որս նա ինքն, եթէ իցէ իսկապէս ապաշխարող, պարտաւորի գործակից լինել. և յայն սակս յայնմանէ ոչ ուժգին խոստովանութիւն լինի բանաւորապէս առելի։ Այս վն վճռոյ կղեմսյ ուղիղ որդոյ՝ ասեն, թէ նուազ արգելեալ լինին միայն ներգործուիքն, որք յաժին ուղղալի իգեմ անձանց խոստովանելոց, զորոց ասացաք յառաջագոյն։ Այլոյսոկ ասեն արդեօք հաւանականա-

բար։ Նոյն նոյնպէս հաւանական է և հակադրեալ կարծիքն. վասն սաքոք լսելեան կըշտամբին մեղք ապաշխարողին, եթէ իմասցի, և անաի կրէ զանձի, եթէ ոչ իմասցի, երևի հակառակիլ վճռոյ Կղեմսյ ուղիղորդի, որ ոչ զանազանէ ընդ մէջ ներգործութեան, և ներգործութենան. այլ ընդհանրապէս արգելու, զի մի այսպիսի ծանօթութենէ վարեցին մեծաւորք սա սրբոյն Կոստանդինէ։ Այս զայս ստուգիւ համարիմք, թէ պարտ է պահել ի գործածութենէ, և առաւել մեծաւորաց կրօնաւորաց, զորոց բացայայտ խօսք վճիռն։ Ամենք զայն տարածեն նաև առ այլ մեծաւորս, յաղագս՝ ասեն՝ նոյնութենէ պատճառին. վասն քահանայապետն ասէ. Օչ պըրօքնակ կոստանդինոպոլսէ մարդիայն էրաց հետ է յայսմ կարծրութի, նոյնպէս ես ոչ ինչ էրօ զայնմանէ խոսել պարտ է։ Այս պատճառ ձգի ի վերս մեծաւորաց, սակայն այս ոչ է այնչափ յայտնի։

Ունիս մակաբերել երկրորդ ընդ հակառակ՝ յերկրորդ եզբակացութէ, թէ խոստովանահայրն կարօղ է ի սոկ ծանօթութենէ խոստովանութենէ ի գործ ածել զհաճոյական ներգործութենս ապաշխարողին. զորօրինակ ցուցանել զարտեգութ դէմն, ընտանեգոյնս վարել ընդ նմա, զմասնաւոր շնորհս տալ, ի խիստ կառավարութենէ կամ ի բանից և կամ ի գործոց վնասու հրաժարել, և ն. Թէպէտ և ապաշխարօղն իմասցի լինել նոցին ի ծանօթութենէ խոստովանութենէ. վասն՝ ոչ ասացաք՝ չիք ինչ անդ բնկրուէն կնքոյ, և սոքա հաճոյական են նմա. նմին իրի և ոչ լինին խոստովանութենէն առելք, այլ ընդ հակառակն։

ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆ Ը։

Ի վերայ վճարման։

Աքն ՅԻովէլա՝ Լեմ. Ե. 12. 13. 14. և 15։

ՊԲՈՒԿ Ը։

Ի չէ վինչ-ինչ, եաթանան, խոբելլուիչ, և հաթլուածուիչ վճարման։

Պիտել պարտ է Նախ, զի այլ է բան արդևանց, և այլ՝ վճարման։ Արդիւնքն հայի ի վարձն ընդունելի ի վարձատուէն, և յայնտակ ի բարին արդիւնաւորողին, կամ այլոյ օրում արդիւնաւորի։ Վճարումն հայի ի վճասել իրաւունս այլոյ ի դարձուցանել, և յայն սակս ի բարին վնասելոյն, և ոչ վճարողին։

Պիտել պարտ է երկրորդ, զի զվճարումն, զորմէ են ասատ բանք մեր, մարթի է զմնաւածել՝ կի՞ նկատմամբ արհամարհուն արարեալ Աւյ մեզ ։ կամ նկատմամբ պարտուպատշաճ ժամանակաւոր պատժոյն մեզ զնի թողուլն յանցանաց և յաւիտենական պատժոց, և զայնմանէ է գլխաւորագոյն խնդիրս ։ Ա՛ն այսորիկ՝

Խնդրիցես Նախ ։ Ո՞ր է վճարումն ։

Պէնեմ ։ (1) Վճարումն վն մեզայ ըս հինքեան ուղիղ սահմանի. Այսոցոր փոխաբերեսն ոբ հոմարհուհն Եղեալ Աւյ մեզ՝ ըսոյ հասատարուհնք պրպտել, ոչ արդեօք ըստ ձիշդ հատասարուհ, այլ ըս համեմատութեհն, ոնյ ասատցուք ստորև ։

Իսկ վճարումն վն ժամանակաւոր պատժոց, որք ևման զնի թողուլն յանցանացն՝ և յաւիտենական պատժոցն, սահմանի. Հոպատացեալ ժամանակաւոր պրպտասպաշճած պատժոց մեզոյ՝ բաւէ և պատճառ զգալոյ ի խոստովանութեհնէն ըզնոսա, այս է՝ եթէ իցէ խորհրդական, կամ յօժարակամ ընկալեալ, եթէ իցէ արտաքոյ խորհրդական խոստովանութեհն ։

Խնդրիցես երկրորդ ։ Վանապատիկ է վճարումն։

Պէնեմ Նախ ։ Վճարումն է՝ որ հաւասարաչափ՝ կամ բնական, և է՝ որ անբնական ։ Հաւականն է կրկին, մի՝ ի կողմանէ նուիրելոյն, և երկրորդն ի կողմանէ կերպին ։ Հաւականն ի կողմանէ նուիրելոյն կամ գնոյն, որ ասի առ հասարակ ըս արժանեաց, է՝ յորժամ արժողութեհն մնատուցանել իրին ըս հինքեան հաւասարի պարտուց ի փոխարինութեհն, զորօրինակ եթէ ոք պարտիցի հարիւր, և հատուսցէ հարիւր՝ կամ ընձնչս ըս արժողութեհն հարիւրոյ ։

Հաւականն և կատարեալն ի կողմանէ կերպին կամ եղանակին արդարութեհն, (որ ասի ըս բովանդակ ճշդութեհան արդարութեհան,) է, որ ոչ միայն մնատուցանէ զարժողութի պարտուց, այլ և որ պահէ ևս զպայմանս ճիշդ արդարութեհն, զորս նշանակեցաք ի վիճ. 10. ի ճառս մնարդեղութեհն պ. 5։

Երկրորդ՝ այլ է վճարումն, զոր քահանայն ի վի գնէ, և ասի խորհրդական. և այլ է՝ զոր ապաշխարօղն յօժարակամ ընդունի, և ասի արտաքոյ խորհրդական խոստովանութեհն։ Երրորդ՝ է՝ որ հրապարակական, և է՝ որ առանձնական ։

Խնդրիցես երրորդ ։ Արդեօք մարդն կարօղ է վճարել Աւյ ։

Պէնեմ Նախ ։ (2) Անդն ոչ է կարօղ վճարել Աւյ վն յանցանաց՝ ըս հաւասարութեհն քանակաւն, զի արհամարհուին մեզոյ արարեալ Աւյ է անսահման, վն արհամարհելոյն զանձն որ է ըս անսահման յարգուն. իսկ պատիժն՝ զոր վճարումն մարդոյ մնատուցանէ Աւյ, է սահմանաւոր և մեծապես ստորին, վնզի է անձին՝ որ է ըստ սահմանաւոր յարգութեհն։ Օայս ամենագլխաւոր պատճառ ընդարձակագոյնս գրեալ՝ տես ի ճառն մարդեղ. վիճ. 2. պ. 2։

Այսպէս կարօղ է վճարել ըստ հաւասարութեհան համեմատութեհն. վասնզի յորժամ հատուցանեմք Աստուծոյ վասն արհամարհուն զիոխարինութեհի, զոր կարեմք, և զոր պահանջէ, լինի նմա վճարումն, և է հաւասարութեհի համեմատութեհն, ըստ որում ոնյ մեզոք ըստ բոլորին արհամարհի, և ըստ բոլորին պարտաւորի նմա փոխարինութեհի, նոյնպէս փոխարինութեհին ըստ բոլորին՝ կամ ըստ բոլոր կարելութեհն հատուցանի ։

Պէնեմ երկրորդ ։ Թողուլ յանցանացն և յաւիտենական պատժոց, կարօղ է միայն վճարել ըս արժանեաց վն պարտուպատշաճ ժամանակաւոր պատժոց մեզոյ, այլ ոչ ձշդիւ և ըս գերակատար

(1) Լեմ. Ե. 12. պ. 3. Բուլ: (2) Ի: 13. գ 1. Բուլ:

արդարութեանէ։ Այնհաւատքէ եզրակացութիւնս, թէ զինի Թողութեան յանցանացն և յաւիտենական պատժոյ՝ հնար է մեալ պարտաւորութիւնն ժամանակաւոր պատժոց, զորմէ խօսիմք աստ։

Յուց. առաջին մասն։ Ամարութիւն ասի ըստ արժանեացս, որ է հաւասար և կատարել ի կողմանէ նուիրելոյն կամ գնոյն, այս է՝ որ այնչափ տայ՝ որչափ պարտի. զորօրինակ նիւթ ոք պարտիցի հարիւր, հատուացէ զհարիւր. խոկարդ՝ վճարմունք մեր կարօղ են լինել հաւասար ի կողմանէ նուիրելոյն՝ ժամանակաւոր պարտաւ պատշաճ պատժոց մեղացն. ապա։ Յուց. փորը։ Պատիժն այն է սահմանաւոր. ապա հնար է հաւասարիլ սահմանաւոր վճարմանմէ։

Յուց. երկրորդ մասն։ Որ լինելոյ վճարմանն ըստ ճիշդ արդարութեան, ոչ միայն պահանջէ լինել կատարեալ և հաւասար ի կողմանէ նուիրելոյն, այլ և ի կողմանէ կնրպին, այս է՝ զի մի հիմնեսցի ի շնորհս պարտաւոն, զի ելոյ ի սնփական ընչից պարտապանին, որք ոչ են ընդ տէրութեաւ պարտաւոն, և զորս պարտաւէրն ըստ այլ գլխոյ չիցէ կարօղ պահանջել. խոկարդ այս պայմանք ոչ կարեն գտանել ի վճարմունս մեր, որովհետև հիմնին ի շնորհս արարչին Աւ, և են յընչից՝ որոց նա ինքն է տէր, և զորս կարօղ է՝ եթէ կամեսցի ըստ այլ գլխոյ, և ոչ ըստ վճարման, պահանջել ի մէնջ. ապա։

Ինդրիցես չորրորդ։ Ընդեօք հարկաւոր է մեզաւորաց վճարումն։

Պէտք։ Հարկաւոր է մեզաւորաց վճարումն, ոչ միայն յօրինակ այլոց, ի շինուելի եկեղեցւոյ, և ի զուարճանի ապաշաւ մեղաց, զորօրինակ գիտեն Հաւատոյիանքն և Կալվինականքն, այլ և ի հաստատելոյ արհամարհուելոն զոր անցեալ մեղօքն արարին Աւ, և ի զերծանիլ ի ժամանակաւոր պատժոց, որ զինի Թողութեան յանցանացն և յաւիտենական պատժոց՝ մնան ի ընդել յայսմ աշխարհի կամ ի քաւարանի։

Յուց. Նախ։ Ըստ որ գրոց, ըստ սրբ Գրոց, և ըստ Տրիտ. ժողովոյն, զինի Թողութեան յանցանաց և յաւիտենական պատժոց՝ մնան Հատուցանել ժամանակաւոր պատիժք՝ առ ի ընդել յայսմ և կամ ի հանդերձել աշխարհի, զորօրինակ ցուցաք յառակապէս ի վեհ. 2. այսր ճառի. պ. 2։ Ապա հարկ է վճարել նմա։

Յուց. երկրորդ՝ ի սահմանաց եկեղեցւոյ։ Յողովն Տրիտ. զձշմարտուի եզրակացութեանս բացայայտ սահմանէ՝ գաւմ. 6. գլ. 14. և գաւմ. 14. կան. 12. 13. 14. և 15։ Տես և ի ճառն ապաշխար. զան. 1. գլ. Ընդ՝ նմա. 7. և գլ. Ոչ ոք. 13։ Այս և զնախադասութիւնն 76. հատուպարտել ի մէջ նախադասութեանցն Լայոսի։

Յուց. Երրորդ՝ ի սրց Հարց, զորս ոչ յաւազ բերեմք, վնզի գրեթէ զամենեսեան ևս շնորհէ մեզ Ալվինն, ասէ՝ գիրք 3. սահմանագր. գլ. 4. յօդ. 38։ Ոյն ինչ լուծեն պն, ըստ ի գերութենն նախնեաց բաբելոն անփամ լինի չիշատակ վճարման։ Վասնզի պեռոնիմ սրբիւօր պատուն ի նոցանէ, ասացեալ պարզապես՝ գերեալ պահնեսեան, որոց էին գերութիւն, կամ յայսմ հասկն չզկտեցը, կամ կոյր էին գիմդրակս, ևս խօսիւ խօսեցեալ։ Օգտաւորնակ խօսի ըստ չափաւորութեանն խիստ աղանդաւորեան նորոգութեանն կրօնի։

ՀԱՏՈՒԱԾՈՒ

Ի վերջ վճարման, ընդ հարցս պարսիկ գնել զոհ, հանային։

Յասացեալդս (1) ունիս մակաբերել նախ, թէ խոստովանաւորն կարօղ է և պարտաւորի գնել ի վերայ զվճարումն ապաշխարողին։ Կարօղ է արդեօք, մի զի ի սահմանադրութենէն խորհրդոյն Աստի. ժդ. և ժը. ունի զինչանութեան ոչ միայն արձակելոյ, այլ և կապելոյ ընդ պատժոց. և երկրորդ՝ վնզի գործողութեի քահանային ի գործածութեան փականաց՝ է համաձայն գործողութեան Աւ, որոյ է պաշտօնեայ. արդ՝ Ած կարօղ է կապել ընդ պատժոց. ապա։

Թէ պարտաւորի ևս յայտ է. վնզի քահանայն յայսմ առնի է պաշտօնեայ Աւ, և գաւտաւոր, և բժիշկ ապաշխարողին. ըստ որում պաշտօնեայ Աւ պարտաւորի որչափ ինչ է յիւրմէ կողմանէ առ ի լինել խորհրդոյն ամբողջ վճարմանն, որ է ամբողջական մասն նոյն, ուզ այլոյր ասացաք. ըստ որում գաւտաւոր պարտի պահել զհաստատութեի ընդ Աւ, և մեզաւորին, զբէժ պահանջեալ մեզայ նր. ըստ

(1) Խ. 18. պ. 3. Բալ։

որում բժիշկ պարտի բժշկել զվէրս ապաշխարողին, և յապաղայից զգուշացուցանել։ Յերկաբանչիւր մասն ևս հետևանացս սահմանեաց Տէրտ. ժողովն՝ գում. 14. գլ. 8. և կան. 15։

Ունիս մակաբերել երկրորդ, թէ քանզի վճարումն ոչ է էական մասն, այլ ամրողջական միայն խորհրդոյն, ոչ է հարկաւոր հարկաւորութիւն խորհրդոյն, այս է առ ի լինել խորհուրդ, այլ հարկաւորութիւն պատուիրանի միայն, և կամ եթէ կամեսցիս՝ հարկաւորութիւն խորհրդոյ առ ի լինել ամրողջ. մինչև եթէ վճարումն լինէր անկարելի, զորօրինակ ի հոգևարս, կամ ի յայտնութեան գիտացեալ լինէր՝ թէ ոչ ևս պարտի վճարումն մեղաց, և ապաշխարողին լինել ըստ բաւականին պատապարել ի վերստին գլորելոյ, մարթ էր օրինաւէս մատակարարել զխորհուրդն՝ առանց դնելոյ ի վի զվճարումն. քանզի ոչ ասի թերի խորհուրդն, բայց եթէ յորժամ զրկի ի պարտաւորն և ի կարելի ամրողջութենէ։

Ունիս մակաբերել երրորդ, թէ արտաքոյ երկուց դիպուածոցս այսոցիկ՝ պարտաւորութիւն դնելոյ ի վի զվճարումն է ծանր. մեղի ծանր է անյարգուն խորհրդոյն, որ մեայ թերի, յորժամ կարող է և պարտի ամրողջանալ, և ծանր մեաս բերի ապաշխարողին, որ վի այն մեայ նեղքոյ անկեալ ծանրագոյն ևս պատժոց ի ջնջել, և զրկի ի զարմանաց ընդդէմ ապագայ մեղաց։ Այլ մեղանչեր մահու չափ մեղօք խոստովանահայրն, որ ոչ միայն վի մահու չափ մեղաց, այլ և վ ներելի մեղաց, կի վի արդէն խոստովանեալ մահու չափ մեղաց՝ ոչինչ վճարումն դնէր ի վերայ, բայց եթէ յանմտաւորութենէ անրասիր լինէր։ Այս չէ ինչ ընդէմ, թէ վճարումն վի սոսկ ներելի մեղաց, կամ վի արդէն խոստովանեալ մահու չափ մեղաց՝ երևի լինել թեթև։ Պիտոյք, թէ իցէ այդպէս ըստ ինքեան. սակայն նկատմամբ խորհրդոյն՝ որ մեայ թերի, է ծանր ինչ ի բանի անյարգութենէ։ Ումին իրի խոստովանահայրն վի նորոգ մեղաց մոռացելոց՝ և խոստովանելոց զնի արձակման, եթէ զնոր արձակումն տացէ, պարտի ի վի դնել զնոր վճարումն։

Իսկ զոր ասեն ոմանք, թէ մարթի է և զանց առնել ի դնելոյ ի վի զվճարումն, եթէ խոհեմութիւն դատեսցի, թէ ապաշխարողն նախընթաց գործովք լիով վճարեալ իցէ, կամ վճարելոց իցէ ներողութիւնք՝ զոր փութալ ունի շա իլ, ոչ ընդունիմք գէթ ի գործածութենէ. վասն երևի, թէ չէ հնար և ոչ պի յայտնապէս խոհեմութիւն դատել։ Վասնզի ոչ զոր առանց յայտնութեան կարող է գիտել, թէ քանի պատիժք պարտին մեզացն, կամ թէ արդեօք լիով ունիցի շահիլ զներողութենէ։ Ապա ի գիպուածս յայսոսիկ միշտ պարտ է դնել ի վի զվճարումն, այլ զլևևիա։

Գ Լ Ո Ւ Խ Ը Ե Ր Ո Ր Դ։

Ո՞րչ պարտ է խոստովանել, և զինչ ի չէ վճարութիւն։

Բանսիլ է նախ։ Ոչ է հարկ կատարել զվճարումն յառաջ քան զարձակումն. և խոստովանահայրն ըստ ինքեան խօսելով ոչ է կարող, և ոչ իսկ պարտի առ այն բռնադատել զաղաչանարոն խոստովանեալ, որ այլուստ ըստ օրինի է տրամադրեալ։

Յառ. առաջին մասն նախ, զի վճարումն ոչ է էական մասն խորհրդոյ, այլ ամրողջական միայն, որ վ այն առանց նի կարէ կալ, և նմա արդէն կացուցելոյ կարէ ի վի գալ։ Այ այն զի զրջումն և խոստովանութենէն, որք յառաջնն քան զարձակումն, ունին զգան ինչ վճարման։

Յառ. երկրորդ։ Օրինէ և իցէ օրինադրութենէն նախնի եկեղեցւոյ, զոր սիդոն բաղումք լինել հակառակ եղբայացութենէս մերում, թէպէտ և զհակադրեալն իրրև հաւանականագոյնս հաստատեցաք յառաջնի գրութենէ մերում, զարտուղ. պատմ. ի վախճանի սորին ճառի, հատուած 5. գլխ առաջինիսկ օրինադրութենէ եկեղեցւոյ ի բազում դարուց հետէ ամ ուրբք ի գործ դնի տալոյ զարձակումն յառաջ քան զկատարումն վճարման։ Երդ զայս գործածութենէ եկեղեցւոյ իրրև զապօրինաւոր մեղադրել՝ է դատապարտելի յանդգնութենէ, ընդդէմ որոյ յարեան բազում ծայրագոյն քահանայապետք՝ Ալեքսանդր երրորդ՝ ընդդէմ Պետրոսի Լոմբայ՝ յամին 1478. Ղեկքասանդր ութերորդ՝ յամին 1690. ի դատապարտութենէ բազում նախադասութենց. և Կղեմէս մեռասաներորդ՝ ի կոնդակին Ինոճէնս, ընդդէմ Առէնսեղեայ, Նախադաս. 87. և 88։

Սոցին գՀետ գայ երկրորդ մասն եղբակա-

յու-

ցուելիս, այ է՝ թէ խոստովանահայրն՝ ըստ ինքեան խօսելով ոչ կարէ, և ոչ պարտի բըռնադատել զապաշխարողն խոստովանել, և ըստ օրինի տրամադրել, առ կանխելոյ զվճառումն յառաջ քան զարձակումն։ Նախ զիոչ է արժան մանաւանդ ումեք ի հասարակաց դործածուէ նկեղեցւոյ յայսպիսի ծանր նեխեծ խոստորիլ։ Երկրորդ՝ զի ապաշխարօղն խոստովանելով, և պղտւստ ըստ օրինի տրամադրեալ, ուժի իրաւունս առ նոյնհետայն ստանալոյ զարձակումն։ և չէ հնար առանց ծանր անիրաւս թեր զանել նմա կամ յապաղել, ոչ րովհետև մեծագոյս շահաւէտ է նմա ոչ ընդ երկար մնալ ի վիճակի մեղաց, և նոյնհետայն ի բարեկամանալ Աստուծոյ։ Երրորդ՝ զի վճարումն զինի արձակմանն ի վիճակի շնորհաց կատարեալ է արդիւնաւոր, Աստ հաճոյացոյն, և կարի մեծագոյս գործոյ նեայ առ վճարումն ըստ անցեալ մեղաց, և առ ի զգուշանալ ապագայից, քան յառաջ քան զարձակումն ի վիճակի մեղաց։

Ասացաք, Նախ քննելոյ խոհելով, և այլևս ըստ օրինի պրամադրելով. ըստ եթէ խոստովանահայրն տեսցէ, թէ ապաշխարօղն է զանցառու ի կատարել զվճարումնս, կամ յերկրացս իցէ զնի օրինաւոր տրամադրութեէ, զոր օրինակ հնար է հանդիպիլ ի սովորականս և ի յաճախ վերանկնալս, կարող է՝ ի չլինել ինչ բռնադատիչ հարկաւորութեէ՝ տիպել զնա ի կատել զվճարումն զեթ ըստ մասին։

Ասելի է երկրորդ։ Զվճարումն մարթ է ի մի գնել յառաջ կամ խոզոյն զնի արձակմանն. ըստ ըստ երկուց եղանակաց ևս համարի բարեպատեհ յարակիցիլ ընդ խորհրդոյն՝ հաւատար գործով պղտցն, և լինել ի նմա։ Սակայն պատշաճագոյն ևս ի մի գնի յառաջ քան զարձակումն. վասնզի ըստ այսմ նեխեծն յառաջագոյն ևնթադրի բացայայտագոյն քան զկերպն։

Ասելի է երրորդ։ Պարտ է կատարել զվճարումն ի մի եղեալ՝ որչափ յառաջագոյն դիւրաւ հնար է լինել, եթէ չիցէ ժամանակ ինչ սահմանեալ, զոր պահանջէ՝ եթէ ամրոզումեէ խորհրդոյն, եթէ բան բժշկանութեէ, և եթէ արդարոյն վճիռ դատաւորեն։ Սակ եթէ ժամանակ ինչ իցէ սահմանեալ, ըստ այն ժամանակս պարտ է կատարել։ Եւ եթէ ի սահմանեալ ժամանակին չիցէ կատարեալ, ոչ յայն սակս դադարէ պարտաւորութեէն. մեղն գլխաւորն՝ որ նկատի յայնմիկ ոչ է պարագայն ժամանակի, այլ գործն սահմանեալ։

Եւ յերկոսին իսկ դիպուածս յապաղել զմի կամ զերկու աւուրս, ոչ երեք ծանր ինչ, բայց եթէ դուցէ ի սահմանելն զկը՝ զպատգոյն ժամանակի միջնորդ գլխաւորապար դիտացէ խոստովանահայրն. զորօրինակ զծանր պահուեէ ի հակման տանի ինչ՝ ի պաշտօն և ի պատիճ նր։

Գ Լ Ո Ւ Խ Ը Ա Ր Դ։

Երբեմն ապաշխարողն պարտաւորի ընդունել զպաշխարանս՝ երկարեալ, և զնկատելն ի նմանէ, եթէ ոչ ընդունիցի զնոյն, և հնարք նմա յայլ ժամանակս դնդեալ։

Ասելի է նախ։ Պարտաւորի ապաշխարօղն ըստ ծանր մեղաց ընդունել զպաշխարանս, և զնկալեալն կատարել, եթէ իցէ ոչ վրէժխնդրութեէն անցելոցն, և եթէ ոչ ի դարման ապագայիցն։

Երկրորդ նախ։ Ուրեմն քահանայն զնշխանութեէ կապելոյ կամ պարտաւորելոյ ոչ վճարումն, ոչ յայտ է ի վերոգրելոցդ. իսկարդ իշխանութեէն պարտաւորելոյ ի միում՝ ընթերցուածն, ապա թէ ոչ՝ ընդունայն լինէր այն իշխանութեէ. ապա։ Երկրորդ՝ ապաշխարօղն պարտաւորի որչափ ինչ է կիւրմէ կողմանէ առնել ոչինչ ընդհատ քան զխոստովանաւայրն, զի խորհուրդն մի լիցի թերի, այլ ամբողջ. իսկարդ՝ վճարումն է յամբողջութեէ խորհրդոյն. ապա։ Եւ երրորդ՝ ամ որ պարտաւորի հնազանդիլ պատուիրին, որ ուղիղ դատէ. ապա։

Ասացաք նախ, Ինչ ծանր խղճի։ Վիտիմ ապաքէն՝ եթէ ոմանք համարին, թէ ոչ է առաւել քան զնեղելի մեղս՝ հրաժարիլ կամ զանց առնել զթերեթե ինչ վճարմամբ եղել ի մի միայն ըստ ներելի մեղաց՝ և կամ մանաւանդ մեղաց արդէն խոստովանելոց. մեղ՝ ասեն՝ է թերեթե ինչ։ Ոչիրաւ զայս բազում և մեք իսկ ոչ հաստատեմք. քանզի եթէ պետ ըստ ինքեան է թերեթե ինչ, սակայն ոչ է թերեթե նկատմամբ խորհրդոյն, որում ծանր անիրաւութիւն լինի, եթէ առանց պատճառի կացցէ թերի և զուրկ ի գլխաւոր ամբողջացու-

ցուցիչ մասնէ իւրմէ, զորօրինակ արդէն ասացաք ի նախընթացս պարակին։ Այլ ինչ լինէր, եթէ կատարեալ ղվճարումն ըմբռնեալ մեծագոյն մասին, քան եթէ մասն ոչ զանց առնէր։

Այսացայք երկրորդ, Ջհանաւոր ապաշխարանս. քանզի զանբանաւոր ապաշխարանս, և զայսոքն անիրաւս, կամ զանկարելիս, զորօրինակ զծոմապահսն հացիւ և ջրով վն դատարկ բանի, կամ զաւետաղնացսն հիւծանելն անկիրճ ի մահիճս, ոչ ընդունել՝ և ոչ կատարել պարտաւորիւ։

Այլ դիւրին, եթէ ապաշխարողն մտացեալ իւրմէ զապաշխարանս ի վն եդեալ։

Պիտեմ։ Պարտի զայն խնդրել ի խոստովանահօրէն, եթէ չէիցէ կարի հեռի ի նմանէ. և եթէ խոստովանահայրն ոչ յիշեացե, համարի լինել նմա անդարձելի, և վնկ անբաւիր լինի յայնմանէ. ոչ և ի պահպանութենէ այլոց օրինաց անբաւիր լինի՝ որ ոչ դիտէ զայնոսիկ։ Այս ոչ պարտաւորի զմեղսիւբ նմին խոստովանահօր կամ այլում կրկնել՝ վս ընդունելոյ զնորոգ վճարումն, թէպէտ և մտացածելոյն իւրմէ բառնելոյ զորօրինակ վն յապաղելոյն ընդ երկար. վասն ոչ ոք պարտաւորի երկիցս խոստովանիլ զմեղս ուղղակի Թողնալս, այլ բաւական է՝ եթէ զբաւարելի մտացածելն խոստովանեացի։ Ասկայն ոչ զերծանի յայլ ինչ վճարմանէ՝ ինքնին անձին խոհեմութիւն հայեցեալ ի մեղս իւր դնել ի վն. վասն պարտ է վճարել Այլ ևսորհուրդ տան ոմանք, զի ի մերձաւոր խոստովանելումն ինդրեսցէ դնել անձին զայլ ապաշխարանս պատշաճեալս մեզացն, զորս սովոր է խոստովանիլ։

Այսելի է երկրորդ։ Կա ինքն ապաշխարողն ոչ է կարող փոխել զապաշխարանս եդեալս ի վն ի խոստովանահօրէն, և ոչ խակ յայլ դժուարագոյնս։

Պատճառն է, վասն զի գործն ի խոստովանահօրէն եդեալ ի վն՝ զորօրինակ փականացն վերառեալ լինի ի պարտաւորութենէ խորհրդական և ի վճարողական ի գործոյ գործեցելոյ, որպիսի ոչ կարէ լինել փոխադրելն յապաշխարողէն. նմին իսի մնայր թերի խորհուրդն։ Ձայլ ի վն, եթէ սոքինն ոչ կարէ փոխել՝ ևս և ի լաւագոյն զգործն յօրինեաց կամ ի գերազանգնել պատուհիրեալ, ոչ յայտ է ի պատուհիրանս կամ յօրէնս ծառայութենէ, խոստովանուեաւ, ևն. ապա նոյնպէս։ Այս ասի յայտ է անհանգիստութենի ի վն ուխտի, զոր ուխտողն կարող է ի լաւագոյնս փոխադրել. վասնզի ուխտն ոչ լինի վերառեալ ի գոլ խորհրդական, և նոյն է ուխտօղն և փոխադրօղն ուխտի։

Այսելի է կրկրորդ։ Ոչ ոք խոստովանահայր՝ եթէ նոյնն և եթէ այլ ոք՝ կարող է փոխել զվճարումն պատաքոյ խոստովանութենէ. մի՝ զի դնումն վճարման վն մեզաց խոստովանելոյ է ներգործութենի իրաւարանութենէ և իշխանութենէ փականաց, որ միայն յատենի խղճի մտաց ի գործ ածի. և երկրորդ՝ վզի վճարումն ոչ լինէր խորհրդական, և յայն սակս լինէր թերի խորհուրդն։

Այսելի է չորրորդ։ Նոյն խոստովանահայրն կարող է փոխել զվճարումն ի կայն նոյն խորհրդոյ բարոյապէս. վասզի յայնժամ փոխումն համարի վերաբերիլ առ նոյն դատաստան, և ի նմա լինել. զորօրինակ եթէ յառաջ քան զմեկնիչն ապաշխարողին՝ մտացի զապաշխարանս, և կամ եթէ մեկնեալ՝ նոյնհետայն դարձցի։ Ասմանք զերկար յապաղումն բառնում ժամուց կամ աւուրց նշանակին, այլ անհիմն։

Իսկ ի չկալն և ևս նոյն խորհրդոյ բարոյապէս՝ ոչ է կարող նոյն խոստովանահայրն փոխել զապաշխարանս յայլում խոստովանութենէ, բայց եթէ կրկնեբ, եթէ առաջին խոստովանութենին գեթ ի հասարակի, և եթէ աթձակումն, վն պատճառաց երրորդ եղբակացութենէս, այս է՝ զի եթէ ոչ էր այսպէս, դնելն զվճարումն վն առաջնին մեղացն յայնժամ ոչ խոստովանելոց՝ ոչ լինէր ներգործութենի դատաստանական, և ոչ նոյն վճարումն խորհրդական։

Այսելի է հինգերորդ։ Այլ ոք խոստովանահայր՝ եթէ վեհագոյն և եթէ ստոյն՝ կարող է վս արգարացի պատճառի փոխել զվճարումն եդեալ ի վն յառաջնին խոստովանահօրէ. բայց միայն ունցի զհաւասար իրաւարանութենի ի վն նոցին մեղաց, և նմա ամբողջապէս կրկնեացի խոստովանութենէն։

Ի գործածութենի հասարակաց, զոր հաստատէ վկայութենի նըշն Հայմանեանոսի, այլն Ինոսենտիոսի, և գրեթէ համօրէն ամենայնից. որոց պատճառն է, զի որովհետև Ձայ ամանեաց զայս խորհուրդ վս բարութենէ հոգւոց, և առ այն երբեմն պահանջի փոխել վճարմանն եղելոյ ի վն, ընդհատասի, թէ Ձայ զայս իշխանութենի ևս քահանայից։

Հաստատի ձեռնարկութենէ առ մարդ։ Ասկաւք

կաք ամենք, որք ունին զներկական կարծիս, ընդունին և տան զայս իշխանութեի վերնագուն նկատմամբ ապաշխարանացն՝ զոր ստորինն դնէ ի ճի. խնարդ՝ ենէ ծադրեալ զբանական իրաւարանաւն, ստորինն է հաւասար ըստ իշխանութե յայսմ առնելի ընդ վերնագունին. քանզի զհաւասար իշխանութեի երկրորդին ևս ընկալան ի ձեռնադրութեի եպիսկոպոսաց, ասաց։

Ապացոյց նախ, Ա՝ սրբոյ պատճառ. վասն ոչ համարի, թէ ետ Աստ զայս իշխանութե յեղծութե, այլ ի շինութե։ Իսկ արդարացի պատճառ համարի հարկաւորութեին, երեւելի օգուտն, ծանր դժուարութեին ի կատարել զառաջինն ապաշխարանս, վասնզի պատուհասանացուցիչ երեւելի չափազանցութե առաջին ապաշխարանացն, և որ ի կարգին։ Եւ յայսոսիկ դիպուածս ոչ միայն կարող է, այլ և երբեմն պարտի խոհեմ խոստովանահայրն զառաջին ապաշխարանս, թեպէտ և ի չափանցել ապաշխարողին, փոխել։

Ապացոյց երկրորդ, Ինչ գիտեն ունելոյ զնաւասարութե ի վճռ նոցին դէպս. քանզի է կարծիք բազմաց, թէ եթէ երկրորդ խոստովանահայրն ոչ ունիցի զերկաւարանութե ի վերապահելոց, ոչ է կարող փոխել զապաշխարանս, զոր վճռ վերապահեալ մեզաց եդ ի վճռ առաջին խոստովանահօրն. վասնզի թեպէտ ի լինելն օրինաւոր խոստովանութե մեզաց այնմ, որ ունի զերկաւարանութե, դադարին ի լինելոյ վերապահել, մինչև կարող լինել արձակել ի հասարակ խոստովանահօրէ, (և այս է հիմն հակադրեալ կարծեացն,) սակայն ոչ դադարի լինել վերապահեալ՝ այնպես, մինչև ապաշխարանացն եղելոց ի ճի ի վերնագունէ, կամ յառաջին խոստովանահօրէ, մարթի իցէ փոխանել ի հասարակ խոստովանահօրէ. վասնզի վերապահին մեզք՝ ոչ միայն զի առ դժուարութի ընդունելոյն զարձակումն զարհուրելոցին յայնմանէ մարդկէ, այլ և զի ի ձեռն քաջահմուտ բժշկաց վասնզաւոր անհատ հատութե բժշկեսցի, ոմն իսկ Տրիտենդեան ժողովն. և այս վանձան ընդունայն լինէր, եթէ հասարակ և անհմուտ խոստովանահայրն ուղղէր և փոխէր զապաշխարանս վերնագունին և քաջահմուտ բժշկին։ Վասն այս կարծիք երևի հասարակագոյն, և է ապահովագոյն։

Ապացոյք երրորդ, Եւ ձեռնադրեալս

Y y

(1) Ես. 13. պ. 2. Բաղ։ (2) Ինչ

իշխանացն խոստովանութե. որ է հաւանականագոյն ընդդէմ ոմանց, որք համարին, թէ բացառական է եթէ ապաշխարողն բացատրեալ զառաջին ապաշխարանս՝ առաջի դիցէ զբացառեալս, որոց վն է նման կարի իմն դժուարին։ Պատճառն է, նախ՝ զի ըստ այնմ՝ երկրորդ խոստովանահայրն կարող է փոխել զապաշխարանս, ըստ որում կարող է զնոյն գատ գատել, որում չէ հնար լինել, բայց եթէ առաջին եղեալ զնոցա։ Եւ երկրորդ՝ զի անձանօթի դոլով դատին՝ ոչ է կարող ըստ պատշաճի դնել զվճռութիւն ի ճի եթէ ի քաւել զանցեալ մեզս, և եթէ ի զգուշանալ յապագայիցն։

Խնդրեցես, թէ արդեօք ի փոխելոյ ապաշխարանացն՝ ազատ իցէ ապաշխարողն զառնալ յառաջինն։ Պետեմ հասարակագոյնս, թէ այո. վնզի այս փոխադրութիւն է բոլորովին ինչպատ ապաշխարողին, յորմէ կարող է հրաժարիլ, և այս երեւի լինել դիտաւորութե խոստովանահօրն։

ՊԼԸՆ Կ. Գ.

Երդեօ կարօղ է ոք ըստ այլ վճռել։

Վճարումն, (1) զորօրինակ կանխաւ բաղում անգամ ասացաք, կարգի յերկուս, այս է՝ առ հատուցումն պարտուց, և առ դարմանս վն խորշելոյ ի մեզաց։ Եւ ևս մարթի է զմիասածել, կամ իրրև զնորհրդական, և կամ իրրև արուաքոյ խորհրդական խոստովանութե։

Ասելի է նախ։ (2) Ա՝ երբացուցեալ ի խորհրդական, և յարտաքոյ խորհրդական խոստովանութե վճարմանէ, և զայն զմիասածել իրրև զվճարումն պարտուց, մի ոք կարող է վն այլոյ վճարել. իսկ զմիասածել իրրև զդարմանս, ոչ է կարող, քայց եթէ ըստ պատահմանս։

Առաջին մասն, զոր ուրանան հերետիկոսք, յայտ է ի բանից անտի Վաղսա. ի. 2. *Օդիմանց Բեռն Բոյնե. և ի Կոլոմե. ըստ Առաքեալն յորդորէ զՎորնեթացիս առ ի բառնալ ողոմտիւք իւրեանց զմարմնաւոր աղքատութիւնց, զի բարձցին հոգևոր աղքատութիւն ձեր առաւելութե և բարի գործովք սրբոց։ Եւ դարձեալ՝ ի մասնէ Հանգանակին, որում խոստովանիմք զՀաղորդութիւն սրբոց։ Ի վճռ այսր ասմք

Հետ. ածարարական պատճառաւ։ Ասենեքեան եմք մի ի քո, և միոյ մարմնոյ ընդգլուխն Քրիստոս, խարդ՝ ի մարդկայ-

2 ին

ին մարմնի իւրաքանչիւր անդամք, ոչ միւս բնանց նեթի, այլ և յայլոց օգուտ գործեն, զորօրինակ ականն ոչ տեսանէ միայն մի իւր, այլ և մի ոտից և բոլոր մարմնոյն, ոտք մի ա՛ջաց ընթանան, են. ապա ը նմին օրինակի ի խորհրդաւոր մարմնի եկեղեցւոյ, ը այնմ բա՛նի Գաւթի Սաղմ. ճԺը. 63. *Հաղորդ եմ ես ամենայն երկիւղածից քոց, որք պահեն զպատուիրանս քո ||:

Հաստատ: (1) Կերն առաւել կարող է առ Աշ, քան առ մարդկան. խակարդ կարող է մի ոք առ մարդկան ի սիրոյ այլոյ վճարել զպարտս նո՛ր. ապա ևս առաւել կարող է այն լինել յաջողեալ դատաստանի:

Հայց. (2) երկրորդ մասն: Օրօրինակ ի մարմնաւորս գործոնն ընկալեալ ի միում մարմնի ոչ բժշկէ զսխտս միւսումն, և չէ ինչ նմա օգուտ. նոյնպէս ի հոգևորս վճարումն միոյն իբրև զդարման՝ ոչ օգտէ միւսումն. ը այսմ ծանաւթանալ՝ միոյն՝ օրինակի աղագաւ՝ մարմնին այլոյ ոչ ճնշի, և ոչ ի բարի ներ-գործութենէ միոյն՝ երկրորդն ստանայ զունա-կութիւն բարեպէս գործելոյ: Սակայն կարող է, և է երրորդ մասն եղբակացութեան, մի ոք արդիւնաւորիլ ը պատշաճի զնորս, որ է առե-նագործունեայ դարման մի խորհելոյ ի մեզայ. այլ այս է յաւէտ ը եղանակի արդեանց՝ քան ը եղանակի վճարման:

Լսելի է երկրորդ: Օվհորհրդական վճա-րումն եղեալ ի մի միոյ՝ չէ հնար հատուցա-նել ը որում խորհրդական՝ միջնորդութիւն այ-լոյ. վճռի ը Իլդեֆոնսեանն, և ը Տրիտենդեան ժող. գլ. 14. գլ. 3. Նիւթ այսր խոր-հրդոյ են ներգործութիւնք ապաշխարողին, որք զօրութիւն փականաց վերառնել լինին ի գոլ խորհրդոյ. խակարդ վճարումն միջնորդութիւն այլոյ կատարեալ, թէպէտ և է ապաշխարո-ղին յայս միտ, զի յանուն նո՛ր, և ը խնդրոյ նո՛ր լինի, սակայն պարզապէս ոչ է ներգործու-թիւն նո՛ր. ապա ոչ է նիւթ, զոր հնար իցէ վեր-առնուլ զօրութիւն փականաց առ գոլ խորհր-դական, և ոչ ը հետևորդի՝ վճարումն ը որում խորհրդական:

Լսացաք, Լո՛ր որում խորհրդական. վճռի թէպէտ խոստովանահայրն կարող է մի օրի-նաւոր պատճառի դնել ի մի ապաշխարողին զվճարումն միջնորդութիւն այլոյ ը խնդրոյ նո՛ր ի գործ դնել, զորօրինակ զուխտադնացութեի, սակայն գործ վճարմանն ը որում է յայլմէ՝ ոչ է խորհրդական կամ մեռն խորհրդոյ, այլ միայն ը որում լինի ի խնդրոյ ապաշխարողին, կամ կերպապէս ը որում հրամայեալ ի նմա-նէ. և ը այսմ նոյն խնդիրն է կերպական յայսմ վճարման, իսկ գործ միւսոյն նիւթա-կան:

Աղդ՝ չէ պարտ խոստովանահօրն լինել դիւ-րաշարժ ի փոխարկել զվճարումն առ այլ ոք, մի՛ զի գլ. Լ՛ուրս՝ն է ասէ. Լո՛ր վերբեր-ի վէ ը զապաշխարութիւն սեփական գործ-ը խոնէ ինչ տալով ապաշխարողին. երկրորդ՝ վճռի վճարումն հասարակօրէն ոչ է միայն առ հատուցումն պարտուց, այլ և ի դարման ապագայ մեղաց. և ընդ այսմիկ բա-նիւ միտն ոչ է կարող մի այլոյ վճարել, ոչ և առացաք: Լո՛ր յայն սակս՝ յորժամ խոստո-վանահայրն ոչինչ բացատրէ, այլ պարզապէս դնէ ի մի զապաշխարութիւն, միշտ համարիլ պարտ է, եթէ պատուիրէ զապաշխարողն, զի ինքնին կատարեսցէ զայն. և առաւել՝ եթէ իցէ ներգործութիւն ամենևին ածնական, և ը որում այնպիսի իցէ ճնշողական: Իսկ ապաշ-խարողն, որ առանց հրամանի խոստովանահօրն ջանայր զապաշխարանս իւր միջնորդութիւն այլոյ կատարել, մեծապէս մեղանչէր, և ոչ վճարէր: Այսմ իրի յիրա ի Աղեքսանդր ևօթ-ներորդ՝ ի 24. Սեպտեմբերի յամին 1664. դատապարտեաց զայս նախադասութիւն. Աղա-չեալ ոք ոչ կարէ ինչ ևս ի ծոմ կարօղ է ծոմել, զի ոչ ևս է ը ինքեան

Ինդրիցես նախ։ Արդեօք նաև մե՛ն ննջեցեալոցն ի քաւարանի կարօղ է ոք վճարել։

Պիտեմ, թէ այո՛. վասն նաև այս վերաբերի առ Հաղորդուի սիր։

Ինդրիցես երկրորդ։ Արդեօք վճարուելն միոյ մե՛ միւսոյն իցէ ըստ արժանեաց։

Պիտեմ ընդ Պողիոսի, թէ ըստ պատշաճի միայն ընկալեալ լինի Ա՛Ի. այլ եդեալ զայն ընդունելոլեաւ է ըստ արժանեաց. վասն ոմն ենթադրի, որ վճարէն մատուցանէ գՀաւատասրուեաւ ի կողմանէ գնոցն կամ նուիրոյն։

Ինդրիցես երրորդ։ Արդեօք վճարելով ոք մե՛ այլոյ՝ վճարէ ևս մե՛ իւր։

Պիտեմ։ (1) Եթէ իցէ մե՛ վճարման արտաքոյ խորհրդական խոստովանուան, արդիւնաւորի մե՛ իւր, այլ ոչ վճարէ մե՛ իւր վասն ի վճարման կա՛ ի հատուցման պարտուց մնացեալ քանիսնուի պատժոց, և յարդիւնս արմատ ածային սիրոյ։

Կամ (2) եթէ իցէ մե՛ խորհրդական վճարման, որ վճարէ մե՛ այլոյ, վճարէ ևս մե՛ իւր. վասն գործոյ զոր առնէ ոք ի գրուէ քահանային, կրկնակի զօրէ ապաշխարողին. մի՛ ի գործոյ գործողին, և երկրորդ՝ ի գործոյ գործեցելոյ, կամ զօրութիւ փականաց։ Արդ՝ ապաշխարօղն հրամայեալ ի խոստովանաւորէ առնել զայնպիսի գործ մե՛ կենդանեաց աննչեցելոց, մերձեցուցանէ նոյ զզօրութիւն գործոց իւրոց ի գործոյ գործողի, զոր կարօղ է տրամադրել. իսկ զօրութիւն նորին գործոյ ի գործոյ գործեցելոյ՝ միայ անձին, իրրև ոչ է կարօղ եւ հաճոյից օտարացուցանել զայն։

Այլ ունիս մանաւանդ, թէ կարօղ է խոստովանաւոյն զվճարողական գործս դնել ի վերայ՝ վասն նպաստից՝ եթէ կենդանեաց և եթէ ննջեցելոց։ Այս զայս հաստատեալ գործ ածութեամբ խոստովանաւորաց, և գոլէ կաթեղիկոսին Հաւվհաննէս, մնաս 2. գլ. 5. հմմ. 63։

ՊԱՏԱՍԽ. Ե՛։

Ո՛րպէս վճարօ՛ն պարտք դնել խոստովանաւորն ի վե՛ ապաշխարողին։

Բաւ կանոնաց, որք կոչին ապաշխարողաց, մե՛ մնասցուք ինչ մեղաց՝ կանխաւ եղե՛ օրինադրութեի մասնաւոր ինչ ապաշխարանաց, մանաւանդ ըստ ժամանակին։ Օրոյսոսիկ կանոնս հաւաքեցին մատենագիրք ըստ մասին եթէ յընդհանուր և եթէ ի մասնաւոր ժողովոց, ըստ մասին ի պնաագրոց և ի վճռոց ծայրագոյն քահանայապետաց, և ըստ մասին ի սիր հարց։ Բազում ինչ ի մէջ բերին ի վախճան վճռոյն Կրատիանոսի. և կարի ևս բազում ի Նաստասիոս Ղեքսանդրէ՝ յիմաբան. բարոյ. գիրք 2. գլ. 6. պ. 7. և յայլոց. յորոց զանազանեալ յառաջ բերաք յառաջին գրուելն մեբուս։

Արդ՝ զկանոնս զայսոսիկ եթէ իրաւունք և եթէ ածաբանք յառաջ բերեն, ոչ առ պարտաւորելոյ զնոստովանաւորս ի գնել զապաշխարանս ըստ օրինադրութեան նոցա և ըստ խստութեի, իրրպէս և ոչ ի նախնումն միշտ ճշդիւ պահելին, որպէս ունիմք տեսանել արդ. և զի այնուամ ի թուլանալ և ռանդեան ածային սիրոյ՝ յայսմ խստագոյն օրինադրութեի թողացոյց եկեղեցին, զի մի զգրոս կամ փրկել ապաշխարութեի, ի դժուարութեի պատժոցն ահարեկեալք՝ յուսահատեցին և դատապարտեսցին. այլ ոմանք՝ յորժամ զայն դատեցին պատշաճ, առաջի դիցեն զայնոսիկ ապաշխարողաց, որով եթէ զծանրութեի մեղաց իւրեանց առաւել ևս խոնջեցին, և եթէ առաւել ազդուագոյնս առեսցեն զայնոսիկ, և առ պատշաճական վճարումն դիւրաս տրամադրեսցին։

Ասելի է (3)։ Ապաշխարանքն դնելի ոչ է այնպէս ի կամս քահանային, զի ի բաց տարեալ զամ օրէնս և զկանոնս՝ զայնս ըստ սակ հաճոյից ի մե՛ դիցէ. այլ այնպէս զի ոչ միշտ պահեալ զօրէնս կանոնաց և զծանրութեի մեղաց՝ կարօղ իցէ դնել զայնոսիկ ի վե՛ ըստ մասն կանոնաւորելոյ խոհեմութեի և ածային ազդեցութեի, հայեցեալ ի զանազան պարագայս գործոց և անձանց։

Ճշդ. նախ՝ յիրաւանդ դատ 26. խ. 7. գլ. Յոհաննէս. 2. ի սիրն Լևոնի՝ թիւրեի 79. այժմ 129. առ Միխկաոս եպիսկոպոսն Կիսիկեոյ. ուր ասէ. Յոհաննէս ապաշխարութիւնք չափաւորեալ առհասարակ են ըստ տեսից գործոն, ըստ պրօ՛ պէսցիս զնչիրս գործելոցն լինել ըստ արդարութեան, նայելոս նա ևս ազգաբնակ շնորհաց ձեռնադրելոցն, և ըստ ուրոյ ինչ ի նոցանէ գործելոցն, և ըստ ամենայնի ի վերայ ամենայնի։ Այլոն։

(1) Ինդ՝ տա 3։ (2) Ա–Տի. 3. խ. 13. պ. 1 (3) Ես. 18. պ. 4. Բա։

Ղուանգոյ, կ՚ենթադրէ։ Տես Ղուն իրաւունք անգլեն. գլ. Հպատակութեան. 5. ի յերրորդ ժողովոյն Կարթագինեայ՝ յամին 424։ Ղունն անդեն. գլ. Այս եղեալ ի սկզբն Յարսղէ՝ի կան. Համառօտ։ Ընդհէն գլ. Աեղեռնոց. ի վէր ապաշխար. գան. 1։

Ժողովն Տրիտ. գում. 14. գլ. 8. ասէ. Պարտին հոգեհոգս Տ՚ն, որչափ հոգին ի խոհեմս ունի ապէ, ըստ որում ունի չանգանացն և ըստ կորուածոյն ապաշխարողացն՝ պէտք ունի ողորմածական ճգմտանս ի վր դնել։

Ըստ նմին օրինակի պարտ է սահմանադրել խստոտանահայոց, ասէ. ՚Ի գնել վճռել տանս իմ գաւազանաւս՝ պարտ է խոհեմութիւն հօրն լինել ըղձահոյսից, զի ոչ այնպէս ընկնիս ի գէր, եւ գիրն, գնես եչեռնուիցն գոհանոյ լինել արհամարհելի, և լինել նմա բաժանորդ և ընկեր գեղջ այլոց. և ոչ հրամայեսցին այնպես ծառայս իմ ընդ երկուս, զի իմ հրաժարեսցին ի գործ գնել գայնոսին, և իմ ենիս ընդունելի նա, ասէայն չէ այնորչի լեռ ոչ նոպարեսցեն։

Հայց. (1) երկրորդ՝ պատճառաւ։ Ազատողական պատիժքն, զորս պարտ է դնել ի վր, են դարմանք՝ եթէ վր բժշկելոյ զառապիկայ վերս, և եթէ վր զգուշանալոյ չապագայից. խակարդ՝ խոհեմ բժիշկն ոչ միշտ և աՄենեցուն տայ զդարմանս ըստ բացորոշելոյն չարհնատէն, վնզի ոչ միշտ և ոչ ամենեցուն պատշաճին. և ոչ միշտ տայ զայնպիսի ազդարարանս, որք առ բժշկութի հիւանդութեն ամենեին բաւական իցեն, զի մի վր տկարանն ընութեն ծադեսցի մեծագոյն վտանգ. այլ զայնս փոխանակ և լաչակ ըստ դատման խոհեմութեր և գիտութեր բժշկականութեն կանոնաւորելոյ. ապա ըստ նմին օրինակի բժիշկն հնգետր կամ խոստովանահայրն ոչ պարտի միշտ դնել ի վր զհնարողական պատիժս զրացորոշեալս ի կանոնաց՝ որք ոչ պատշաճին միշտ ամենեցուն, և ոչ միշտ զբոլոր պատիժն՝ որ պարտի միանգամ մեղաց, զի մի տկար ոք ի մեծագոյն պատժոյն յուսահատեսցի, և ի պատժոյն գլխովին հրաժարեսցի. այլ զայնոսիկ պարտի դնել ի վր՝ ըստ դատման խոհեմութեր և ածայնոյն ազդեցութեր կանոնաւորելոյ, հայեցեալ յամ պարագայս գործոցն և անձանց, և ա՛ի սաստկութեի զղջմանն, և պատկառանացն, և այլն։

Յանացելոցս ստի ունիս մակարներել նախ, թէ խոստովանահայրն ի դնելն զապաշխարանս ի վր՝ պարտի հայել ոչ միայն ի մեծագոյն կամ ի փոքրագոյն օրպիսութեի և ի քանակութիւն մեղացն, այլ և ի մեծագոյն կամ ի փոքրագոյն վտանգ վերստին յանցանելոյ կամ դայթագղութեի, ըստ բանի զղջման և պատակառանացն, որով յաւէտ կամ նուազ պատիժքն թողան, ըստ կարողութեի և ըստ պայմանի ապաշխարողին, այս է՝ ըստ հասակի, ըստ արուի և իգի, ըստ սեղանակցութեի, և ըստ հիւանդութեի, եթէ ըստ մարմնոյ, և եթէ ըստ հոգւոյ. նմին իրի ոչ է պարտ դնել զծանապահութեի ի վր հիւանդացդ, կամ ի վր գործատրայ՝ ծառ և անընդհատ աշխատութեի պարտաւորեալ. ոչ զայն գործ՝ որովք յայտնէր խոստովանութեին, զորօրինակ ի միասին սեղանակցացդ, ոչ տնորդւոյ՝ պահքն ի մնոց, արբուեն ջրոց, ևն. ոչ հանապազորդ աղօթիքն ծառայից և աղախնայց ի վեսս ժամանակին՝ զոր ի ծառայութեի տեառց ծախել պարտին։ Ցուսազեցուցանել պարտ է զապաշխարանս, յորժամ խոստովանահայրն կանխատ զգայ, թէ ապաշխարողն ոչ է ընդունելոց զայն, կամ զընկալեալն ոչ է կատարելոց։

Ունիս մակարներել երկրորդ, թէ յայսնութի ընծայեալ պարտ է ընդ ճանապարհ միջին ընդ մէջ երկուց եղերաց՝ ընդ կարի խստութեի և ընդ կարի ընդարձակութեի. սակայն առաւել պարտ է զՀետ երթալ գթութեի, քան խրատութեի. ի՝ զի ըստ Տրիտ. ժողովոյն՝ ի նախայիր. տեղ. խորհուրդն ապաշխարութեի ոչ է առեան բարկութեի և պատժոց, այլ ներողութեի և գթութեի. և երկրորդ՝ զի շատ ևս է, զի ապաշխարողն կատարեալ զլինելն պատիժս զհնացորդս պատժոց քաւեցէ ի քաւարանի, քան զանց արարեալ զծանրագոյն պատժոյք՝ դատապարտեսցի ի դժոխս։

Սակայն ուր խոստովանահայրն վր արդարացի պատճառի դնէ ի վր զլինելագոյն ապաշխարանս, ազդ արասցէ ապաշխարողին, թէ նովին ոչ լինի լեռվ վճարեալ վր մեզացն, և յայն սակս զհնացորդն քաւել պարտ է յայսմ՝ կամ ի հանդերձեալ աշխարհի, զի անտի ապաշխարողն յորդորեսցի ինքնայօժար ընդունել զծանրագոյն ապաշխարանս, և մի՛ ի թեթեւս։

(1) Ընդ։

ւսումէ ապաշխարանացն Թեղեա համարեսցի զմեզ։

Խնդրեցաս։ Արդեօք կարօղ է խոստովանահայրն գնալ ՚ի վէր վերադարձական ապաշխարանս վասն հրապարակական մեղաց։

Պէտն հասարակագոյնս, թէ ոչ է կարօղ զօրուիլ այսր առենի ապաշխարանէ, որ յանձայլին առհաւանագրութենէ է գաղտնի։ Այլ եթէ ապաշխարօղն ՚ի մեղաց անտի ձգեաց զպարտաւորութենի հրապարակաւ վճարելոյ, զօրօրինակ առ բառնալոյ զայլհագղութենի, առ գարձուցանելոյ զերբաւնս արարեալ անիրաւութենն, առ հատուցանելոյ զպարտս, առ Թողոյ զմերձաւոր առիթին, են. կարօղ է և պարտի խոստովանահայրն զայս պարտաւորութենի ծանուցանել նմա, և ՚ի կատարումն նր բռնադատել. և ըստ այմ բռնադատել զսեղեին՝ ՚ի բաց վարել զսեղեին, զվաշխատուն՝ ՚ի բաց Թողուլ զվաշխս, զհրապարակական զբպարտիչն կամ զհերետիկոսն առ յետս նահանջելոյ հրապարակաւ զդբպարտութենին կամ զհերետիկոսութենին։ Վասնզի առ այսոսիկ անկախ զպատուիրանսկ խոստովանահօրն՝ նովին իսկ իրաւամբք քննելոյ պարտաւորի, և պարտ էր կատարել զայսոսիկ՝ մինչչև էր կացուցեալ զանձն յայտնի։

ՊԻՐԿՈՍ ՕՁ։

Երբեմն գործն ՚ի վճռոյ հանուելոյ գրոց ապաշխարել՝ վճարեսցի։

Ասելի է նախ (1)։ Գործքն ՚ի ներգործութենի կամ ՚ի բաղձանս մեղաց արարեալ՝ ոչ իւիք իրօք վճարին։

Յայտնի։ (2) Գործք մեր ոչ են վճարողական առաջի Աստուծոյ ըստ հաւասարաչափութենի նոցին, այլ ըստ ընդունելուն նր. խնդրի՝ անտեղի է ասել, թէ Աստ ընդունի զգործս նր, որ ներգործելոյ կամ ախորժանօք արհամարհէ գնա. ապա։ Յայտ. մեծ. Նախ՝ ի Երիտ. Ժողովոյն՝ գլխ. 14. գլ. 8. ուր ասէ, թէ վճարմունք մեր ունին զզօրութի ՚ի Քրիստ, ՚ի նմանէ ընծային Հոգի, և նովաւ ընկալեալ լինին ՚ի Հօրէ։ Եւ գլ. 9. ասէ, թէ է առաստաձեռնութենէ և ձայնին սիրոյ յանդիմանութենի, ընդունելն Աստ զվճարմունս մեր։ Երկրորդ՝ եթէ գործք մեր են Աստ, որ է գերագոյն տէր ամենեցուն, և զոյնս վճռ զանազան այլ ևս պատճառաց կարօղ է պահանջել. ապա առ լինելոյ մեզ օգուտ ՚ի վճարումն և ՚ի փրկուի պարտուպատշաճ պատժոց մեղաց մերց՝ պատճէն ընկալեալ լինել ՚ի նմանէ։ Ուր չէ հնար յատաջ բերել զայլ պատճառ, թէ առ ի՞նչ հոգիքն ՚ի քաւարանի խոտագոյն պատժոյք, և առանդագոյն ներգործութիք ածային սիրոյ և զգչման՝ ոչ վճարեն, և ոչ նոյնհետայն վերանան յերկինս. բայց եթէ զի զոլով նց արտաքոյ ճանապարհի, Աստ զներգործութիս և զպատժս նց առ այս վախճան ոչ ընդունի։ Այլ գիտել պարտ է, զի նովին իսկ որով Աստ տայ ճանապարհորդաց զբրաւարս շնորհս, ընդունի զգործ՝ որք յատաջ գան անտի՝ առ արդիւնս և առ վճարումն։

Այսմ գհետ գայ, թէ եթէ իցէ գործն ՚ի վէր եղեալ ՚ի խոստովանահօրէ առ վճարումն, պարտ է կրկնել, զի կատարեսցի պատուիրան նր, և ամբողջասցի խորհուրդն։

Ասելի է երկրորդ։ (3) Գործքն ՚ի պարտաւորութենէ մեղաց արարեալ, եթէ ՚ի բաց եղեալ ախորժակին առ մեղս՝ յատաջ գայցէ ՚ի ներգործական շնորհաց, ոչ յատաջաշարօղս, վճարէ ոչ ըստ արժանեաց, և ոչ ըստ պատշաճի ճշդիւ, այլ ըստ պատշաճի լայնարար, ընդ այսոսիկ տարբերութենէ, զի նկատմամբ մեղաց՝ Թողլոց ըստ յանցանացն՝ ընդունի զպակասութենի ինչ պատժոց. իսկ նկատմամբ մեղացն չէ ևս ըստ յանցանացն Թողլոց՝ արամադրէ միայն առ մեծագոյն զղջումն, և ոչ զի անտի Աստ յարգարացուցման առաւելագոյն ևս հրաժարեսցի յիրաւանց իւրոց, այլ և զառաւելագոյն ևս շնորհեսցէ զմեղուցեալի պատժոց։

Յայտ. առաջին մասն։ Վճարումն ըստ արժանեաց ըստ որում արդիւնք՝ ՚ի մէջ բերէ զերբաւնս արդարութենէ առ Թողուլի պատժոց. վճարումն ըստ պատշաճ ճշդիւ զբարեկամական իրաւանց. խնդրոյ մերոյն՝ ՚ի վիճակի մնայուցեալ մեզաց ոչ է կարօղ ունել՝ ոչ զերբաւնս արդարութենեան, և ոչ զբարեկամական իրաւունս առ այն, զի Աստ զգործս նր ընկալցի առ վճարումն, և շնորհեսցէ նմա զմեղուցեալի պատժոց. որովհետև է արտաքոյ արբարար շնորհաց, և ածային սիրոյ, ուստի

ԸԸՆ-

(1) Ես. 14. պ. 2։ (2) Անդ։ (3)։ Անդ։

բղխին լինելն վճարմանց մերոց ըստ արժանւոյց, և բարեկամութիւնն ընդ Ա՛Յ· ապա ։

Յաւգ· երկրորդ մասն ։ Օրօրինակ առ արդիւնս ըստ պատշաճի լայնարար՝ բաւական է ներգործութեան, ոչ որով արարօղն ունիցի զնբաւութիւնս, այլ որով ի տուօղն եղիցի պարտք ինչ պատշաճականութեանն՝ ըստ բարութեան և ըստ առատաձեռնութեան նորա, սոյնպէս և ի վճարել ըստ պատշաճի լայնարար· իսկարդ՝ պատշաճ է ածային բարութեան և առատաձեռնութեան՝ տալ վճարողական գործոց ի ներգործական շնորհաց իւրոց յատուկ եկելոց՝ զիրօղութիւնն պատժոց վասն մեղաց ըստ յանցանացն թողլոց, իսկ վասն մեղաց չեւ ևս ըստ յանցանացն թողլոց՝ վասն լաւագոյն արամադրութեան առաւել ևս ի Նմին արդարացուցման հրաժարիլ յիրաւանց իւրոց, և տակաւ պատիժս պահանջել· ապա ։

Ա՛ն այսորիկ հաւանական է, թէ գործոյն՝ որ ի դիպուածս եղբայրացութեան՝ կատարի պատուիրան խոստովանաւորաց, և չէ պարտ կրկնել, վասն է ըստ իւրոց ինչ վճարողական ։ Ի դէպ կարծիք հասարակաց, և հասարակաց միտք հաւատացելոց, որք ոչ են սովոր ամբաստանել զանձանց, թէ զվճարութեն կատարելոյն արտաքոյ ածային սիրոյ· և այն երևի դիտաւորութեանի խոստովանաւորաց, մանաւանդ յորժամ դնեն զապաշխարանս՝ որք ընդ երկար տևեն· բայց քանզի ոչ է բացարձակապէս ստոյգ, թէ Ա՛Ծ ընդունի զգործս զայսոսիկ առ վճարութեն, խրատ է, զի խոստովանաւորք դէպ զնան ինչ ապաշխարանաց իսկոյն կատարել միշտ դիցեն ի վերջ ։

ՊԻՒՍԿ· Ի՝

Ի ՎԵՐ ԱՐԱՒՈՒՆՔԻՑ ԳՈՐԾՈՑ, ԱՐՈՎ ԼԻՆԻ ՎՃԱՐՈՒՆ։

Ի նղրիցես նախ ։ Արդեօք պարտ է վճարմանն լինել պատժական գործով ։

Պատժականութեան (1) կամ՝ գժոճարութեան ի գործս ինչ՝ մարթի է լինել կրկնակի· ընթացեալ, և առարկեալս, կամ՝ ի սեռէ և ի յնութեէ գործոյն ։ Օրօրինակ եթէ ոք աղօթեսցէ տաղտկութեէ, գժոճարութեան և պատիժ է՝ եթէ ի կողմանէ ենթակային, և եթէ ի կողմանէ առարկային· իսկ եթէ աղօթեսցէ ի սաստկութեէ ածային սիրոյ յօժարակամ և բերկրութեէ, լինի միայն գժոճարութեան առարկական՝ առանց ենթակայական նին ։

Պիտի ։ (2) Վճարողական գործոց պարտ է լինել պատժական ։

Յաւգ· Նախ՝ Յովել· բ· 12· ասէ· *Դարձարուք առ իս յամ սրտիւ ձերում, պահովք, և լացիւք, և ընդվել· Աստեղ· ժա· 12· *Ընդայնացիր երկինք երկնից բառնալոյ, և բառնայ յանդնական պնա ։

Յաւգ· (3) պատճառաւ ։ Վճարումն, ոչ կանխաւ ասացաք, կարգի առ փոխարինել և առ վրէժխնդրութեէ անցեալ արհամարհանացն, և առ ի զգուշանալ ապագայ յանցանաց· իսկ արդ՝ առ երկոսին ևս պահանջի լինել պատժական գործով· ապա ։ Յաւգ· առաջին մասն փորք ։ Պարտ է լինել փոխարինութեան արհամարհութեանն Ա՛Յ այնոցիկ, զի բարձցի ինչ ի մեղաւորէն, և տացի ի պատիւ Ա՛Յ· վասն մարդն մեղանչելով առաւել քան զարդարն ընծայել անձին, և որչափ ինչ է ի կողմանէ իւրմէ՝ բառնայ զպատիւն Ա՛Յ· իսկարդ՝ այս բարձումն է պատժական, քանզի պատիժն ոչ այլ ինչ է, բայց եթէ զրկումն ի պիտանի և ի բերկրալի բարւոյ· ապա ։ Յաւգ· երկրորդ մասն փորք ։ Արդն ոչ դիւրաւ դառնայ ի մեղս, յորմէ զիւորձ էառ պատժոցն· նմին իրի Ամաստասէրն 2· բարոյ· գլ· 3· պատիժս կոչէ դարմանս· և Ժողովէ Տրիտ· ի նախայիչ· առ, թէ վճարողական պատիժք մեծապէս դարձուցանեն ի մեղաց, և իրր սանձիւ իւիք նոճաճեն ։

Ա՛սիցես ։ Որչափ գործ ինչ ի մեծագոյն ածային սիրոյ յատակ գայ, այնչափ է նոճազ պատժական· արդ՝ եթէ պարտ է վճարողական գործոց լինել պատժական, որչափ առաւել լինին յածային սիրոյ արարեալ, այնչափ են նոճազ վճարողական, որ է սուտ ։

Պիտի զան· զառաջարկ ։ Որչափ գործ ինչ ի մեծագոյն ածային սիրոյ յատակ գայ, այնչափ է նոճազ պատժական՝ ենթակայապէս, ընդու· առարկեալս ըստ սեռի իւրում, ուր ։ Նէ ուր· զհետև ։ Արդ՝ հաւասար գոլով այնոցն՝ գործն առաւել պատժական առարկեալս՝ է առաւել վճարողական ։

Ինդրի-

(1) Ինդ՝ ե· 15· գ· 1· առ 2։ (2) Ինդ։ (3) Ինդ։

Խնդրիցես երկրորդ։ Արդեօք ձամ ներգործութեի առաքինութեե՞ պատճական, և ըստ հետևորդի՞ վճարողական։

Պատասխանեմ, թե այո. վասն ձամ գործ, որով ծառայեմք Աստ, և զմիտս առ երկնայինս ուղղեմք, բնաւորեալ է պատճառել ի մարմնաւոր և յերկրայինս յառեալ մարդիկ զձանձրութեի և զանձկութեի։

Այսի ունիս մակարերել, թե ոչ միայն արտաքին գործն, այլ և ներքին գործն՝ ևս և ըստ ինքեան առեալ՝ է վճարողական. վասն ներքին ներգործութեիք, զղջմամբ, ածային սիրոյ, մտաւորական աղօթեից, և որոց ի կարգին, ևս և ըստ ինքեան առեալ՝ են պատճառականագոյն, գժոճարին, և պատճական ըստ ինքեան, թէպէտ և ըստ պատահմանն առ բարւոք տրամադրութեե ննեձակային ներգործութեի երբեմն ոչ պատճառեն զաշխատութեի. վասն կարող են ևս գնել ի վճռայնս խոստովանահարք իբրև զապաշխարանս։ Այլ չէ ինչ ընդդէմ, եթէ ոչ երեին զգալի. քանզի զղջմանիկ զղջումն ըստ բաւականին լինի զգալի ի բան խորհրդոյ խոստովանութե, ըստ նմին օրինակի ներքին ներգործութեին և դեալ վճռ ապաշխարանաց՝ լինի ըստ բաւականին զգալի՝ դրութեե խոստովանահօրն և ընդունելութեե ապաշխարողին։

Արդ՝ նոյն արտաքին գործն՝ ըստ որում յառաջ գայ ի ներքնոյն, թէպէտ ի վճռ ներքնոյն ոչ յաւելու զներքին ինչ բարութեի, ոչ ասել ի վճ մարդկային ներգործութեե, և ոչ վճ այն յաւելու զարդիւնս, որ նկատի ըստ բարութեե ներգործութեին, այլ վասն յաւելու զպատեհ ձանաձանելով ի ներքնոյն՝ յաւելու զզօրութեիւն վճարելոյ, վասն զի վճարումն նկատի ըստ պատժոյն և ըստ աշխատութեին. և յայն սակս պահել զձոն է առաւել վճարողական, քան կամիլն ծոմապահել, վասն է առաւել պատժական։

Խնդրիցես երրորդ։ Արդեօք գործք այլուստ պարտաւորեալ՝ ե՞ն վճարողական, և կարօղ է խոստովանահայրն դնել զայնոսիկ իբրև զապաշխարանս։

Պնեմ։ Գործքն այլուստ պարտաւորեալ՝ են վճարողական, և ըստ ինքեան խօսելով կարօղ է խոստովանահայրն դնել զայնոսիկ իբրև զապաշխարանս։ Այսպէս այս հասարակօրէն ոչ է օրինաւոր։

Յայց առաջին մասն։ Գործն լինի վճարողական՝ յայնմանէ, զի է բարի, և պատժական. խակարդ՝ այնուհիկ, զի է այլուստ պարտական, զղօրինակ յուխտ կի՛ ի պատուհրանէ, ոչ դադարի լինել բարի և պատժական. ապա։ Հաստատի։ Օրմնապահութիք ևկեղեցւոյ են պատուհրեալ, և ի վճ այսր ձամ են վճարողական. քզի յայս իսկ սահմանեցան։

Երկրորդ մասն զնետ գայ առաջնումն. քանզի եթէ խակապես են վճարողական, ոչ ինչ ընդդէմ է՝ թէ կարօղ իցէ խոստովանահայրն զնել իբրև զապաշխարանս։

Յայց երրորդ մասն։ Որ մեղանչ առ նորոգ ինչ պարտի պարտաւորիլ, մի՛ առ խմանալոյ զղջէժինդրութեի մեղաց իւրոց, և երկրորդ՝ զի առաւել ևս ինչ պարտ է պահանջել ի նմանէ՝ քան յանմեղէ. նմին իրի դիտաւորութիւնն ևկեղեցւոյ է, զի իւրաքանչիւր ոք վճարեսցէ վճ մեղաց մանաւոր ինչ գործով. և վճ այն յորժամ խոստովանահայրն դնէ ի վճ զմանաւոր աղօթս, գծոմապահութիս, զողորմութիս, են. ոչինչ յաւելեալ ի վճ, իմանալ պարտ է զայնցանէ, առ որս ապաշխարողն յոչ այլ ինչ պատճառէ պարտաւորի. բայց եթէ գուցէ յայնմ իցէ հակադրեալ դիտաւորութեի խոստովանահօրն։

Ասացաք, հասարակօրէն. վասն երբեմն վճ արդարացի պատճառաց օրինաւոր է դնել ի վճ զգործ ինչ այլուստ պատուհրեալ, զղօրինակ զժամերգութիս, զևկեղեցական ծոմապահութիւնս, նմա՝ որ չունի զղիւրայարմարութի այլազգ վճարելոյ։

Խնդրիցես չորրորդ։ Արդեօք պատուհասք ստի կենաց ե՞ն վճարողական։

Պնեմ։ (1) Պատուհասք ստի կենաց, եթէ տարցին համարութեի, են վճարողական։ Ի Տրիտ. Ժողովոյն գտա. 14. գլ. 9. ուր կոչէ զայնոսիկ «ՀՆԱՀՆԱՀ ՅԱՆԱՊՆԱՆ-ՈՒՆ ՁԵՎՅՆ ՆԵՐՅ»։

Յայց. Նախ։ (2) Հռոմ. Ը. 3. «ՎՆԱՊՈՒՆ ՀՀՄԲԵՐՈՒՆ ՓՈՐՁՆԵՆ, ՀՄՅԲԵՐՈՒՆԱՆ ՀՀԱՆԱՐԵՆ», այս է՝ զքաւութի՛ի մեղաց, ոչ ասէ անդէն մեկնիչն. ապա։

Յայց. երկրորդ (3)։ Այլին խակ, զի մարդն ընդունի զպատուհասս ստի կենաց առ՛ի

(1) Ընդ՝ պ. 2. Բոլ։ (2) Ընդ՝ ի յհռոմ. այլ ընդդ։ (3) Ընդ՝ Բոլ։

քաւուի մեղաց՝ համբերութիւն տարեալ նոցին, լինին ընդ իրաց նոցին ապաշխարողին. ասպա են վճարողական։ Յայս։ Հետև։ Այսպէս եթէ էր ինչ ընդդիմանալի չունելոյ նոյ վճարողական, էր՝ փոքր ոչ լինէին ի միջի, այլ յայլմէ, այս է՝ Աստ. որ վերաբերի առ բան վերեւիհանդուանէ. վասն եթէ մարդն անհամբերութիւն ամենեին անհաւան լիցի նոցին, յայնժամ ոչ լինին նոքա, և յայն սակս ոչ ունին զբան վճարման, այլ զվերհանելն զդուռնէ։

Խնդրեցես հինգերորդ։ Ինչ են վճարողական գործք։

Պիտի։ (1) Վերխաւոր գործք վճարողականք՝ ի որ գիրս և ի բանս սքեղ հարց մանաւանդապէս յանձն արարեալ են ողորմութիւք, ծոմապահուի, և աղօթիք. առ որս՝ եթէ լիցի գործակ միտս առցին՝ հնար է վերածնել զայլս ամ։

ՊՐՆԿ. Բ.

Ի վերայ պայմանոց և գործոց վճարման։

Եհէպետ ի բովանդակ վիճաբանութիւնս զբազում պայմանս վճարման ասեն և անտի նշանակեցաք. զնոսին ընդ ոմանց ևս այլոց համառօտիւ ասա յաւարտ բերումք ի մեծագոյն դիւրութիւն ընթերցողաց։ Ինչ՝

Ասելի է նախ։ Պայմանքն պահանջեալք առ վճարումն, են՝ որք պահանջին ի կողմանէ վճարողին, են՝ որք ի կողմանէ գործոյն, և են՝ որք ի կողմանէ Աչ։

Պայմանքն ի կողմանէ վճարողին են։ Նախ՝ զի իցէ ի տնօրէնս՝ ոչ զի վճարեսցէ քո արժանեաց, կամ զի ի բաց բարձեալ իցէ զանօրժական առ մեղս՝ ոչ զի վճարեսցէ ըստ պատշաճի լայնաբար. յայս է ի պրակէն 6։ Երկրորդ՝ զի իցէ ի վիճակի ճանապարհի. վասն զի արտաքոյ վիճակի ճանապարհի՝ զորօրինակ Աճ ոչ ընդունի զբարի գործս առ արդիւնս, նոյնպէս և ոչ առ վճարումն։ Եւ առ ի չգոյէ այսր պայմանի՝ հոգիքն ի քաւարանի ոչ վճարեն, այլ ըստ բաւականին կրեն։

Պայմանքն ի կողմանէ գործոյն են։ Նախ՝ զի իցէ ազատ, վասն է մարգկային ներգործուի։ Երկրորդ՝ զի իցէ բարի, զի չար գործովք առաւել արդիւնաւորիմք զպատիժս, քան զիթողուի պատժոց։ Երրորդ՝ զի իցէ գերբնական, վասն զիթողուի պատժոց վերաբերի առ կարգն գերբնական. քանզի պարտքն պատժոց յամենգութենէ ղմեզ՝ հաստանիլ առ վերջին դերբնական վախճանն։ Եւ չորրորդ՝ զի իցէ պատժական. յայս է ի նախընթաց պրակէն՝ ի խնդրեցես նախ։

Պայմանն ի կողմանէ Աչ է, զի ընկալցի զայնպիսի գործն առ հատուցումն. յայս է ի պրակէն 6. եղբակ. 1։

Ասելի է երկրորդ։ Խորհրդական վճարումն՝ (զորմէ միայն աստ ճառի,) պատճառէ ի գործոյ գործեցելոյ զիթողուի ժամանակաւոր պատժոց. քանզի յայս սահմանեցաք։ Նմին իրի Տրիտ. ժողովն՝ գլ. 14. գլ. 3. ասէ, թէ զղջումն, խոստովանութիւնն, և վճարումն՝ են նիւթական մասունք ապաշխարութեանն, ըստ որում յապաշխարեցն առ ամենայնի խորհրդոյն, և առ չնչին ի նոցանէ ոչ կարելի է զատորել զնոսա ի սահմանաց գործոյն։ Եւ նոյն Ժողովն. գլ. 14. գլ. 3. ասէ. թէ զղջումն, խոստովանութիւնն, և վճարումն՝ են նիւթական մասունք ապաշխարութեանն, ըստ որում յապաշխարեցն առ ամենայնի խորհրդոյն, և առ չնչին ի նոցանէ ոչ կարելի է զատորել զնոսա ի սահմանաց գործոյն։ Եւ նոյն Ժողովն. գլ. 14. գլ. 3. ասէ,

և այս դիւրութեի գլխաւորաբար ի նպաստից շնորհաց յառաջ գայ։ Լեզէ ըստ առաջնոյն, նշանակէ զընորհս. քանզի այն սեփական է հաւորէն խորհրդոց. և քանզի զառաջին շնորհս ենեմադրէ յարձակման տուեալ, զերկրորդն միայն՝ կամ զաճումն առաջնոյն նշանակէ և պատճառէ։

Ասյարդ՝ զինչ ինչ և իցէ ի վի երկուց վերջին գործոցս այսոցիկ, քանզի գէթ յայտ է, թէ խորհրդական վճարումն ունի զմեծագոյն գործունէութի ի հոգւոյն պատժոց, քան զինքնայօժար ընկալեալն, մեծապէս շահաւէտ է, զի խոստովանահայրն զիւէ զայն ի վի, և ապաշխարողն կատարեսցէ. և խրատ ևս է, զի խոստովանահայրն զինի ի վի դնելոյ զբացորոշեալ վճարումն, միանգամայն ևս ի վի զիւէ առ խորհրդական վճարումն զամ ապագայ բարի գործս ապաշխարողին, դէթ առ որոշեալ ինչ ժամանակ առ եօթնեակ մի, առ ամիս մի, ևս և առ տարի մի։

Բաց ի գործոց աստի խորհրդական վճարման, են բազում օգտակարութիք նի, զորս թուէ Ժողովն Տրիտ. գլխ. 14. դլ. 8։ Ասես՝ զի մի համարեսցին մեղքն թեթև ինչ, որ այսպիսի խիստ աշխատանօք ապաշխարութեն քաւի։ Երկրորդ՝ զի ահաբեկ լեցին ապաշխարօղք յապագայ մեղաց, և ի խորշել յայնցանէ զգուշադոյն լեցին։ Երրորդ՝ վճարմամբքն այնոքիւք արմատախիլ լինին մոլեկան ունակութիք։ Չորրորդ՝ի բաց դաքձուցանեն զվերահաս ցասումն Աչ։ Հինգերորդ՝ Աստի գլխոյն մերոյ նմանակից առնեն զմեզ։ Եւ վեցերորդ՝ են յօրինակ և ի շինութի այլոց։

Ա Ը

Ի ՎԵՐՔՅ ԲԱՆԱՊՐԱՆՔՅ, ԸՆԿԸՆՈՒՆԹԻՒՆՔՅ, ԵՒ ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆՔՅ։

Սկս Թուին՝ Լշ. ի 21. ե. Դնէլ գ27։

ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԸՈՒՆՉԻՆ։

Ի վերայ բանապրանաց առ հասարակ։

Գ Ր Ը Կ. Ը։

Օ՞ն, և տանապարհն նչեն բանապրանքն.

Եսելի է նախ։ Բանադրանքն է՝ նվիրեցեալոյն պոռնիկ բնչելոյն, և ընտանեացոյր, որ ըլնի պաղատանաւք և պատասխանի ի գործակցութենէ հաւատոյ հոգեւոր բարեաց։ Անկին։

Ասի նախ, Պոռնիկ. քանզի ոչ դնի, բայց եթէ վն մեղաց, և այն՝ վն արտաքին մեղաց, իրրզի նկնեցին ոչ դատի զներքնոց. և վն մահու չափ մեղաց, քանզի գոլով ծանրագոյն պատիժ, ոչ դնի՝ բայց եթէ վն ծանրագոյն մեղաց։

Ասի երկրորդ, Նվիրեցեալոյն պոռնիկ. վնզի չէ հնար դնել՝ բայց եթէ ի ձեռն նկեղեցական առաչնորդաց, որովհետև է նախ ի վի զրկման ի հոգևոր իրաց, իսկ ի վի մարմնաւորաց միայն երկրորդաբար, և ըստ որում վերաբերին առ հոգևորս։

Ասի երրորդ, Բնչելոյն. վնզի նովաւ ոչ այն-

այնպէս դիտի պատժել զմեղս, ոչ ուղղութի՛ մեղաւորին. նմին իրի՛ ի գալ ՚ի յուղղութի՛՝ հաստարակօրէն պարտ է բառնալ զրանադրանս. և յայն սակս յաւելաւ ՚ի վե՛՝ ծանոթութեան։ Այսպէս գրի բացայայտ յիրաւունս. գլ. 1. ՚ի վե՛ւ վճռ. նզովել. ՚ի 6. և գլ. ՚Ի լրիցոց. ՚ի վե՛ւ սահմանագր։ Որում գիտելի գայ, թէ ուր չիք յոյս ուղղութեան, հաստարակօրէն ոչ է պարտ դնել զրանադրանս։ Այսուհանդերձ, հասարակօրէն, մեզ ըստ պատահման՝ եթէ իցէ հարկաւոր ՚ի վե՛ւ հաստարակաց բարւոյ՝ առ ահագուշանելոյ և զգաստելոյ զայլս, ևս և առանց յուսոյ ուղղութե՛ նո՛՝ որ մեղաւն, կարող է դնել. քանզի թէպէտ դլխաւորաբար է դարման, սակայն է ևս պատիժ։

Աստ չորրորդ, ՚Ի ջրի՛ ՚ի բերդեալն. մեղս նկատողին ոչ ունի զնշանութեի՛, եթէ ոչ ՚ի վե՛ւ հպատակաց. և լինի մարդն հպատակ նկատելոյ մկրտութե՛ւ։

Աստ հինգերորդ, Ո՛ չմոռան, եթէ կալով մեղաւոլն ՚ի մեղս, և եթէ ոչ հնազանդելով պատուհասից առաջնորդացն։ Այսպէս գրի յիրաւունս, գլ. ՚Ի կողմանէ. 1. ՚ի վե՛ւ նշանակ. բառից. և գլ. 1. ՚ի վե՛ւ վճռ. նզովել. ՚ի 6։ Հաւաքի ՚ի ժո՛ւ գլ. Ա՛նտեղ. հմր 17. * Ի՛րէն ե՛ւ եկեղեցո՛ւն ոչ ըմբէդ, այս է՝ եթէ նզովելի անհնազանդ նմա, եղեալ հեղ երբե՛ւ պնդեմամբ և վտռոտութ։ Այլ և գիտե գայ այսմ՝ լուել բանադրանացն բժշկական։

Աստ վեցերորդ, Ոչ պէ՛ւ ՚ի փոքածոյ՛ն հաստակաց հոգեւոր բաժնոյ. զգօրինակ են հրապարակական նպաստաւորութիւք նկեղեցւոյ, հոգեւոր իրաւարանութի՛ւն, պատարագն, և խորհուրդք, նկեղեցին պաշտօնք և բարեբարութիք. և ՚ի ամենեցուն տեսօրէնութի է յանձն եղեալ եկեղեցւոյ, մինչև զներգործական և զկրաւորական գործածութեի՛ նոյ կարող իցէ ունել ՚ի վե՛ւ յանցանոց և յամառութե՛ւ արգելուլ ՚Իսկ ըստ մնայնաւոր հոգեւոր բարեաց, գործոյիկ են պարգեւք շնորհաց, առաքինութիք, և բարի գործք, յորոցանէ նկեղեցին զոչ որ կարող է մերկացուցանել, և ոչ ՚ի գործածուէ նոյ զրկել։

Աստղ է երկրորդ։ Այն միայն երեք եկեղեցական բանադրանքն. այս է՝ նզովք, կախում, և արգելք։ Ի հաստարակացն կարծիք։

Ցուց. Նախ։ Յորչափ յիրաւունս լինի յիշատակութի՛ ՚ի վե՛ւ գնելոյ կամ բառնալոյ զբանադրանս, միայն երկքին սոքա անուանին. գլ. 1. գլ. Յանհնազանդ. և գլ. Ո՛՝ սրտո՛. ՚ի վե՛ւ վճռ. նզովել. ՚ի 6. ուստի Ընդվզենտիոս երրորդ՝ գլ. Ոչ՝ ինքեա՛ն. ՚ի վե՛ւ նշանակ. բառ. ասէ. Ոչ՝ ինքեա՛ն, ըն՛ զի՞ն նմանել պարտ է եկեղեցական բանադատ, յորժամ պաշտպան գաղտաւորի՛ն յանցանո՛ւ ՚ի ընտրեա՛ն ձեռն. պնդեմ, ըն՛ նոքա՛ նմանել լինին վճռոյն ոչ ինչ, այլ ՚ն նախանձ, և նզովից։

Ցուց. Երկրորդ։ Ոչ դադարումն յիշատնոց, ոչ բացընկեցութի՛, ոչ կարգընկեցութի՛, և ոչ անկանոնականութի՛ ևս և վե՛ւ յանցանոց, են բանադրանք։ Այս են միայն երկքին նշանակեալքն։ Ցայտ է հնտև. ՚ի բառական թուէլոցս յառաջարկութի՛ն. քանզի ոչ նշանակին զայլ ինչ հակառակորդք։

Ցուց. առաջարկ. ըստ իւրաքանչիւր մասանց։ Ա՛սէ՝ դադարումն յիշատնոց, որ և ասի՝ կախումն ՚ի նուազագարանաց, է նկեղեցական արգելումն ժառանգաւորաց՝ կատարելոյ զնշային պաշտօնս, և մատակարարելոյ զնորհուրդս յիմիք տեղւոջ, բայց եթէ ասիպնսցէ հարկաւորութի՛ն։ Այս թէպէտ երևի միաբանիլ ընդ արգելման, սակայն տարբերի նախ՝ զի ոչ է տիրապէս պատիժ, այլ պարզ արգելումն ածայնոց՝ առ ՚ի նշանակել զամենամեծ տրտմութի՛ն նկեղեցւոյ վե՛ւ ամենամեծ անիրաւութի՛ն նղելոյ նմա, զղօրինակ անարգութի՛ն հաղորդութի՛. իսկ արգելքն կո՛՝ արգելումն է պատիժ։ Երկրորդ՝ արգելումն միշտ անկանի ՚ի վերայ անձին ուրուք, որ ևտ զպատճառ արգելման, և ոչ դադարումն յիշատնոց։ Այլ՝ ի՛ր իրի ՚ի ժամանակի դադարման ՚ի միում տեղւոջ՝ ամենեքեան ևս և յանցաւորքն՝ կարող են առաջնեկայ լինել ածայնի պաշտամանց յայլում տեղւոջ. այլ ոչ է այսպէս յարգելման։ Երրորդ՝ ոչ բնաւորէ զարգելումն, անկարի յանկանոնականութի՛, և ոչ՝ որ բնաւորէ զդադարումն յիշատնոց, թէպէտ և ծանրագոյն մեղանչէ։ Այս դադարումն յիշատնոց ոչ է բանադրանք։

Երկրորդ՝ բացընկեցութի՛ն է խափանումն եղեալ միաբնաւորապէս ժառանգաւորին ըստ ինքեան և ուղղակի ՚ի գործ ածելոյ զկարգս իւր, և անուղղակի ամբառնալոյ յայլ վերագոյն։ Կարգընկեցութի՛ն յաւելու ՚ի վե՛ւ բացընկեցութեան զմշանջենաւոր զրկումն կենդրկումն

տուլեն և սրտմտուլեցն նոյն. մինչև կարգըկեցցին դառնալ ի միճակ աշխարհականութեան, որ լինի միջաւ հանդիսի, յորոյ ի կատարիլն մատնի կղերիկոսն ի ձեռս աշխարհականաց՝ պատժիլ ըստ խստուն օրինաց։ Նկանոնականութեն վս յանցանաց, զորմէ է մեծագոյն դժուարուլեի, է ըն նմին օրինակի կանոնական արգելք, կի մշորըն չինաւոր անընդունակուլեի, նախ՝ և ուղղակի՝ ընդունելոյ զսուրբ աստիճանս, երկրորդաբար՝ և ըստ հետևորդի՝ զընկալեալսն պաշտելոյ։ Ոչ ըն այսմ ոչ բացընկեցուլեին, ոչ կարգընկեցուլեն, և ոչ անկանոնականուլեին վս յանցանաց, են բժշկականք, կի աւ ի ուղղուլեի, զորօրինակ բանադրանքն, այլ սակի պատիժք աւ ի վրէժխնդրուլի։ Ոչ դարձեալ ոչ միայն զրկեն ի գործածուէ հոգևորաց՝ զորօրինակ բանադրանքն, այլ և որչափ ինչ հնար է՝ զրկեն յընդունակուէ աւ այնոսիկ։ Ոչ և՝ բանադրանքն բարձեալ լինի արձակմամբ. իսկ բացընկեցուլեին, կարգընկեցուլեն, և անկանոնականուլեին ևս և վս յանցանաց, ոչ լինին բարձեալ՝ բայց եթէ անօրինմամբ օրինաց, որ ըն բնուլեն իւրում պահանջէ լինել մշանջենաւոր։

Ասելի է երրորդ։ Իւրաքանչիւր տեսակ բանադրանաց բաժանի ի բանադրանս չէրեսանց, որ յորինաց տուլէ է ընդդէմ ամ հպատակաց, որք զայնպիսի ինչ գործեսցեն, և ի բանադրանս ի խոպրխանէ, որ տուեալ լինի՝ եթէ ընդհանուր և եթէ մասնաւոր վճռով վերնագունին կի դատաւորին։ Ընդհանուր վճռով, ոմն եթէ ասասցէ վերնադոյնն. եթէ որ զայնպիսի յանցանս գործեսցէ, եղիցի նզովեալ։ Ասնաւոր վճռով, զորօրինակ եթէ ասասցէ. եթէ Պետրոս ոչ հատուցցէ ի միում ամսեան, եղիցի նզովեալ։ Սակայն է խոհ ըն մէջ բանադրանացն յիրաւանց, և ըն մէջ բանադրանացն ի մնորդականէ. զի բանադրանքն յիրաւանց միշտ տևեն, բայց եթէ յետս նահանջեսցին օրէնք. իսկ բանադրանքն ի մնորդական կորուսանէ զզօրուէիւր մնհամար կի բարձրկեցուլ տուողին, մինչև ոչ ումեք յետ այնորիկ անկանիլ յայն. իսկ որ յառաջագոյն անկեալ էցէ մեայ կացցէալ՝ մինչև արձակեսցի։

Ասելի է չորրորդ։ Զարձեալ իւրաքանչիւր բանադրանք բաժանի ի բանադրանս գոնել չէրեսոյ, այս է՝ զոր օրէնքն կամ դատաւորն վճռով ներգործուլի պարտ անդէ, և յայն տակս նոյնն գործով, կամ գործելովն ղյանցանս՝ առանց այլ ինչ վճռոյ՝ անկանի ըն բանադրանքն. և ի բանադրանս գոնել չէրեսոյ, որով օրէնքն կամ դատաւորն սպառնայ միայն բանադրել, կամ հրամայէ անկանիլ ըն բանադրանք. և ըն այսմ ոչ նոյնն գործով կամ յանցանօք, այլ այլով վճռով դատաւորին պարտի անկանիլ ըն բանադրանքն։

Ասլ դժուարուլի է ճանաչել, թէ ևրբ արդեօք վճիռն կի օրէնքն փակեն զբանադրանս՝ տուեալ կամ տալի վճռոյ։

Նախ առաջին՝ յայտ է, թէ բանադրանքն է տուեալ վճռոյ, յորժամ օրէնքն կամ դատաւորն ասէ. Ով ղայս արասցէ՝ եղեալ նոյնն գործ, նոյնն կրասցէ։

Այլ արդ՝ ծանուցանեն առ հասարակ մատենագիրք, թէ ի հաւասար տարակուսեալ, յորժամ եղելքն են բացարձակապէս անբացարձակ, պարտ է առաւել գտանել բանադրանացն լինել տալն վճռոյ, քան տուեալ վճռոյ. վճռի ըստ կանոնի իրաւանց՝ 49. ի 6. Ի պատճառս պարտ է առնել ջնջելոյ։

Գ Ր Ա Կ. Ր։

Ընդէ՞ր ի յեկեղեցւոջ իշխանութեի տալոյ զբանադրանս։ Ի սահմանել ի ժողովն Կոստանդիոյ գում. 8. մերձորութեի 30. Վեհկեհեայ, և գում. 15. մերձորուի 19։

Յուցանեն նաև՝ ի 16. և ի 18. գլխոյ Սնատե. ուր Քրիստոս տայ առաքելոց զիշխանութեի կապելոյ և արձակելոյ, մինչև զոր միանգամ կապեացեն կի արձակեսցեն յերկրի, եղիցի կապեալ կամ արձակեալ ի յերկինս։ Ոչ թէ զայս պարտ է իմանալ ի վերջ իշխանութեն կապելոյ ևս և բանադրանաց՝ ոչ միայն ուսուցանեն որ Հարք, այլ և յայտնապէս մակաբերի յայնմանէ, զոր Պաւղոս յաւելու ի վերայ Սնատե. 18. թէ եղիցի իւրև զհեթանոսն և զմաքսաւոր նա, որ ոչ լուիցէ եկեղեցւոյ. մինչև լինել արտաքսեալ ի հաղորդութեի հաւատացելոց, զորօրինակ հեթանոսաց և մաքսաւորք էին յայնժամ արտաքսեալ ի հաղորդութեէ Հրէից։

Երկրորդ՝ Ոչ աբելոյն, որ ի գործ էած զայս իշխանութի ի Կորնթ. Ե. մատենէ զազգապիղծն ստատնայի ի սատակումն մարմնոյ, զի ոգին ապրեսցի։ Ըստ ի ա Տիմոթ. ա. ասէ՝ թէ մատնեաց զՀիմենոս և զԱղեքսանդրոս սատանայի, զի խրատեսցին չհայհոյել։

Երրորդ՝ ի գործածութեէ համօրէն եկեղեցւոյ, յորում ի ժամանակէ անտի առաքելոց միշտ եղև սովորութի տալոյ զբանադրանս, ոչ յայտ է ի հնագոյն կանոնաց, որք ասին առաքելոց, և ի կանոնաց ժողովոց, այլ և ի գրոց ծայրագոյն քահանայապետաց։ Տես յիրաւունս՝ գլուխ 24. խ. 3։

Չորրորդ՝ պատճառաւ։ Յայմ բարեկարգ հաստատակատուած պարտ է լինել իշխանութի զկեցոյց շնորհաց ի հասարակաց բարեաց, յորժամ այն արժանի է նոյ, և բարին հասարակաց պահանջէ. այս յայտ է ըստ ինքեան, իսկ արդ՝ եկեղեցին ի Քրիստոս սահմանեալ է բարեկարգ հաստատակատուած, և բանադրանքն ոչ այլ ինչ են, բայց եթէ զրկումն ի հասարակաց հոգևոր բարեաց, ոյր յայտ է ի նախընթաց. պր։ Ապա։

Եթէ ոմանք ի որց հարց երևին կշտամբել զբանադրանս, խոսին զայնցանէ, որք ոչ նկատմամբ բարոյ, այլ յատելութէ որոշեն զոմանս յեկեղեցւոյ առանց յոլոյ միաբանդամ դարձի։

Ասելի է երկրորդ։ Ամ և միայն առաքեալքն որ ունի զերաւաբանաւն հոգևոր յարտաքին առնել կարող է կարգաւորել իրաւամբ դնել զբանադրանս ի վերջ յամառ հպատակաց։

Այս նախ, (1) Ինչոյն որ ոռնի զբաւոխն, ոռնէ հոգևոր յարտաքին ոչխարն. վերջ որք պարտաւորեն զմարդիկ բաղդատութէ այլ մարգկան, և ի մէջ բերեն զհրապարակական ճշդողական պատիժս, վերաբերին ի հրապարակական առեան արտաքին դատաստանի։

Այս երկրորդ, Ամ որ ոռնի, և այլն. վերջ որովհետև եկեղեցական իշխանութին արտաքին առնի է առ ի պահել զկարգադրուի օրինաց, պատուհասանաց, և վճռոց, անզօր լինէր և անղէն, եթէ ոչ էր կարող պատժով և բանադրութ զայպտամբս ընկճել և ճնշել, և առ հնազանդուի բռնադատել։ Ինացեր մասունքն յայտ են ի նախընթ. պր։

Արդ՝ սք են որք կարգաւորել իրաւամբ կարող են դնել զբանադրանս. ծայրագոյն քահանայապետն և ընդհանուր ժողովք ի բովանդակ եկեղեցին. եպիսկոպոսունք՝ նկատմամբ նոյ, որք բնակին ի վիճակս իւրեանց. արքեպիսկոպոսն ի վիճակս օգնական եպիսկոպոսաց իւրոց, բայց միայն յորժամ այն առնէ նոյ, և կամ յորժամ դատն բողոքմամբ հասանէ առ նա. փոխանորդք եպիսկոպոսաց, որք ունին զմի տաեան ընդ եպիսկոպոսին. ժողովն կանոնիկոսաց ի պարապուրեն աթոռոյ, և փոխանորդ նի, վերջ յաջորդէ ի տեղ եպիսկոպոսին. ոմանք աւագարկաւագունք և աւագերեցք՝ ի սովորութէ. կարդինարք եկեղեցիս մակագրեալ նոյ. և հուսկ յետոյ յայտնուրէ առաջնորդք կրօնից, որք ունին զերաւաբանաւն իրը եպիսկոպոսական։

Ըստ սոյն Յովհաննէս՝ նախայիշ. և ըստ Գր՝ Քան-

(1) Ինչ՝ ի. 23. ղ. 1. Բուլ։

Քրանալ յեկեղեցեացն, ի մի պաշտօնի կարգս, զատս. այն ի դիպուածս ինչ կանխաւ յիրաւանց շնորհեալ էր ժողովրդապետաց. այլ այն սովորութի բարձաւ ի միջոյ։ Եւ ոչ իսկ արբատուհիք կարօղ են առնել զայն. վասն ոչ ունին զիրաւասրանութի հոգևոր, այլ միայն գոնատեսական, զորօրինակ հայրն ի մի ընտանեացս։

Սակայ է երրորդ։ Որք ունին զկարգաւոր իշխանութի գնելոյ զբանադրանս, կարօղ են զայն յանձն առնել այլոց։ Կվ. Քրանալ եկեղեցեացն. ի մի պաշտօնի կարգաւոր եպիսկ. ի 6։

Եւ կարօղ է զայս իշխանութի յանձն առնել ուստ և իցէ ժառանգաւորի, որ ունիցի զարտօնութի ժառանգաւորաց. վասն սորա են ընդունակ հոգևոր իրաւարանութե, առ որ ոչ պահանջի իշխանութի կարգի։

Ձե հնար յանձն առնել աշխարհականաց. գլ. Յիննիերբրդ. 16. խ. 7. գլ. Ացախ. ի մի գատս. գլ. Լուգեաբ. վիճ. 89. բայց եթե ի Պապէն ի լուսթի իշխանութենն. վասն այս է ըստ մարդկային իրաւանց, յորս կարօղ է տնօրինել։

Խնդրիցես։ Երդնօք զբանադրանս պաշտ է տալ դրօվ, բացատրեալ զպատճառ բանադրանացն։

Պինեմ, թե այո։ Ակսպես վճռի գլ. Քրանալ եպիսկոպոս. ի մի վճռ. Նզով. ի 6։ Եւ որ այլազգ առնէ՝ զամիս մի կախ ի մտանելս յեկեղեցին, և յայծային պաշտամանց. սակայն ոչ բացայայտի բանադրանացն լինել ոչինչ, այլ դի բաւ թէ ազգացուցանելի ի վերնագունէն։ Կրկ ընդ հակառակն՝ ի գլ. Սոհնոյ. և գլ. Օրինոց. դատ 2. խ. 1. յորս բացատրի, թէ բանադրանքն անգիր տոնել, և ոչ պահան վճռոյ առնել սրբոյ հոգոյ։ Այլ՝ իրաւունքն, զոր ի շատակեցաք, է կատոյ քան զսոսա։

Պ Ի Ա Կ. Կ.

Հարց ՚ի հնար է տնել ՚ի քահանայ, և ՚ի ոչ։

Սկսելի է նախ։ Այնոյն մարդն ճանապարհորդ, միտեալ, որ ունի զբանավարութի, և ունի զվերնագոյն յեկեղեցւոջ, կարօղ է կապել բանադրանօք։ Պարքն յայտ է ՚ի սահմանէ բանադրանաց՝ պր. 1. և առաւել ևս մեկնի։

Սակ նախ, Այնոյն տարբն ճանապարհորդ, որ առնի զբահավարութի. վասն նա միայն է ընդունակ յանցանաց, յամառութե, և ուղղութե, որք միայն են պատճառ, որոց վասն հնար է դնել զբանադրանս, ոչ առնիկ ասացաք, և ասացուք ՚ի յաջորդ եղրակացութե։ Եւ ևս՝ եթէ դևք և եթէ մեռեալք են արտաքոյ առնելի զենոհօրեալ եկեղեցւոյ։

Սակ երկրորդ, Այրեալ. վասն ոչ ասացաք՝ եկեղեցին ոչ է կարօղ դնել զբանադրանս՝ բայց եթէ ՚ի մի հպատակաց, իսկ մարդն լինի հպատակ եկեղեցւոյ միտութե։

Սակ երրորդ, Որ առն զբերնաբաց յեկեղեցւոյ. վասն հաւասարն ՚ի մի հաւասարին կամ ՚ի մի վերնագունին չունի զիշխանութի. և յայն սակս ծայրագոյն քահանայապետին չէ հնար անկանիլ ՚ի բանադրանս։

Խնդրիցես։ Երդնօք ուխտաւորն ներքոյ անկանի բանադրանաց վճռակացն, ընդ որս անցանէ. և հպատակն՝ որ է յայլում վճռակի՝ բանադրանաց իւրոյ վճռակին։ Երկրորդին խնդիրքս ևս են ընդ վճռարանութե։ Ըստ հաւանականագոյն ինձ երևեալ կարծեացն՝

Պինեմ առաջին խնդրոյն, թէ լուծուն սր կախի զայլոյ խնդրոյ, թէ արդեօք ուխտաւորք ներքոյ անկանին օրինաց սահմանացն՝ ընդ որս անցանեն. զոր լուծաք ստորասարար ՚ի ճառն՝ որ ՚ի մի օրինաց, վիճ. 4. տես անդ։

Եւ երկրորդ խնդիրն պինեմ, թէ հպատակն ոչ անկանի ՚ի բանադրանս տուեալս ՚ի սեփականն վճռակի ընդհանուր օրինօք կամ սահմանադրութե, եթէ արասցէ ընդդէմ նր յայլում վճռակի։ Ակսպես գրի բացայայտ յիրաւունս, գլ. Ձեզ հոգոց. ՚ի մի սահմանադր. ՚ի 6. ուր ընթեռնումք. Սահմանադրութիւնք եպիսկոպոսին, որոյ յահիճնին, որ առնին զքաղաքին, վճիռ դնէին հրապարակի, հպատակ նր՝ որ արարոյ վճռոյն նր առնին զքաղաքին ազնիւ խնդիր պարտաւորեալ ճանաչին, որովհետև արարոյ վճռոյն առջին խոչ անպարտիչ ոչ հանդիպէր։

Ասացաք, ընդհանուր օրինօք կամ սահմանադրութի. վասն տարակոյս է ՚ի մի բանադրանաց՝ որ մասնաւոր պատուիրանաւ կամ վճռով տուեալ. զորօրինակ եթէ եպիսկոպոսն արգելէ Յովհաննու ժառանգաւորի՝ որ երթա-

լոց է յուխտագնացութիւն՝ ընդ պատժովք կախ-
ման, զի մի խաղացցէ զխաղ քոչէից։ Ոմանք
ասեն, թէ նա ոչ անկանի ընդ բանադրանօք,
եթէ խաղացցէ յայլում վիճակի, կամ յիւ-
րում վիճակի և՝ այլ յաղատ տեղւոջ. զսկզ
պատճառս կանոնին է ընդհանուր՝ արգելոյ վի-
ճային առնլոն կորն անպատիժ ոչ հնազանդիլ։

Այլ ոմանք ևս ասեն, թէ նա անկանի ընդ
բանադրանօք պատճառաւ տարբերութեան, զոր
ասեն լինել ըստ մէջ ընդհանուր օրինաց կամ
սահմանադրութեանց, և ըստ մէջ մասնաւոր պատ-
ուիրանաց կամ վճռոց. քանզի օրէնքն կամ սահ-
մանադրութիւն ընդհանուր ձգի ՚ի սահմանս, և
անդ զկայ առնու, և յայն սակս զոչընչ պա-
րաւանդէ արտաքոյ սահմանից. իսկ պատուի-
րանն կամ վճիռն մասնաւոր անընդմիջապէս
ձգի ՚ի հպատակեալ անձինս, և կայ մեայ յան-
ձինս նոցա՝ յինչ երկիր և երկիցեն։ Այսպէս
Համարի Այսման։ Օգր և հատանականագոյն
համարեսցի ընթերցօղն, ընտրեսցէ։

Այլ ասի՝ այս գժուարութիւն ոչ անկանի ՚ի
վերս առաջնորդաց կրօնաւորաց, որոց իրաւարա-
նութիւն ոչ պարագրի սահմանօք տեղեաց ինչ,
զորօրինակ իրաւարանութեան եպիսկոպոսաց, այլ
է անընդմիջապէս ՚ի վերս անձանց, յորս սակս
ուր և իցեն՝ միօրինակ են հպատակ նոցա, և մի-
օրինակ ՚ի նոցանէ զսպել և պատժել կարեն։

Դարձեալ է և կրկրորդ։ Եթէ դնին բանադրանք,
բայց եթէ ՚ի արտաքին մահուամբ մեղաց՝ որ
յիւրում տեսակի կատարեալ՝ և փակէ զանձ-
նաղանդութիւն կամ զլամառութեի ընդդէմ
եկեղեցւոյ։

Ակնդէտ և յայտ է՝ ոչ զառաջինն, ըստ մեծ
մասին ՚ի սահմանել բանադրանաց՝ պր. 1. տա-
կաւին առաւել ևս յայտնի։

Յոր նախ, Ոչ արտաքին մահուամբ մեղաց,
զոր ոչ ասացաք ՚ի սահմանի բանադրանաց,
եկեղեցին ոչ դատի զնոքունց, և ոչ գնէ ՚ի
վերս զծանրագոյն պատիժս, զորօրինակ է բա-
նադանքն, բայց եթէ ՚ի ծանրագոյն մեղաց.
քանզի պատիժն պարտի համեմատիլ յանցա-
նացն։ Եւ բայ առնուլ պարտ է՝ եթէ իցէ կա-
խումն՝ կամ արգելք ՚ի թեթև իրս։

Յոր երկրորդ, Որ չէ-ըս-ի թեանն խոտքեալ.
զզի թէպէտ եկեղեցին կարող է դնել զբա-
նադրանս ՚ի վերս մեղաց՝ որ չէ ևս կատարեալ,
զորօրինակ ՚ի վերս հրամայողին զմարդասպանութի,
թէպէտ և ոչ գՀետ եկեսցէ գործն, սակայն
եթէ զայն ոչ բացատրեսցէ, իմացեալ լինի ՚ի
վերս գործոյն կատարելոյ յընդհանուր կանոնէ,
թէ զգժպիհին պարտ է ամփոփիլ։ Այսին իրի
որ չկանայ հարկանել, և ոչ հարկանէ, ոչ ան-
կանի ընդ նզովիւք. եթէ եղեալ էր բանա-
դրանք ՚ի վերս մարդասպանին, որ վիրաւորեր
զոր մահուամբ, ոչ անկանէր ըստ բանադրանօք,
եթէ վիրաւորեալն ոչ մեռանէր ՚ի վիրացն։

Յոր երրորդ, Որ ոք ինչ պանծապատճառ
և պատասխանի ընդդէմ եկեղեցոյ։ Յայտ է,
ոչ կանիտաս ասացաք, նախ՝ ՚ի բանիցն Պետ.
Գործ. ժբ. 17. * Այնպէս և եկեղեցւոյն ոչ
լուծանէ, եղեալ ինչ ընդ պանծապատճառ և պա-
տասխանի։ Երկրորդ՝ ՚ի գլ. ՚Ի կողմանէ. 1. ՚ի վերս
նշանակ. բառիցս. ուր յատակ բերին միայն եր-
կու պատճառք, ուր որոց մարթի է դնել զնզովս
կամ զարգելս ՚ի վերս ուրուք, (զնոյն ասել
պարտ է և զկախմանէ.) մի՝ վասն կոչեցեալ
և ազդ արարեալ՝ ոչ կամի հրաժարիլ ՚ի մեղաց,
և երկրորդ՝ զի ՚ի հրամայելն առնել զապաշ-
խարանս վերս մեղացն գործելոց՝ հրաժարի։ Եր-
րորդ՝ գլ. Օ՛նէ եղեսդ. ՚ի վերս բողոք. ասի,
թէ պարաւանդելոյն նզովիւք կամ արգելմամբ՝
ընդհետայն ըստ լինելն պատրաստ ՚ի հնազանդիլ
գաւառաւորին, և տայ զապահովութի, պարտ է
արձակել։ Զնոյն ասէ՝ գլ. ՚Ի Եղեսդ. ՚ի վերս
սահմանադր։ Այս եթէ ոչ է յամառ, այլ
պատրաստ ՚ի հնազանդիլ, ոչ է պարտ պարա-
ւանդել բանադրանօք։ Յորրորդ՝ գլ. 1. ՚ի վերս
վճռ. նզովս. ՚ի 6. ասի, թէ բանադրանքն ոչ
է սոսկ պատիժ կամ վրէժխնդրութի, այլ
բժշկական պատիժ, որ խրատէ, և ոչ ար-
մատաքի խլէ. վասն զգուշութի մտադիր լիցի
եկեղեցւոյն պատասխանի, զի ՚ի պատ զոյնսին
ցուցցէ զանձն կատարել՝ զոր վերացեր ՚ի ոտ
զնէն և ոտ բերելոյն։ Իսկարդ՝ տարդութի և
անբանաւոր լինէր՝ տալ ուժ զիխտ դեղ-
բայս, զորօրինակ է բանադրանքն, յորժամ
այլագոյ առողջանալ և ուղղիլ հնար է, ոչ հա-
մարի իրաքանչիւր որ լինել, ցորչափ պատ-
ուիրանաց և աղաչարութեանց եկեղեցւոյ ոչ
հրաժարի հնազանդիլ։

Յատի ունիս մակարերել նախ, թէ չէ հնար
լինել բանադրանաց վերս մեղաց ամենևին անցե-
լոց, այս է՝ որ խոպան դադարեալ իցէ, և ոչ
ունի յարակցեալ զատաչիկայ անհնազանդու-
թիւն։

Ունիս մակաբերել երկրորդ, թէ չէ հնար

տալ զբանադրանս առանց նախընթաց ազդարարութեան. սակայն ըստ այսմիկ տարբերութեան, զի առ բանադրանս որ օրինօք կամ պատուիրանաւ՝ եթէ իցէ ընդհանուր և եթէ մասնաւոր՝ գնալ ի վիրնագունէն՝ ըստ սպառնալեօք բանադրանաց ի վէր ազգացդ մեղաց, զորօրինակ՝ որ հնձէմ արտսդ ալոյս եմ, կամ երբ արտսդ ալոյս լինի, նովին գործով եղեցիս նզովեալ, կամ նմանեալ, ևն. ոչ պահանջի այլ ազդարարութիւն, բայց եթէ նորին իսկ օրինաց կամ պատուիրանին, որ զօրութիւն իւրով ազդէ հանապազօր. բայց միայն զի արգելցի լինել իմիք. վասն եթէ պատուիրեացի առնել ինչ, եւ եթէ պէտք են ազդարարութեան, զի երբ ելցի յանցաւորին յամառութիւն յամել, և ոչ ինչ օրինաւոր խոհանմամբ լինել անթասիր։

Այլ առ բանադրանս, զոր դնել պարտ է մարդոյ վէս անցեալ և կամ առաջիկայ մեղաց, յորում յանցաւորին յամառութիւն հանապազորդէ, և վս օրոյ հրաժարէ յապաշխարելոյ, պահանջի բայայայտ ազդարարութիւն ն. գլ. Յանդիմանելն. ի վէր բողոք. գլ. Հոռվհամպրումէ. և գլ. Օսահմանադրութիւնք. ի վէր վճռ. նղոլ. ի 6։ Պատճառն է, զի զորօրինակ ասացաք, ոչ դնի բանադրանք՝ բայց եթէ ի վէր յամառելոցն. արդ՝ ոչ են յամառեալք, բայց եթէ նոքին՝ որք նախընթաց ազդարարութեանն ընդ սպառնալեօք բանադրանաց՝ հնազանդիլ ոչ կամին։ Իսկ այս պատճառ ցուցանէ, թէ բանադրանքն առանց նախընթաց ազդարարութեան ոչ միայն է անիրաւ, այլ և անվաւեր. նաև այսպէս բացատրի յիրաւունս, գլ. վերոյիշ. Օսահմանադրութիւնք. և գլ. Յահմանել, անդ. ուր ասի՝ այսպիսի բանադրանաց ոչ պարտանիքէ։

Երիցս պարտ է լինել ազդարարութիւնն. գլ. Ի գաւառսդրդ. դատ 16. խ. 7. և գլ. Հոգ ընկաւորդ. դատ 24. խ. 3։ Ուր եւս գլ. Հոռվհամ՝ վերոյիշ. Այլ սակայն ըստ օրինացն Յամառութիւն. Ազգագրաւ՝ ի վէր դատելոյ իրաց, մարթի է լինել մի միայն ազդարարութեան փոխանակ երից ազդարարութեանց, պայմանելով զայնչափ միջոց ժամանակի, որ բաւական իցէ վս երից. զորօրինակ յասելն. ազդ առնեմ քեզ միանգամ վս երից ազդարարուանց, զի յերից աւուրս արասցես զայս, տալով քեզ զերիւրաքանչիւր աւուրս փոխանակ իւրաքանչիւր ազդարարութեանց, կամ զերկուանգամ զայն ժամանակ փոխանակ երից ազդարարութեանց։ Ուստ թէ եթէ իցէ վերահասուանգ, և չիցէ հնար յամել իրացն, ըստ հասարակաց կարծեաց ածարանից՝ կարօղ է դատաւորն նոյնհետայն մխել ի գործ, սպառնալ զնզովս, և ընդդէմ անհնազանդին դնել ի վերայ։

Ինդրիցես նախ։ Արդեօք ազիտութիւն անբասիր առնէ՞ ի բանադրանաց։

Պէտք։ Տգիտութիւն ևս և յաղթելի, բայց միայն չիցէ ակնարժելի և վնհարուռ, եթէ իրաւանց, եթէ գործոյ, և եթէ բանադրանաց յարակցելոց ըստ գործոյ, անբասիր առնէ ի բանադրանաց։ Այլ տես ի ճառն որ ի վէր մեղաց. վիճ. 5. պ. 7։

Ինդրիցես երկրորդ։ Արդեօք անիրաւ բանադրանքն ունի՞ զներգործութիւն ինչ։

Պէտք (1)։ Անիրաւ բանադրանքն վս անդէպ պատճառի, կամ առ պակասութեն գոյացական կարգի, զորօրինակ եթէ պատճառն չիցէ օրինաւոր ցուցեալ, եթէ դիցի զնոյն օրինաւոր բողոքման, և կամ առանց ինչ նախընթաց ազդարարութեան, ևն. եթէ անիրաւութիւն իցէ յայտնի ծանուցեալ, է այնպէս անվաւեր, մինչև չունել նմա զներգործութիւն ինչ. ոչ ըստ ինքեան, վասն է ոչինչ. և ոչ ըստ պատահման՝ պատճառաւ գայթագղութեան, զի գոլով անիրաւութիւնն յայտնի ծանուցեալ, ոչ ուժգին հնար է լինել գայթագղուի, եթէ ոչ պահեսցի։

Իսկ (2) եթէ անիրաւութիւն բանադրանացն իցէ գաղտնի, զորօրինակ եթէ դիցի ի վէս անմեղին՝ որ իրաւարանօրէն ցուցցի մեղապարտ, իրօք և յատենի խղճի մտաց է անվաւեր, և ըստ ինքեան ոչ ունի զներգործութիւն ինչ. սակայն ըստ պատահման պատճառաւ գայթագղուն ունի զներգործութիւնս ինչ։

Յուց. առաջին մասն։ Անկեղծին ոչ կամի, և ոչ իսկ կարօղ է զանցանել զսահմանսդ իշխանութեան իւրոյ, իսկարդ՝ իշխանութեին դնելոյ զբանադրանս առաւաւ անկեղծացոյ ընդդէմ անհնազանդ յանցաւորաց, և ոչ ընդդէմ անմեղաց. ապա։

Յուց. երկրորդ մասն։ Անանագրանքն, զորմէ խօսիմք, ի կողմանէ դատաւորին է արդար, նաև առ հասարակաց օգուտ, և ի իրաւ եղիջ. ապա իրաւարանօրէն մեղապարտ պարտաւորի

(1) Ուր. խ. 21. պ. 4. Բաղ. Ե առ 1։

(2) Ընդ-

հն ազանդիլ նմա, ըստ որում հարկաւոր է առ հասարակաց օգուտ, և ղի մի իշխանուին դառնացուցանել զիցի արհամարհելի։

Հայամանէ ունիս մակաբերել, թէ այսպիսի բանադրանօք պարտանդեալն՝ իսկապէս և առաջի Աւ ոչ զերկի՝ ի նպաստից և յաղօթից եկեղեցւոյ, յիրաւարանութենէ՝ ի ներքին և յարտաքին առնէն, յիշխանուէ տալոյ և ընդունելոյ զեկեղեցական բարերարութիս, ի ներգործական և ի կրաւորական գործածութենէն խորհրդոց, և ոչ՝ ի հաղորդութենէ հաւատացելոց. մինչև կարող է՝ ի ծածուկ և առաջի որոց գիտենն զանմեղութենէ նո՝ արձակել, պատարագել, տեսանել զպատարագ, հաղորդիլ ըստ այլոց՝ եթէ՝ ի հոգևորս՝ և եթէ՝ ի ժամանակատորս. այլ ոչ հրապարակաւ կամ առաջի որոց ոչն գիտեն զանմեղութենէն նո՝ ի պայթագրութենան։

Գ Լ Ո Ւ Խ Ք Ա Ր Դ։

Ո՞ կարէ արձակել՝ ի բանադրանաց։

Ասեմք, թէ բանադրանքն բարձանալ լինի միայն արձակմամբ օրինաւոր դատաւորի, և ոչ մանհոմամբ կամ բացընկեցութ նո։ Մինչ պատիժն օրինաւոր վճռաւ դատաւորին եղեալ՝ ի վե՝ անցանէ յիրն դատել, և յայն սակս նովին հրապարակական իշխանուէ՝ որով եդաւ՝ պարտ է արձակել։

Ասելի է նախ։ Զբանադրանս՝ ի մարդկանէ եղեալս մանաւոր վճռաւ՝ նա միայն կարող է արձակել՝ որ զայն եդ, կամ վերնագոյնն, կամ յաջորդն, և կամ յանձնարարեալն։

Առաքի նախ՝ ի 47. կանոնէ ըստ Արաբացւոց՝ ժողովոյն Կիկիոյ, որ է օրինակ զայս. Ոչ ոք եպիսկոպոս թլսկիոպոս վնաս, զոր այլ եպիսկոպոս կոչեաց նա՝ որ կոչեցեալն՝ կենդանի էդե։ Արկարդ՝ կայսր կանոնէ՝ որ առ հասարակ ընկալեալ. Կորնի և թլսկիոպոսն, և կոչեալն։ Արրորդ՝ ի գլ. Լսահեռուէ. յօդ. Վեցերորդ. ի վե պաշտօնի և իշխան, յանձնարարեալ դատաւորի։ Պատճառն է, զի բանադրանքն ըստ այսմ՝ ի մանաւորի եղեալ է վճիռ դատաւորի, զոր ոչ այլ ոք, բայց եթէ վերնագոյնն, կամ յաջորդն, և կամ յանձնարարեալն լուծանել կարող է, առանց բռնաբարութենէ իրաւանց նորա։

Ասելի է երկրորդ՝ Ի վերապահեալ բանադրանաց իրաւանց կամ ընդհանուր վճռոց՝ նա միայն կարող է արձակել, որ վերապահեաց անձին, կի՝ վերնագոյնն, կի՝ յաջորդն, և կամ յանձնարարեալն։ Այսու է ի նախընթաց աղբակացութենէ։

Ասելի է երրորդ։ Ի բանադրանաց իրաւանց, եթէ ոչ իցէ վերապահեալ, կարող է արձակել ո՛ ոք և իցէ խոստովանահայր. գլ. Սոդե. ի վերայ վճռ. Նզով։ Նմ այսոսիկ սովոր են խոստովանահարք կանխել զարձակումն ի բանադրանաց քան զարձակումն ի մեզանց։ Ընդոյն երևի, թէ ասել պարտ է ի վե տուեալ բանադրանաց ի մարդկանէ ընդհանուր սահմանադրութե, եթէ ոչ իցէ վերապահեալ. վասն բանադրանքն զայսօրինակ ընդհանրապէս տուեալ՝ ոչ փակէ տիրապէս զվճիռ դատաւորին, որոյ լուծումն ի ձեռն այլոյ լինի բռնաբարութենէ իրաւարանութենէ նո. այլ առաւել փակէ զպատուհիրան ըստ այսմիսկ բանադրանօք եղեալ ի վե, և յայն սակս յայսմ կողմանէ հաւատարի բանադրանաց իրաւանց։

Հայցացանէ ունիս մակաբերել, թէ պարտանդեալն բանադրանօք մանաւոր վճռաւ եպիսկոպոսէ իւրմէ վե յանցանաց և յամառուէ, եթէ փոխեսցէ զընակութենէն, կամ մոցէ ի կրօն, չէ կարող արձակիլ յայլմէ եպիսկոպոսէ կամ յաւագնորդէ. վասն եպիսկոպոսն՝ որ եդ զբանադրանս վե դատին՝ որ յիւրում տանէնի սկզբնաւորեալ՝ և չէ ևս կատարեալ, ունի զիրաւունս ի վե նո, զոր բանադրանօք պարտանդեաց, ըստ այսմ կանոնի իրաւանց. Կանխաս էլեգեոն է գործոցէ յոյնէնէ դէ ի դէն գործ խոտորել ոչ կարէ։ Ոչ մակաբերի ի գլ. Ամոլբրիեցէր. ի վե պատկանաւոր առնի։ Այլ ոչ այսպէս՝ վս ներհակել պատճառին, եթէ բանադրանքն իցէ յիրաւանց, կամ ի մարդկանէ ընդհանուր սահմանադրուէ տուեալ. քանզի յայնժամ կարող է արձակիլ յայլմէ եպիսկոպոսէ առաջնակայ բնակուէ իւրոյ, կամ յայլմէ առաջնորդէ, նա թէ՝ յումմէ և իցէ խոստովանահօրէ, եթէ չիցէ վերապահեալ ի տեղոջ բնակութենէն։

Խնդրիցես նախ։ Արդեօք առ վաւեր արձակումն ի բանադրանաց՝ պահանջի բացորոշեալ կերպ բառիցն։

Պնեմ, թէ ոչ. վասն այդ ոչ ուրեք հարկաւ պահանջի առ վաւերութենի արձակմանն. այլ բաւական է ասել բանի՛ք կամ նշանո՛ք՝

որք

որք բացատրեն զկամս արձակողին։ Սակայն չէ հնար լինել սուկ ներքին ներգործութեամբ առանց բառից կամ նշանաց, զորս է ներգործութեի պատաքին իրաւաբանութեան։

Ինդրելոյս կերպրդ։ Ըրդեօք հեռաւորն կամ ակամայն կարօղ է արձակիլ ի բանադրանաց։

Պնեմ, (1) թէ այո. զի հեռաւորն կամ ակամայն կարօղ է պարաւանդիլ բանադրանք, ես առաւել կարօղ է արձակիլ յայնմանէ միայն կամաք նր, որ ունի զիշխանութեին արձակելոյ, այլ մարդկային եղանակաւ նշանակեալ։

Իւ (2) չէ ինչ ընդդէմ, թէ շարժիչ պատճառ բանադրանացն է յամառութեին, որ երևի ձեռագրաւ լինել յակամայն. զի վերնագոյնն ևս և ի կալ յամառութեին կարօղ է անտեսութեամբ զկրաւամբ եդեալ բանադրանս թողուլ, եթէ տեսցէ օգուտ լինել վրկութեն նր, յորոյ ի բժշկութի տաճեալ եղև։

ԱԼԻՔՍԻՈՒՆ Ա։

Ի վերայ բանադրանաց ի Տաճառաւորի, Եւ և ի վերայ անկանոնականութիւնն։

Սկն Թովմա՝ ք. 21. 22. 23. և 24.

ՊՐԿ. Ա։

Ի վերայ նզովից, և փոքրոց նորա։

Պսելի է՝ նզովքն, (որ ի Լատին բարբառ Excommunicatio ասի, իբր արտաքոյ համայնականութեան, որ նշանակէ զհաղորդութիւն,) ընդհանրապէս առեալ՝ է Լիեղեցոյն բանադրութի, որ որոշի ի հաղորդութենէ ինչ եկեղեցոյ։

Ի կրկին, մեծ, և փոքր։ Փոքրն է՝ Լիեղեցոյն բանադրութի, որ որոշէ ի Լուսաւորչեան համայնութենէ, յոմ չընդունելոնէ նորէրդոյ։

Սինն (3) նզովքն է՝ Լիեղեցոյն բանադրութի, որ որոշէ զինչ և նոքա օրինաւոր հաղորդութենէ Լուսաւորչեան համայնութենէ։ Իւ այս միշտ իմացեալ լինի, յորժամ բանք լինին զնզովից առեալ յարադրութեն. գլ. Լիեք ղա. ի վերվ. նզով։

Ա a a 2 (1) Ընդ՝ ք. 24. գ. 2. բաղ։ (2) Ընդ՝ առ 2։ (3) Ղմ. ք. 21. գ. 1. բաղ։ (4) Ընդ՝ ե առ 1։

Իւ (4) իմացուած տուեալ սահմանիս՝ գիտել պարտ է, թէ երբեակ է հաղորդուի հաւատացելոց։ Մի՝ սուսկապես ներքին, որով հաւատացեալք շնորհօք և ածային սիրով ըմիանան և ըՔրիստի միաւորին։ Երկրորդն՝ սուսկապես արտաքին, որ լինի ի սեղանակցութեն, ի խօսակցութեն, ի տուրևառուութեն, և յայլ ներգործութիս՝ որք վերբերին առ մարդկային ընկերութեի։ Երրորդն՝ խառնեալ, որ լինի յարտաքին գործողութիս և յարտաքոյ գործողութիս, այլ որք ունին զներքինն և զհոգևոր պատուս ի սեփական սահմանադրութեէ, զորօրինակ են՝ եթէ ներգործական և եթէ կրաւորական գործածուի խորհրդոց, հրապարակական նպաստք՝ որ ի պատարագս և յայլ հրապարակական պաղատանս ի ընդհանուր եկեղեցոյ լինին, վճարքն Քրիստի և սրբ՝ որք ներողութիւք մերձեցուցանին, և որ ի կարգին։

Ա՛ն այսորիկ նզովքն ոչ բառնայ և ոչ կարօղ է բառնալ զհաղորդութենէն սուսկապես ներքին, այլ ենթադրէ մահաւորի մեղք՝ վասն որոյ դնի նզովքն՝ բարձեալ, և բառնայ սուսկապես զարտաքինն և զնառնեալն, զորօրինակ արդ մի առ մի մեկնեցաք։ Իւ ըս այսմ տարբերի ի կախմանէ, որ է միայն զրկումն ի գործածութենէ սրբազան պաշտամանն և բարեբարութենէ, և վերաբերի միայն յեկեղեցականս, և ի յարգելմանէ, որ զրկէ միայն ի մասնակցութենէ սրբազան իրաց, ըս զորս են սերբազան։

Ա՛ՆՆԻՆ Գ։ Ի նզովից։

Առաջինն է զրկումն ընդունելութեէ խորհրդոց արտաքոյ դիպուածոյ ծանր հայկաւորութեն. գլ. Ղառնէ այսոցկի. և գլ. Լիեք ղա. ի վերվ. նզով։ Այնք ի մասնակցին խորհրդոց հաղորդին հաւատացեալք։ Սակայն վաւերաբար ընդունին. զի որովհետև վաւերուի խարհրդոց կախեալ կայ զամանադրութենէն Քրիստի, ի դնել նուիրեալ և կերպի, նաև դիտաւորութեն պաշտաւնէին, չէ հնար յեկեղեցոյ խափանիլ, ի բաց առնուլ պարտ է զնորհուրդ ապաշխարութեն, որ անուղղակի խափանի մն անարամադրութեն ենթակայիս։ Սակայն եթէ ապաշխարօղն բարեմտութեէ արասցէ, ոչ համարեալ զանձն նզովեալ, կամ համարեալ թէ նզովքն ոչ

ոչ արգելու զարձակուածն, կամ խոստովանաՀայրն մանասցի արձակել նախ Ի նզովից՝ քան Ի մեղաց, վաւերաբար արձակի Ի մեղաց՝ Ի կալ ճեալ բանադրանացն. վասն նզովքն ասպաշտօղին ոչ բառնայ Ի խոստովանահօրէն զկիրաւարանութիւնն, այլ միայն արգելու զապաշխարօղն, զի մի մերձենացի Ի խորհուրդն՝ ոչ արձակեալ Ի նզովից. և քանզի նա՝ ոպ ենթադրեմք՝ տգիտանայ անյաղթելի տգիտութիւն, և կամ հաւատայ՝ թէ խոստովանահայրն լը օրինի վարի Ի պաշտօնի իւրում, անբաւիր լինի Ի պատուիրանաղանցութիւն այսր արգելման. և ոչինչ արգելու յայսմ կողմանէ լինել վաւեր խոստովանութիւն և արձակման Ի մեղաց։

Ի՛սացաք, Ի՛րդասոյ գէպ ոճ՛ծ ծանր հարկաւորութիւն, զղօրինակ առ խորչելոյ Ի վտանգէ վերահաս մահու, անդամատութեան, վատահատուած, վնասու ընչից, կամ գայթագղութեան, նզովեալն ոչ մեղանչէ ընդունելով զխորհուրդս. զի ևկեղեցական օրէնք ոչ պարտաւորեն ընդ այնչափ խստութիւն։

Երկրորդ գործն է զգուշութիւն Ի հաստարակաց նպաստից եկեղեցւոյ, որք Ի հաստարակաց պաշտօնէից վն համարէն եկեղեցւոյ, կամ վն հաւատացելոց իրրև վն անդամոց եկեղեցւոյ լինին. և և Ի վճարմանցն, որք յեկեղեցւոյ ընորհին հաւատացելոց ներողութիւք. քանզի յայսոսիկ է մեծագոյն հաղորդութիւն հաւատացելոց, և հաւաքի Ի գլ. Ի Ղեղ. 2. և գլ. Ի՛ոբելեցւ. Ի վր վճռ. նզով. Նաև բացայայտ ուսուցանէ պրն Կիպրիոն՝ գիրք 2. տրամաբ. գլ. 23։ Ա՛ինչև ոչ ուսիք լինել օրինաւոր աղօթել վն նզովելոց իրրև վն անդամոց եկեղեցւոյ, այլ առ գառնալոյ յեկեղեցին՝ օրինաւոր է՝ եթէ հրապարակաւ և եթէ առանձինն, զղօրինակ ուսուցաք Ի ճառն՝ որ Ի վր կրօնի. վիճ. 2. պ. 6. տես անդ։

Երրորդ գործն է, զի արգելեալ լինի նզովեալն կատարել զնճդային պաշտամունս, կամ մտանել Ի նո. քանզի այս է հաղորդիլ ընդ հաւատացելոցդ։

Ա՛սացաք որ կամովին ինայ Ի նզովս, յորժամ կարօղ է արձակիլ յայնմանէ, մեղանչէ ընդդէմ պատուիրանին տեսանելոյ զպատրաստ, խոստովանելոյ յամին միանգամ, և հաղորդելոյ Ի զատկին։

Պիտեմ հաւանականագոյնս, թէ այն՝ վնզի որով իրաւամբ պարտաւորի պահել զօրէնս, նովին պարտաւորի՝ յորժամ կարօղ է՝ բառնալ զարգելմունս պահելոյ զօրէնս։ Ա՛յն իրի զանցառութեի պատարագին է նմա կամաւոր և համարելի Ի մեղս Ի պատճառի, այս է՝ զանցառութեին բառնալոյ զայն արգելուած։

Չորրորդ գործն է՝ զգուշանալ Ի մատակարարելոյ զնորհուրդս։ Հաւաքի Ի գլ. Ի՛ննէ պապբՃեաց. Ի վր նզովեալ ժառանգաւորի, և յայտ է Ի ծանօթութենէ նզովից. քանզի զի՛նչ այլ ինչ մեծագոյն հաղորդութեի ընդ հաւատացելոց՝ քան մատակարարել նոյ զնորհուրդս։ Սակայն խորհուրդքն մատակարարեալ Ի նզովելոյն են վաւեր. վնզի ոպ կանխաւ ասացաք՝ վաւերութեին նոյ կախեալ կայ զահմանադրութենէն Ի՛սի, զոր ոչ է կարօղ խափանել եկեղեցին։ Ի բաց առնուլ պարտէ զնորհուրդ ապաշխարութեի՝ զոր տայ ոչ ներելով նզովելն. վնզի առ այն պահանջի իրաւարանութի, յորմէ զգի նզովելն ոչ ներելով, ոպ ասացուք ստորև. բայց եթէ ընդ միջ մտցէ հրապարակական մերկութեի ընդ կնճռապարիր իշխանութեէ, զղօրինակ ասացաք այլուր, և կամ մատակարարելոյն ապաշխարողին Ի վտանգի մահու։ Ա՛յնէ յայսմ, և եթէ Ի նախընթեաց գործոյ Ի բաց առնուլ պարտ է զղիպուածն Հարկաւորութեի, զղօրինակ ասացաք զառաջին գործոյ։

Հինգերորդ գործն է՝ անընդունակութեին ընդունելոյ զնչէ և իցէ բարերարութեի, զարժանապատուութ, կամ զպաշտօն ևկեղեցական, մինչև առաջարկուն կամ ընտրուն նզովելոյն, ևս և գրուէ կամ հաստատուէ՝ նովին իրաւամբ լինել ոչինչ։ Հաւաքի Ի գլ. Ի՛ստեփղոսէ։ Ա՛ւ պատճառն է, մի՝ զի հարկաւորն ինչ և իցէ պաշտօն ևկեղեցական՝ է մեծագոյն, և այն՝ եկեղեցական հաղորդութեի. և երկրորդ՝ զի յարգելոյն զգործածուի ներգործութեի՝ հարկի արգելեալ այն ամ, որով լինի ժամանել առ այն. ա՛դ՝ արգելիլ լինի նզովելոյն գործածութեի եկեղեցական պատուոյ։

Վեցերորդ գործն է, զի նզովեալն ոչ ներելով զնի յամ գործածուէ հոգևոր իրաւարանութեե.

նուէ. գլ. Ղ՚ոմ. 24. խ. 1. գլ. Ա՚ր՚ն՚ա՚ զբոմ. Ի մի պաշտօնի յանձնարարելոյն. Ի 6. գլ. 1. Ի մի պաշտօնի փոխանորդին. Ի 6: Ա՚ւ ես՝ Ի գործադութէ քաղաքական իրաւաբանուէ՝ դեմ ը՚ն հասարակ մեկնութէ կանոնագիտաց Ի գլ. Ա՚եր՚ե՚ց. դատ 15. խ. 6. ուր Վրիգոր Եօթներորդ արձակեաց զնո՚ն, որք ընդ նզովելոց՝ հաւատարմութէ՝ կամ խորհրդով կապակցեալ են, յընծայելոյ զՆազանդութէն նզովեալ իշխանին, մինչև լիցի վճռուն: Ա՚ւ գործեալ զրկի Ի հաղորդութէ արտաքին առնի՛ն, մինչև չլինել կարող լինել դատաւոր, դիւանագիր, փաստաբան, գատախազ, կամ վկայ՝ ևս և Ի քաղաքականս. գլ. Ի՚ Ի ց՚ոյ՚ան՚ել. Ի մի վճռ. և իրաց դատե. և գլ. Ա՚ն՚խ. Ի մի վճռ. նզով. Ի 6:

Ա՚սացաք, նզովելո՚ն ոչ ներելո՚ւ. վասն թէպէտ ը՚ն նախկին իրաւանց ՚ամ՝ նզովեալ զրկեր յայտգանէ, սակայն նորոգ իրաւամբք զնո՚ւի ժողովոյն Կոստանդիայ՝ Ի կոնդակէ Ա՚պրտինոսի հինգերորդի, Ի՚ ներչէց՚ Ի Գ՚այ՚ետ՚ան՚ե՚ց՚. միայն ոչ ներելով նզովելոց՝ լինին սոքա արգելեալ,

Ա՚օթներորդ գործն է, զի պնդագիրն պապին՝ սակայն ոչ այլոց առաջնորդաց՝ Ի նզովելոյն ընկալնի՝ է նոքին իրաւամբ եղծեալ, գլ. 1. Ի մի պատգր. Ի 6: Ա՚ւ յայն սակս սովորութէի է տալ զարձակումն առ զգուշութէի, առ ընդունելութէի միայն գործոյ պիտագրոյն:

Ութներորդ գործն է՝ զրկումն եկեղեցական թաղման, և եկեղեցական պաշտամանց ննջեցելոց, եթէ՝ ոչ ներեալ նզովեալն մեռցի Ի նզովս. գլ. Ն՚ո՚ե՚ր՚ե՚ց՚. Ի մի գերեզմ: Իսկ եթէ յառաջ քան զեռանիլն առնիցէ իցէ զնչանս ապաշխարութէե, և չեցէ յիւրմէ կողմանէ չլինելն արձակեալ, պարտ է զնո՚ի մահուանն արձակել՝ առ ստանալոյ զնպաստս եկեղեցւոյ, և պարգևել նմա զեկեղեցական թաղումն զնո՚ի արձակմանն:

Ինութներորդ գործն է զրկումն յամ՝ քաղաքական հաղորդակցութէէ ընդ հաւատացելոյ՝ թէպէտ և հերետիկոսաց: Ա՚ստ՚ուածք Ի գլ. 2. Ի մի բացատ. գլ. Ն՚ո՚ե՚ր՚ե՚ց՚, և գլ. Ա՚ր՚ն՚ա՚ զբոմ. Ի մի վճռ. նզով. գլ. Ի՚ ա՚ե՚ղ՚ա՚ն՚. դատ 11. խ. 3: Ա՚ւ այս պատուհասոյ՝ ոչ հաղորդակցելոյ՝ է փոխադարձ. քան զի թէպէտ գլխաւորաբար և ուղղակի անկանի Ի մի նզովելոյն, զի մի մեղջէ Ի հաղորդակցուէ ընդ հաւատացելոյց, սակայն ը՚ն հնազանդի և անուղղակի անկանի ևս՝ Ի մի նոցին հաւատացելոյց, զի մի ընկալցին զՀաղորդակցուէն նզովելոյն: Ա՚յլ իմա՛ մի՝ հաւատացելոյ ընդ նզովելոյ ոչ ներելոյ, Ի կոնդակէն՝ Ի՚ ներչէց՚. մինչև կարող լինել նո՚ց՚ հաղորդակցիլ ընդ նզովելոյն ներելոյ. Ա՚յլ է այսպէս մի՛ նզովելոյն, որ թէպէտ և իւէ ներեալ, սակայն ոչ է կարող մեծանալ զանձն յրնկերութէի հաւատացելոյ, բայց եթէ ինդրեալ Ի հաւատացելոյ. վասն կոնդակն ոչ ջնջէ զնա՚ զնչանելոյ ընդ նզովելոյ ոչ ներելոյ. Ի

կարող ՚ի տոսա հաղորդակիցք ը հաւատացեալց, բայց եթէ խնդրեալ ՚ի նոցանէ։

Պատճառ. որ անբասիր առնէին զհաղորդակցութիւնն ընդ նզովելոց ոչ ներելոյ, և զնզովելոցն ընդ հաւատացելոց, են նորքն, որք ՚ի Կիրիգորէ եօթնեւորդէ՝ ՚ի գլ. Ռառնէ պէտս. դատ 11. ի. 3. փակին յայս ոտանաւորս.

Ովտար. օրհնէ, խոնարհութիւնն,
հոգի պահանջեալ, հառնիցիս նորին։

